



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

✓ 390

11 original I 02

1850

Ltn

390

11 original I 02

1850

Ltn
390

Gu

891.79-2

Сур-467

1999

7

ՀԱՅԿԱՆ ԵՐԱՐՈՒՄ



ՀԱՅԿԱՆ ԵՐԱՐՈՒՄ

ԳՐԱԾ

Գ



ԽԱՐԷՆ Կ. ԳՐԱԾՅԵԱՆ *տեղի Գրքարան*

Մեծագույն Գրքարանի Գրքարանի Գրքարան



ԲԵՐԿՈՒՄ

ԻՍԿՐԱՆԻ ԳՐԱՐԱՆ




0587

1544
1545
1546
1547
1548
1549
1550
1551
1552
1553
1554
1555
1556
1557
1558
1559
1560

28.393

4 390-60



Handwritten signature





Հ Ա Յ Զ Մ Մ Տ Մ Ն

Կ Ե Ը Թ Ժ Ի Լ Խ Կ Ը Թ Ժ Ի Լ Խ

Ն Ը Թ Ժ Ի Լ





ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԳ

ՀՐԱՄԱՅԵՅԱՔ ՏՊԱԳՐԵԼ,

եւ յետ տպագրութեանն առաջի առնել ուր հարկն է զսահմանեալ Թիւ
օրինակացն : Թ Էդդոսիա, Ի16 յունուարի 1861 :

ԳԱՆՐԻԵԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.

Ն Ե Ր Ա Յ Ո Ւ Ք Ի Ի Ն

« Quia sciebam dubiam fortunam esse scenicam,
« Spe incerta, certum mihi laborem sustuli. »

TER.



որահաստատ ազգային թէատրոնն թէոդոսիոյ՝ առաջարկեց մեզ այս Ողբերգութիւնը գրել, փափաքելով ազգային ողբերգութեամբ մի բանալիւր դռները: Նոյնպիսի հրաւերներ՝ յորդորանօք եւ քաջալերութեամբք հանդերձ՝ ընդունած էինք արդէն իբազմաց համազգի բարեսիրաց թէ՛ գրով եւ թէ՛ բերանով, իՊօլիս եւ իՓարիզ:

Եթէ մեր կարողութեանը նայելու լինէինք՝ հարկ էր հրաժարիլ այս պատուաւոր՝ բայց դժուարին առաջարկութիւնն ընդունելէն. սակայն ազգային ողբերգութենէ մի ծագած մեծամեծ օգուտներուն յոյսը՝ գոգցես մոռացոյց մեր տկարութիւնը, ու քաջալերեց ամենայն դժուարութեանց մերովսանն դիմակալելու:

Դժուարութեանց գլխաւորներէն մէկը մեզի համար լեզուն էր:

Առաջարկեալ նիւթոյն վսեմութեանն ու հնութեանը նայելով՝ յայտնի է որ բնական էր մեր նախնեաց վսեմ լեզուովը գրել զայն: Մեզի համար քաղցր էր այս, կարող եմք ասել թէ՛ եւ դիւրին, ու մեր անձնասիրութեանն եւս շահաւոր, — որովհետեւ վսեմ ու գեղեցիկ լեզուն ինքնին գեղեցկութիւն ու վսեմութիւն կուտայ քերթուածոյն, զոր անկարելի է անհարթ ու տկար լեզուէ մի սպասել. — բայց այն որ դիւրին էր մեզ ու շահաւոր՝ կհեռացուցանէր զմեզ իմեր նպատակէն, որ է՝ ազգային հին պատմութեան եղերական մէկ դրուագը մեր այժմու ժողովրդեան առջեւը հանդիսացուցանելով՝ վառել նորա սիրտը հին յիշատակաց հետ նաեւ հայրենեաց սէրը: Եւ ի՞նչպէս կարելի էր վառել ժողովրդեան սիրտը՝ երբ մեծագոյն մասին անհասկանալի լեզուով մի աւանդէինք զայն, ա՛յն մասին որ գուցէ աւելի՛ եւս կարօտ է հայրենեաց վերայ բան լսելու, հայրենեաց վերայ բան սովորելու ու հայրենեաց վսեմացուցիչ սիրովը վառուելու:

Այս հանգամանքներով հարկ էր ուրեմն ու աւելի բնական՝ որ նոր մարդիկներու համար նո՛ր լեզուով գրէինք մեր ողբերգութիւնը, գրեթէ ա՛յնպէս՝ ինչպէս եւրոպայի նոր ժողովրդեան մի դիմաց հանդիսանայ հին Յունաց, Հռովմայեցւոց կամ ուրիշ օտարազգեաց պատմութեան ողբերգական մէկ դրուագը, ոչ եթէ այն դիւցազանց՝ այլ լսողներո՛ւն լեզուովն ու ոճովը:

Բայց եթէ Շէքսպիր մի, Տրայտն մի, Քոռնէյլ մի, Ռասին մի, Շիլլեռ մի, Ալֆիէրի մի . . . իրենց ժողովրդեան խօսած լեզուովը կուտան այն հնոց եւ օտարաց պատմութեան եղերական անցքերը, Շէքսպիրի, Ռասինի, Շիլլեռի ու Ալֆիէրիի լեզուներուն ու Հայու նոր լեզուին մէջի անբա՛ւ զանազանութիւնն ու վիհը ո՞վ չտեսներ: Ո՞վ չգիտեր նոցա լեզուին կանոնաւորեալ, դիւրաւեք, քերթողական, միով բանիւ՝ մշակուած ու ամենայն ճոխութեամբ լցուած լինելը, ու մեր նոր լեզուին՝ անկանոն, անքերթող, անզարդ, աղքատ ու պէտք եղած մշակութենէ գրեթէ զո՛ւրկ լինելը:

Սխալեցանք՝ մեր *ևոր լեզուիև* ասելով, պէտք էր ասէինք *ևոր քարքանկերուև* (dialectes). վասն զի, — յուսահատակա՛ն մտածութիւն —, մեք դեռ *ևոր լեզու* չունի՛մք, հապա բազմաթիւ խառնիխուռն նոր բարբառներ՝ իրարմէ տարբեր, մանաւանդ թէ եւ իրարու արհամարհելի, եւ գրեթէ իրարու (կամաչե՛մք ասելու) նաեւ թշնամի՛:

Մեք որ այն անմահ ողբերգուաց ոչ հանճարն ունիմք եւ ոչ գրիչը, աւելի՛ եւս կարօտ էինք կանոնաւոր, կոկ, քաղցրահնչիւն քերթողական մէկ լեզուի, որ իւր զօրաւոր դարձուածներովը՝ մեր տկար գրչին կորով ազդէր, ու կերպ կերպ ու վառվրռուն բացատրութիւններ պատրաստ մեր առջեւը սփռէր յընտրութիւն, ինչպէս զարդարուն բուրաստան մի որ գոյնզգոյն ու քաղցրահոտ ծաղիկներ դիմացդ կընծայէ որ ընտրես առնուս եւ ուզած փունջդ ուզածիդ պէս կազմես:

Բայց մեզի՛ ամենեւին հակառակը պատահեցաւ: Որպէս թէ բաւական չէր ինքնին ողբերգութեան քերթողական անբաւ դժուարութիւնը, հարկ եղաւ որ միւս մեծ դժուարութեան մի հետ եւս մաքառիմք: Ուստի ոչ միայն ողբերգութեան նիւթին վերայ պիտի ամփոփուէր մեր աշխատութիւնը, այլ եւ հարկ էր աշխատիլ նորա լեզուին վերայ. որովհետեւ ողբերգութիւնն եւս իրեն համար լեզու մի ունի, ինչպէս որ ունի իրեն համար առանձին օրէնքներ ու պայմաններ:

Կարելի՞ էր Ողբերգութեան դիւցազանց բերանը դնել այն աղճատեալ, օտար եւ խորթ բառերով ու բացատրութեամբ լեցուն լեզուն՝ որ *nauflorke* անարգ անունը վերան կրկրէ:

Բարեբաղդաբար մեր հայրենի հին լեզուն կեցած է, առատ՝ մանաւանդ թէ անսպա՛ռ. հանք մը՝ ուսկից պէտք է մեր նոր լեզուն իրեն կանոն, հարստութիւն ու զարդարանք փրնտրուէ: Տղայն իւր մօրը կաթովը կսնանի. մեր նոր լեզուն այլ ուրիշ կերպով չէ կարող սնանիլ, աճիլ ու ինքնութիւն առնուլ: Այո՛, սովաւ միայն կարելի է մեր խօսակցութեան բարբառներէն հանել ձեւացուցանել մատենագրական լեզուն: Եւ մինչեւ որ մէջտեղը լեզու մի չլինի՝ մատենագիրք ալ չեն կարող ելանել, ուստի եւ մեր նոր մատենագրութիւնը կմնայ մի՛շտ տկար, մի՛շտ տարտամ ու մի՛շտ աղքատ:

Մեք այս Ողբերգութիւնը Պօլսական բարբառով գրեցինք, ինչպէս ուրիշ մեր ազգային նոր քերթուածները. բայց ոչ եթէ այսու արհամարհել կուզեմք ազգային միւս բարբառները, որոց առանձին յատկութիւնները կճանչնամք ու կպատուեմք: Եթէ նախադասելի բան մի ունի Պօլսահայ բարբառը, նորա դիւրընդել հլուութիւնն է՝ որով կխոնարհի բանիբուն մատենագրին իրեն տուած դարձուածոցն ու փոփոխութեանցը. եւ ա՛յս իսկ է նորա յառաջադիմութեան գաղտնիքը, որով վերջի քսան տարուանս մէջ նշանաւոր քայլափոխներ ըրած է, հետզհետէ մաքրուելով եւ մօտենալով մեր ամէն բարբառներուն եւս հասարակաց աղբիւրին, որ է Հայկազեան լեզուն:

Չեմք կրնար պահանջել որ մեր ամենայն քերթողքն եւ ողբերգուք սոյն բարբառով գրեն. բայց եւ չեմք կրնար մեր սրբտին մեծ փափաքը չյայտնել՝ որ վերջապէս ազգային մատենագիրք ջանան իբաց դնել իւրեանց նախապաշարմունքները, անձնասիրութեան թելադրութիւնները, անհիմն յամառութիւններն ու տղայական արհամարհութիւնները: Պէտք է, ո՛ր մատենագիրք, պէտք է ընդարձակեմք մեր աչքին հորիզոնը, ու միայն մեր գաւառներուն նեղ եւ անձուկ սահմաններուն մէջ չփակուիմք ջրմնամք: Պէտք է բարձրէն նայիմք այսպիսի խնդիրներուն մէջ. ռամկի՛ն թողումք ինքնահաճ ցած գաւառասիրութիւնը. մեք պէտք է մեր գաւառէն առաջ մեր Ազգը սիրեմք, նորա պատիւը, նորա օգուտն ու շահը փնտռեմք ու նախադասեմք, եւ ոչ եթէ մեր քաղաքին կամ գաւառին երազեալ պատիւը:

Իտալացին, Անգղիացին, Գերմանացին, Գաղղիացին, Ռուսը, ու մեզմէ շատ հեռու չեղող ազգ մը՝ Յոյնը, ամէնքն եւս մեզմէ ոչ ինչ պակաս բարբառներու ճիւղեր ունին, բայց մատենագրութիւնը բոլորին մէջէն ընտրած ու սեպհականած է մէկ բարբառ մի. այն եղած է նոցա ազգային լեզուն, ու բոլոր ուժը նորա վերայ թափած. որով եւ հետզհետէ կանոնաւորած են ու զարդարած, ամէն մտածութեան ամէն գաղափարի ճկելով ու յարմարեցուցանելով զայն: Ահա թուրինցին, Միլանցին, Վենետկեցին, Սիկիլիացին . . . Թէ եւ բերնով իրենց բարբառը խօսին, բայց գրչով՝ Թոսքանայի բարբառը կգրեն, եւս առաւել մատենագրական գրուածներն որ բոլոր ազգին համար են: Նոյնպէս եւ միւս կրթեալ ազգերը թէ եւ ամէնքն ալ համոզուած լինին որ իրենց իւրաքանչիւր տեղական բարբառը գուցէ շատ աւելի գեղեցկութիւններ ու պատուական հարստութիւններ ունի, բայց երբ գրելու լինին՝ ընտրուած ազգային մատենագրական լեզուին կհետեւին. վասն զի գիտէ եւ ամենայն ոք որ հասարակաց լեզուին պէտք է զոյել առանձնական մտածութիւններն ու տեղական անձնասիրութիւնները:

Ո՞չ նոյն կերպով կմտածէին նաեւ մեր նախնիքը. չունէի՞նք եւ նոքա բազմաթիւ բարբառներ, ինչպէս Արարատեան, Կորճայից, Տայոց, Խուլթեցւոց, Զորրորդ Հայոց, Սպերացւոց, Սիւնեաց, Արցախեցւոց, Ուտէացւոց, Պարսկահայոց . . . բայց մեր նախնիք ոչ եթէ այս բարբառներով կընէին իւրեանց մատենագրութիւնները, այլ ամէնքը միաբան՝ ո՞ր գաւառէ եւս լինէին՝ իրենց գաւառական անձնասիրութիւնը Արարատայ բարբառին զոյ կընէին, եւ այն կհամարուէր Ազգային լեզու Հայաստանեայց: Ասոր ապացոյց են ոչ միայն մեր Թարգմանիչներէն իվեր նախնեաց մեզի ձգած մատենագրութիւնները, հապա անոնցմէ այլ առաջ Ստրաբոնի յայտնի վկայութիւնը (*):

Ի՞նչ դժբաղդութիւն է Հայու նոր մատենագրինը: Թէ որ ազգին հին լեզուովը գրէ, շա՛տ քիչ հասկըցող ունի. նոր լեզուով մի գրէ, դարձեալ նոյնպէս մեծ տարբերութիւն չունենար: Միըտը լցուած է, կուզէ դուրս թափէ. բայց որո՞ւն. — իւր գաւառին քանի մի հազար ժողովրդեանը, որոյ մեծ մասն արդէն կարդա՛լ չգիտեր: Ուր ընդհակառակն եթէ լինէր ազգային

(*) Ստրաբ. Աշխարհագր. Գիրք ԺԱ.

Նոր լեզու մի՛ զոր թէ՛ Պօլսեցին, թէ թիֆլիզցին, թէ Երեւանցին, թէ Ագուլեցին, թէ Աժտէրխանցին . . . հասկընային ու գործածէին, ո՛րչափ աւելիսիրտը ճիւղով կգրէր, գիտելով որ իւր մէկ ոգեշունչ խօսքը՝ ելեքտրական կայծի պէս՝ երկարածիգ թելերուն վրայէն պիտի վազէ անցնի աշխարհէ աշխարհ, ուր որ իւր Հայ եղբարքը ցրուած են, ու ամենուն առհասարակ նոյն մտածմունքը ազդէ, նոյն եռանդը վառէ, նոյն ոգին բորբոքէ:

Ո՛հ, ամէնքս իսկ աշխարհիս ո՛ր կողմն եւս ընկած լինիմք, ամէնքս մէկ անուն մի ջունի՛մք, վսեմ անուն, — Հ Ա՛Յ — : Ինչո՞ւ ջունիմք նաեւ մէկ բարբառ, մէկ լեզու հասարակաց :

Լեզուին վերայ այսչափ միայն առ հարկի ու մեր սրտի ցաւէն խօսելէն՝ անցնիմք երկու խօսք այլ մեր բռնած տաղաչափութեան ոճին վերայ ընելու, որովհետեւ այս պիտի լինի մեր ընթացիցը ոճն ու եղանակը:

Բաւական ժամանակէ իվեր ազգային քնարը ձեռք առած, ու ախորժ կամ անախորժ՝ բայց միշտ սրտա՛նց նուագելնիս՝ եթէ մեզի հեղինակութիւն մ՛ալ չէ տուած, բայց տուած է բաւական փորձառութիւն տաղաչափական արուեստին մէջ:

Եթէ սորա վերայ աւելցնեմք նաեւ իմանկութենէ հետէ Եւրոպական հին ու նոր ազգաց լեզուաց եւ մատենագրութեանցը մէջ զտիւ եւ զգիշեր թարթափելնիս, կարծեմ քիչ շատ իրաւունք ցուցուցած լինիմք ասելու թէ այս մեր ընտրած ազգային մետասանոտնեան եռանդամ չափը՝ թատերական գրուածոց համար ամենէն յարմարը կերելի մեզ, թէ՛ ներդաշնակութեանը համար եւ թէ չափաւոր երկայնութիւն մի ունենալուն. որով եւ ամենայն իմաստի, թէ՛ գողտր լինի եւ թէ խիստ, թէ՛ ծանր եւ թէ եռանդուն, կարող է յարմարիլ դիւրութեամբ:

Բայց որովհետեւ միակերպութիւնը ձանձրութիւն կրնայ բերել, ասկէ զատ նաեւ կապ մի՛ զոր յանձն չա՛ռնուր կրից լեզուն, լաւ համարեցանք որ եռանդամն ու մետասանաւանկը պահելովն հանդերձ՝ ազատ թողումք զողբերգուն որ իւր անձանց խօսակցութեանցն իմաստին համեմատ՝ եռավանկ անդամը փոփոխէ, առաջին կամ երրորդ անդամ զայն ընելով, ու միջին անդամը միայն պահէ անխախտ անփոփոխ, միշտ քառավանկ: Հարկաւ այս փոփոխութիւնը ճարտարութեամբ պիտի լինի՝ որ ընթերցողին ոտնառութիւն՝ ու լսողին անախորժութիւն չպատճառէ:

Մեր լեզուին մէջ կան չորսէն աւելի վանկ ունեցող բարդ բառեր՝ որ ողբերգութեանց մէջ կրնան շատ հարկաւոր լինել, զոր օրինակ *Բարեկամութիւն, Հաւատարմութիւն, Առաքիւնութիւն . . .* կամ քառավանկ բառերուն ոմանց հոլովները, ինչպէս *Խորեշտիւն, յողորմութիւն . . .* նոյնպէս նաեւ բայերուն մէջ: Նախնիք երբեմն երբեմն գործածեր են այսպիսի բառեր, պէտք եղած տեղէն կտրելով շեշտիւ: Ինչո՞ւ մեք այլ նոյն ազատութիւնը՝ հարկը պահանջելուն չքանեցունեմք. ինչո՞ւ այն պատուական բառերը բոլորովին դուրս ձգուին Թատրերգութեան ու դիւցազներգութեան սահմաններէն: Միթէ հարտար տաղաչափն ո՞չ գիտէ որ խնայութեամբ ու արուեստիւ պիտի գործածէ այս ու ասոր նման ազատութիւնները՝ որ մատենագրին ախորժակը, վարպետութիւնն ու հմտութիւնը կցուցանեն ու փառքը կաւելցունեն, ինչպէս լաւ ասէ Փոփ:

Այս կերպով մեր մետասանավանկը զարմանալի ճկունութիւն ու ներդաշնակութիւն կստանայ, ու գրեթէ ճիշդ կհամապատասխանէ Եւրոպացոց Թատերական չափերուն: — Գիտեմք որ քաջ տաղաչափ մի մեզմէ յառաջ Թատերախաղից համար տարբեր չափ մի առաջարկեց՝ նախնեաց քառանդամը: Մեք եւս երբեմն նորա խորհրդով՝ նոյն չափով քանի մի Եւրոպական անուանի Թատերախաղ Թարգմանեցինք փորձոյ համար, ինչպէս Ալֆիէրիի ՍԱՌՈՒՂը, Ռասինի ԳՈԹՈՂԻՍն, Քոռնէյլի ՊՈՂԻԿՏՈՍը, Վոլթէրի ԶԱՅԻՐէն, Առնոլտի ՄԱՐԻՈՍը, Շէքսպիրի ԿԵՍԱՐը, ու Շիլլէրի ՍԹՈՒՍՐԹը: Բայց նոյն իսկ փորձը՝ որ Փինեօթթիյին ըսածին պէս՝ ապահովագոյն ու վեհագոյն դատաւորն է իխնդիրս դպրութեան, փորձը ցուցուց մեզ որ յարմարագոյն չափ մի փնտռելու էր, գոնէ ինքնագիր հեղինակութեանց ու մանաւանդ նոր հայերէնով գրուած Թատերախաղից համար: Նւ ահա եռանդամ մետասանավանկ չափը:

Յանգի գործածութիւնը՝ Թատերախաղից համար՝ եւ մեզ աւելորդ կապ մի երեւեցաւ, որ շատ տեղ կրնայ ջլատել խօսակցութեան ոյժը, եւ երբեմն նաեւ անհարկաւոր կամ անքնական բառ մի եւս սպրդել տալ իներքս իխաղին: Քոռնէյլի ու Ռասինի ողբերգութիւններն անգամ ազատ չեն այս գրեթէ անխորշելի պակասութենէն: Արդէն Իտալացիք եւ Անգղիացիք չեն գործածեր զյանգս՝ Versi sciolti ու Blank ըսուած չափերուն մէջ՝ որով կգրեն ընդհանրապէս Թատրերգութիւններն ու դիւցազներգու-

Թիւնները: Նոյնպէս նաեւ Գերմանացին եւ Ռուսը, Թող Հելլէնն ու Հռոմայեցին՝ որոց արդէն ամենեւին ծանօթ չէր յանգի կապը: Յայտնի է որ մեր հին շարականներն ու տաղերը առանց յանգի են գրուած: Բայց եթէ կամենայ ոք Գաղղիացւոց պէս յանգով վարուիլ իթատերախաղս՝ նորա եւս ազատ է ասպարէզ:

Կմնայ խնդիր՝ թէ արդեօք չէ՞ կարելի ողբերգութիւնը արծակ գրել: Ինչպէս կլսեմք՝ յաջողք ու բանիբունք ոմանք արդէն փորձեր են զայդ ու շատ գովութեամբ յաջողեր են, թէ եւ մեք՝ նոցա անտիպ գրուածները կարդալու պատեհն ունեցած չեմք: Տարակոյս չկայ որ ողբերգութիւն մի՛ ուր բոլոր իւր սեպհական օրէնքները պահուած լինին, ուր բանաստեղծական լեզու, հանճար, կրակ, գիւտ ու երեւակայութիւն մրցին իրարու հետ, կարող է արծակ գրուած լինելովն իսկ միշտ գեղեցիկ ողբերգութիւն մի լինել. բայց այս եւս կարելի չէ ժխտել՝ որ այն ողբերգութիւնը շատ աւելի գեղեցկութիւն ու վսեմութիւն կառնոյր՝ եթէ տաղաչափութիւնն այլ իւր մոգիչ քաղցրութիւնն ու ազդու կորովն իվերայ յաւելոյր: Շա՛թոպրիան, գրեթէ առաջինն իԳաղղիացիս՝ որ արծակ լեզուն բանաստեղծութեան բարձրացոյց զարմանալի ճարտարութեամբ, Շա՛թոպրիան կխոստովանէր անպատրուակ որ «Քսան «գեղեցիկ տաղաչափեալ տողեր՝ միշտ անհամեմատ աւելի վեր «են քան թէ բոլոր աշխարհիս ամենէն գեղեցիկ արծակ գր-«րուածքը» (*): Ասոր համար է որ իսկզբանէ հետէ ամէն ազգք իրենց ողբերգութիւնները ոտանաւոր կգրեն, ու միշտ աւելի բարձր ոճ եւ լեզու կբանեցունեն դիւցազանց բերանը դրուած խօսքերուն մէջ՝ առանց հեռանալու բնականէն:

Կարելի էր մեր առաջիկայ ողբերգութեանը վերայ տեսութիւն մի եւս ընել. բայց մեք բաւական համարիմք միայն ասել՝ որ Պատմական մասին մէջ առաջնորդ առած եմք Բուզանդայ աւանդութիւնը, որում համաձայնի եւ Պրոկոպիոս: Պատմական ճշմարտութիւնը ըստ կարելոյն պահելը՝ ողբերգութիւն պարտքն է:

(*) «Vingt beaux vers seront toujours incomparablement audessus de la plus belle prose du monde.» (CHATEAUBRIAND.)

Ըստ կարեւորյն ասեմք, որովհետեւ ազատ է քերթողը պատմութեան պարագաներն երբեմն թեթեւ մի փոփոխել. բաւական է որ ճշմարտանման լինին իւր մուծեալ փոփոխութիւնները, ու ծառայեն ողբերգութիւնն աւելի սրտաշարժ կամ ահաւոր ընծայելու: — Ներածութեանս ետեւը դրինք եւ զպատմութիւնն Բուզանդայ, որպէս զի մատենադատք (critiques)՝ մեր պակասութիւնները Պատմագրին չտան: Մեր անկեղծութիւնը՝ յուսամք որ նոցա ներողամտութեանն արժանի լինի:

Իսկ Քերթողական մասին մէջ ամենեւին մէկ ողբերգութիւն հետեւութիւն ըրած չեմք, եւ ոչ իսկ մէկ տողի կամաւոր նրմանողութիւն մի ունիմք, փափագելով որ ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴը բոլորովին հայկական մտքի մի ճնունդը լինի, թէ՛ նիւթովն եւ թէ՛ ոգևովը ազգային:

Այս մեր փափաքանացը, ջանիցն ու տքնութեանց ուրիշ վարձ չեմք սպասեր՝ բայց եթէ այն քաղցր համակրութիւնը՝ զոր սիրելի Ազգայինքս ցուցուցեր են եւ ցուցանեն մեր ուրիշ քերթողական երկասիրութեանցը, մեր կարողութենէն աւելի՛ պատուելով անշուշտ մեր անձնանուէր քրտունքն ու հայրենասէր դիտաւորութիւնը:

ԽՈՐԷՆ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

Իթէողոսիա, 10 յունուարի 1861:



Ն Ի Ի Թ

Ա Ռ Ա Ջ Ի Կ Ա Յ Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ի Թ Ե Ա Ն Ս

Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին եւս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց, յերկրին իշխանութեան Թագաւորութեանն Պարսից իկողմանս Խոճաստանի՝ յԱնդմըշն բերդին, այսինքն որ անունն *Ահյուշ* բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակունին Թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բաղիս քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապուհու, Թագաւորին Պարսից: Եւ Շապուհի Թագաւորն զամենայն զօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, եւ զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրեւծի գումարեալ խաղացոյց ընդ ինքեան. եւ զներքինին անգամ Թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին:

„ Եւ էր ներքինի մի Հայոց Թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան եւ մեծի պատուի, եւ անունն Դրաստամատն: Իսկ իբրեւ եղեւ պատերազմ ընդ Թագաւորին Քուշանաց եւ ընդ Թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց, եւ զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, եւ զբազումս ձերբակալ արարին, եւ զկէս փախստականս հալածական առնէին: Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ Թագաւորին Հայոց եւ Արշակայ որդւոյ նորա Թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին եւ հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, եւ ամենայն բերդացն արքունի որ իկողմանս յայնս սոյնպէս եւ յերկրին Ծովաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, եւ բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն: Եւ քանզի այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց, գործ լեալ էր իբնէ ժամանակաց ի Թագաւորութեան Արշակունւոյ, եւ զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց:

„ Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհի արքայն Պարսից: Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն. այնչափ կռուաւ եւս ի վերայ Շապուհոյ արքայի եւ ապրեցոյց զնա ի մահուանէ. եւ բազումս ի Քուշանաց անտի կոտորեաց, եւ զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ: Եւ զՇապուհի Թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին Թշնամեաց անտի, ուր արգելին զնա իխուռն պատերազմին ի զօրաց անտի: Իսկ իբրեւ եղեւ յորժամ դարձաւ Շապուհի Թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, եւ մեծ շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն, եւ ասէր ցնա Շապուհի Թագաւորն Պարսից. « Խնդրեա՛ դու ինչ յինէն. զինչ եւ խնդրեսցես, տաց քեզ եւ ոչ արգելից »: Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. « Ինձ իքէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զքնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց: Եւ առ մի օր, երբեւ ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա իկա-

պանացն, եւ ես իշխեցից լուանալ զգլուխ նորա եւ օծանել, եւ ագուցանել նմա պատմութեան, եւ արկանել նմա բազմականս, եւ դնել առաջի նորա խորտիկս, եւ տալ նմա գինի եւ ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ճիշդ»: Եւ ասէ Թագաւորն Շապուհ. « Խիստ են խնդրուածքդ զոր խնդրեցերդ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ Թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, եւ բերդն այն Անյուշ կոչեալ է, ջիք ոք մարդ եղեալ իմարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել Թագաւորաց, յիշելով զոր յայնմ բերդի եղեալ զոք է Թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, Թող Թէ զնա զայր Թագաւոր եւ զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն, որ այնքան ինչ աշխատ արար զմեզ. եւ դու աւադիկ զանձն իմահ եղեր եւ յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք Թագաւորութեանս Արեաց իսկըզբանէ: Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ՝ տուեալ լիցի քեզ՝. բայց քեզ արժան էր զօգուտ անձինդ խնդրել, կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս: Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Արեաց Թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց »:

„ Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. եւ հրովարտակ արքունի մատանեան, զի գնացեալ երթիցէ նա իբերդն յԱնդմըշն, եւ զիարդ եւ կամք իցէ նորա, զոր օրինակ եւ խնդրեացն՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ Թագաւորեալն էր ի Հայս: Եւ չոքաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանան եւ հրովարտական արքունի յԱնյուշ բերդն, եւ ետես զտէրն բնակ. եւ արձակեաց զԱրշակ իկապանացն երկամեաց իձեռակապացն եւ յոտիցն երկամոց եւ յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. եւ լուաց զգլուխ նորա, եւ լոգացոյց զանձն նորա: Եւ ագոյց նմա պատմութեան ազնիւ. եւ էարկ նմա բազմականս, եւ բազմեցոյց զնա. եւ եդ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց Թագաւորաց, եւ եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր Թագաւորացն, ըստ Թափեաց զնա, եւ մխիթարեաց, եւ ուրախ առնէր զնա գուսանօք:

„ Եւ իժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր եւ վարունգ եւ ամիճ, զի կերիցէ. եւ եդին դանակ նմա, որպէս զի հատցէ եւ կերիցէ զիարդ եւ կամեսցի: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, եւ մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, եւ գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ եւ ասէ. « Վայ ինձ Արշակայ. այսպէս եւ այս, եւ յայսմ ջափու եւ այս անցք անցին ընդ իս »: Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր իձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար իսրտի իւրում. եւ անդէն սատակեցաւ, եւ մեռաւ անդէն ինմին ժամուն մինչդեռ կայր իբազմականին: Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն, յարձակեցաւ եհան ինմանէ զնոյն դանակ, եւ եհար յիւրում կշտին. եւ անդէն մեռաւ եւ նա ինմին ժամուն յայնմ: “

ԲՈՒԶԱՆԴ, Դպրութիւն Ե, Գլ. Է-



ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ,

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ.

Հայեր, արցունք մի Թափեցէք յարքայն ձեր :



Գ Ե Ր Ա Ս Ա Ն Ք

- Ա.ՐՇԱԿ, արքայ Հայոց.
ՇԱՊՈՒՀ, արքայ Պարսից.
ԴՐԱՍՏԱՄԱՏ, մեծ իշխան Հայոց.
ՎԱՀԱՆ Մամիկոնեան.
ՈՐՄՋԴԱՆ, հաղարապետ Պարսից.
Ա.ԼԱՆՈՋԱՆ, մեծ իշխան Պարսից.
ՍՈՒՐԷՆ, իշխան Անյուշ բերդին.
ՄԻՀՐԱՆ, որդի Սուրենայ.
ԶԱՐԵՀ }
ՏԱՃԱՏ } Հայ նախարարք յԱնյուշ բերդին.
ԳԱՐԵԳԻՆ }
ԽՈՍՐՈՎ }
ԲԱԲԳԷՆ, զինակիր Վահանայ.
Զօրավարք Շապուգ.
Զօրականք Պարսից.

Առաջին Արարուածը, Քուշանաց երկիրը: Իսկ Բ, Գ, Դ եւ Ե.
Արարուածները՝ Անյուշ քերդին մեջ իԽուժասան:






Տեսարանին մեկ մասը ներկայացուցանե ծառուս ասփարակ մի, հեռուանց կերեւիս գիւնուրական վրաններ, զհններ, դրոշներ, մեռեալ գիւնուրաց դիակներ, ընդարձակ դաշտի մը մեջ գոր կայսեան շեններ :

ՏԵՍԻՎ Ա.

Վ Ա Հ Ա Ն վիրաւորուած, Բ Ա Բ Գ Է Ն .

Վ Ա Հ Ա Ն .



յս ծառին տակ թող որ հանգչիմ սակաւիկ-
 Հոս չեն հասնիր թշնամեաց սուրն ունետեր.
 Թող այս սօսին շուքն իմ վերայ տարածէ ⁽¹⁾ :

Այս խաղանդ տեղէս իբրեւ սուրբ տաճարէ
 Թըռչի հոգիս յԱստուած եւ յիմ հայրենիս .

ՅԱստուած՝ որ զիս նաւահանգիստ կրկանչէ,
 Ի հայրենիս իմ զոր ահա կըթողնամ,
 Չունելով յոյս մէյմըն ալ զայն տեսնելու :

(1) Ծառին բունին վերայ կնստի ու վահանին կյենու :

ԱՐՇԱԿ Բ.

Բ Ա Բ Գ Է Ն .

Տէր իմ վահան, մի այդ տըխուր խօսքերով
 Մ'ընկճեր զողիդ, եւ մի սըրտիս կըտրեր յոյս .
 Վէրքըդ խորունկ չէ, դեռ կըրնայ բըժըշկիլ :
 Այդ քաջութեան վէրքիդ՝ զոր լանջդ ընկալար՝
 Մէկ հարուածի տալով հազար փոխարէն,
 Արժանի ես, ո՛վ տէր, որ վարձն այլ առնուս :

Վ Ա Հ Ա Ն .

Վարձ, եւ ուստի, Բարգէն, ուստի ընդունիմ,
 Հայոց անհաշտ եւ Արշակայ ոսոխէն .
 Հայուն թափած տաք արեամբ սիրտն իւր պաղի .
 Ահա Շապուհայ զոհ դըրի կեանքս ու կերթամ,
 Բայց երբ լըսէ նա Հայ ըսպայ մի մեռաւ՝
 Քաջ վասակին եղբայր՝ պիտի ծանօղարնէ :
 Յամէն մէկ Հայ քաջ բազուկի ջախջախիլ՝
 Գիտէ որ խեղճ Հայաստանէն կըպակսի
 Սասանեանց ծանրը լուծ կոտորող ոյժ մըն այլ .
 Ոչ. Շապուհէն վարձքի փափագ ես չունիմ :
 Հայրենիքէս ուրեմն յուսամ ինձի վարձ .
 Բայց ինչ օգուտ նորա բերի այս վէրքով :
 ԶԱրշակայ յուսամ ժըպլիտ իւր սեւ բանտէն .
 Բայց այս արիւն տիրոջս համար կըվազէ .
 Ո՞չ ապաքէն տեառն եւ ազգիս ոսոխին :

Բ Ա Բ Գ Է Ն .

Մի այդպէս, քաջ, ո՛չ Շապուհ ինքն էր այսօր
 Որ մահաշունչ պատերազմէս յուսահատ՝
 Յառաջ կանչեց ու մեզ ասաց երգուելով .

« Հայեր, թէ որ զազատութիւն ձեր կուզէք՝
« Իմ թըշնամեացրս Բուշանաց յաղթեցէք » :

Վ Ա Հ Ա Ն .

Եւ ահա՛ արդ յաղթեցինք իւր թըշնամեաց .
Գիտես նա ինչ շահեցաւ այս յաղթութեամբ .
Հայաստանի զիսպառըսպնու գերութիւն .
Այսօր Շապուհ Բուշաններէն կազատի ,
Ու անարգել պիտի վաղուան օր վազէ
Որ ոտքին տակ առնու բոլոր Հայաստան ,
Ու հայրենեացս ազատութեան նըշոյլն ալ
Հասնի մարէ , ու զբաղդ Հայոց խաւարէ :
Ո՛վ Տէր , եւ մէք , մէք Հայքս ինքնին եմք այսօր
Որ Պարսիկն՝ յաղթող ըրինք իմեր կորսւտ . . .

(Դրսէն կլտուի շեփորի ձայն զինուորական ,
„Յաղթութիւն . . . Յաղթութիւն“ աղաղակաւ .)

Վ Ա Հ Ա Ն .

Յաղթութիւն . . . ծանօթ , ծանօթ է մեզ այս ձայն .
Իւր ամէն պատերազմաց յերջանալուն
Մամիկոնեանն ուրիշ մէկ ձայն չըլլսեր՝
Բայց եթէ ըզփառաւոր ձայն Յաղթութեան :

(Գարձեալ դրսէն „Յաղթութիւն , Յաղթութիւն“ .)

Բ Ա Բ Գ Է Ն .

Բայց թող գիտնան , տէր իմ , որ այս յաղթութիւն
Գին է արեան Մամիկոնեան Վահանայ ,
Այս շեփորից բարբառ հասնի Հայաստան
Ու աւետիս տայ իւր որդւոց քաջութեան :

ԱՐՇԱԿ Բ.

Վ. Ա. Հ. Ա. Ն.

Մի զայդ մի գոյժ տայք առ մայր մեր Հայաստան,
 Թէ այն արիւն զոր ինք տըլաւ իւր որդւոց՝
 Նոքա իսիառս իւր թըշնամւոյն թափեցին .
 Ո՛հ, անէծք, անէ՛ծք օրուանս այս յաղթութեան՝
 Որ իվերայ դիականց Հայ քաջերու
 Շապհոյ խարխուլ գահն ամբարձեալ հաստատեց .
 Անէծք եւ իմ այս քաջութեան՝ որոյ վարձ
 Արդար երկին, յօտար երկիր կուտաս մա՛հ :

Բ. Ա. Բ. Գ. Է. Ն.

Բայց քաջութիւնդ Հայաստանի փառք մը չէ .
 Ո՞չ ապաքէն պիտի պանծան հայրենիք
 Որ իւր որդիքն են որ այսօր ըզՇապուհ
 Յանփախուստ կորըստենէ ազատեցին :

Վ. Ա. Հ. Ա. Ն.

Բա՛բէ, ինչ գեղեցիկ փառք Հայաստանի՝
 Որ այնպիսի խորթ զաւակներ ծընանի
 Որ փոխանակ մօրն արցունքներ սըրբելու,
 Ու ձեռք տալու որ դողդոջուն չիյնայ մայր,
 Ձեռք թըշնամւոյն տան որ ըզնա գըլորէ :
 Վայ եղո՛ւկ յաղթանակին՝ յոր հայրենիք
 Ժրպտելու տեղ կըհանէ խոր հառաչանք,
 Եւ իհեծել իւր թըշնամին ծիծաղի,
 Խրոխտալով այն բարձրութենէն՝ յոր ելաւ
 Օտարասէր ձեռօք Հայկայ զաւակին :
 Ձէ՛. հայրենեաց չիք օրհնութիւն այն որդւոց
 Որ հայրենեաց կըծառայեն թըշնամւոյն,
 Եւ ըզկեանս՝ յօգուտ ծախեն բըռնաւորաց :

Բ Ա Ւ Բ Գ Է Ն .

Բայց քո շունչ՝ Հայաստանի համար էր, տէր.
 Յամէն վրտանգ՝ նորա համար դիմագրաւ,
 նորա սիրոյն զազատութիւն ձօնեցեր . . .
 Կըրնայ քան զայս կեանք մի լինել փառաւոր:

Վ Ա Հ Ա Ն .

Վահ փառաւոր կեանքիս այս ինչ տըխուր վերջ . . .
 երբ Վասակայ՝ անպարտելի եղբօրս հետ՝
 Իթըշնամեաց աւար լըցուած գըրկերնիս,
 եւ ձեռուրներ յարիւն Պարսից թաթաւեալ,
 եւ յաղթութեամբ պըսակաւոր ճակատնիս,
 ծոլուն աչքով կըդառնայինք Հայաստան,
 Ո՞վ կարծէր՝ թէ մահաստուեր օր մի կուգայ
 Որ այնքան փառաց յանկարծ ձըգէ խաւար.
 Ո՞վ կարծէր ո՞վ՝ թէ յաղթութեանց իմ պըսակք
 Օ՞ր պիտի գայ որ ճակատու ծանրանան.
 եւ թէ եղբարքն այն հարազատ՝ որոց կեանք
 Այնչափ նըման էր քաջութեամբ եւ փառօք,
 Այսքան տարբեր ունենան վերջ իրարմէ.
 Վասակ լինի վերջապէս զոհ հայրենեաց,
 եւ Վահան՝ դահճի եղբօրն եւ ազգի զոհ . . .
 Ահ, Հայաստան, ինչո՞ւ վըրադ չըմեռայ . . . (*)

Բ Ա Ւ Բ Գ Է Ն .

Մի՛ տէր մի՛, մահուան խօսքեր մի՛ յաճախեր.
 Ապրէ. կենանցըդ պէտք ունի Հայաստան.

(*) Կամաց կամաց կնուաղի Բարգենին խօսելու ժամանակ, տըրտմութենէն, յօգնութենէն ու արեանը վազելէն:

Հայաստան՝ այրիացած իւր քաջերէն,
 Ուստի յուսայ այսուհետեւ փրկութիւն.
 Արշակ՝ յԱնյուշ բերդին թաղուած կենդանի,
 Ու Փառանձեմ՝ արիասիրտ մեր տիկին
 Փակեալ անյոյս անօգնական յԱրտագերս.
 Վասակ՝ պատուարն Հայոց անկեալ անյարիր.
 Ո՞վ պիտի ո՞վ խեղճ Հայրենիքն ազատէ
 — Բայց լրուես . . . քաջըդ վահան, ինձ ոչ լրսես . . .
 Ո՞վ Տէր, սրբտի՛ն վերջէն արի՛ւն կրվազէ . . .
 Աչուրներուն վերայ մահուան պատէ մէզ . . .
 Ի՞նչ եմ կեցեր . . վաղեմ իջուր առուակին,
 Բերեմ ցօղեմ, գուցէ անցնի թալկութիւն . . .
 Հրեշտակդ Հայոց, հըսկէ տիրոջն իմ վերայ: (կերթայ)

Զ Օ Ր Ա Վ Ա Ն Ք (դրսէն)

Յաղթութիւն . . . կեցցէ արքայ Շապուհ, կեցցէ:

ՏԵՍԻԼ Բ.

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ (1), Վ Ա Հ Ա Ն (ընկողմանեալ).

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Պատերազմն ահաւաղիկ կատարեցաւ.
 Սուրն իպատեան դարձաւ, լրուեն ձայնք զինուց.
 Եւ դաշտ բըլուր խայտան իձայն յաղթութեան.
 Ամէնքն ուրախ, եւ անըզգայ է այս սիրտ,

(1) Դրաստամատ ներս մտնելու ժամանակ շիտակ դեպ իհանդիսա-
 տեսքը գալու է, մտայոյզ, առանց վահանայ վերայ նայելու՝ որ
 միւս կողմն ընկողմանած կլինի ու ծառով մի ծածկուած:

Այս սիրտ որ պէտք էր գոլ ուրախ քան զամէն,
 Որ զի փըրկիչ եղեւ բոլոր բանակին,
 Ու յաղթութիւնն յափըշտակեց քաջութեամբ.
 Յաղթական փառքն այսօր սըրտիս ոչ խօսի,
 Իբրու թէ այլ ոք էր յաղթող Քուշանաց:
 Ո՛րչափ տարբեր է այս այժմուն ըզգացուած
 Իսըրտաթունդ բաբախմանէ այն աւուրց
 Յոր հայրենեաց համար ու բնիկ արքայիս
 Պատերազմած՝ ընդ թըշնամիս գունդագունդ
 Եւ զյաղթութիւն լրծեալ իկառս իմ գերի
 ԻՀայաստան զըլարթաճեմ բերէի:

ԶՕՐԱԿԱՆՔ (դրսէն)

Յաղթութիւն, կեցցէ արին Դրաստամատ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Ահա «կեցցէ» գոչէ բանակն ինձ համար.
 Բայց ո՛չ եթէ իմ Հայ եղբորց է այդ ձայն.
 Եւ այս բըլուրք որ տան անուանս արձագանգ՝
 Ո՛հ ծաղկազարդ իմ հայրենեաց բըլուրք չէն:
 —Տէր, որոյ ձեռքն է յաղթութիւն, կեանք եւ մահ,
 Ինչո՞ւ չըրիր՝ որ զերդ այս օր ըզճապուհ՝
 Եւ զիմ բընիկն ազատէի թագաւոր . . .
 Ո՛վ, թէ բազուկ զայս կամեցար գործածել
 Իփըրկութիւն թշնամույ իմ հայրենեաց,
 Տո՛ւր գոնէ, տո՛ւր որ յաղթութեանըս փառքէն
 Ծագի նըշոյլ իհայրենեաց իմ խաւար.
 Գէթ զայս ինձ, Տէր, մի զըլանար ըսփոփանք:
 — Այո՛, ամէն ուրախութիւն ինձ սո՛ւգ է
 Յորչափ դու սուգ ես Հայաստան, Հայաստան:

ԱՐՇԱԿ Բ.

Վ Ա Հ Ա Ն .

Ո՞վ է այն . . . որ տայ զանունն . . . Հայաստանի . . . ⁽¹⁾
 Այդ քաղցր անունն . . . գերեզմանի դրուներէն . . .
 Կենաց ձայն . . . ինձի կուտայ . . . ո՞ւր եմք Բաբգէն :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ձայն մը լրսեմ . . . ծանօթ թըլի ինձ այս ձայն . . .
 Դու հոս ես , ⁽²⁾ Մամիկոնեան քաջըդ վահան . . .
 Դու յայս ողորմ ընկած սլայման . . . ո՞հ , եղո՛ւկ . . .

Վ Ա Հ Ա Ն .

Մի Դրաստամատ , մի՛ աւաղեր ըզվահան .
 Այսուհետեւ թըշուառ Հայու մը համար
 Ի՞նչ բաղձալի կայ մահուրնէն աւելի .
 Ո՞չ ապաքէն միայն մահուան ձեռք գըթած
 Հայկայ որդւոյն կըրնայ քակել շըղթաներ . . .
 Օրհնեա՛լ է Տէր , որ չըփակած գէթ աչքերո՛
 Յետին անգամ մ՛ալ քեզ տեսնեմ , բարեկամ ,
 Ու սիրելեաց իմոց քեզմով տամ ողջոյն :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Քաջի մը մահ՝ անմահութիւն է , վահան ,
 եւ դու առ այն ահա սլանաս ոգեթեւ .
 Այլ բարեկամք քո մեք ինչպէս ոչ ողբամք
 Որ կորուսաք քեզ իծաղիկ հասակիդ :
 Ո՞րչափ սիրո՛ւն յոյսեր կենացըդ քո հետ
 Կըհընձըլին այսօր իդաշտ հայրենեաց :

(1) Արքննալով մը պիտի ատէ այս խօսքերը :

(2) Տեսանելով գ՛լահան՝ քովը կվագէ :

Վ Ա Հ Ա Ն.

Դրաստամատ, դու հայրենեաց մընաս՝ շատ է: —
Պատերազմին վերջն ասն ինչպէս եղաւ.

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Ազատեցի Շապուհն անշուշտ մահուանէ.
Մէկ հարուածով տապալեցի նորա ոտք
Ըզիուշանաց քաջ թագաւոր:

Վ Ա Հ Ա Ն.

Ի՛նչ մեծ փառք:

Գոնէ առ քեզ պահէր Շապուհ իւր խոստմունք,
Ու քաջութեանցդ երկուց տայր վարձ արժանի:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Վարձ ինձ պէտ չէ, թող հայրենեաց իմ գըթա.
Ազատութի՛ւն մեզ խոստացաւ թէ յաղթեմք.
Բայց ի՛նչ, կըրնամ ազատութեամբ իմ խընդալ՝
Երբ շըղթայից տակ հեծեծէ Հայաստան . . .
Ո՛չ, պէտ չէ վարձ, թող ես մընամ իշըղթայս,
Ու հայրենիք կամ թագաւորս ազատի:

Վ Ա Հ Ա Ն.

Կեցցես իմ քաջ . . . ո՛վ մեծափառ դու որդի
Հայաստանի գուպարայաղթ դիւցազանց.
Ահա երթամ ես աւետել առ նոսա
Թէ Հայաստան ունին ժառանգ արժանի:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Եւ դո՛ւ, Վահան, այն դիւցազանց մէկն էիր:

Ո՞վ յայտմհետէ ըզՄամիկոն քաջաց սուր
Շողացընէ յահ եւ կորուստ թըշնամեաց:

Վ. Ա. Հ. Ա. Ն.

Դո՛ւ Դրաստամատ: — Ա՛ռ բարեկամ, ա՛ռ այս սուր՝
Զոր մեծ Տըրդատ մեր նախահօր տըլաւ ձեռք,
Եւ երկնային Գրիգոր կընքեց զայդ Խաչով.
Օճանելիք սորա՛ արի՛ւն թըշնամեաց.
Ա՛ռ եւ դու, այսուհետեւ զա՛րկ ըզնոսա. (1)

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Սիրով ընծայն քո ընդունիմ՝ սըրբազան.
Երդուեա՛լ (2) որ քաջ Մամիկոնեանց ըստուերներ
Ուրախ ընեմ՝ սորա ահեղ հարուածովք:

Վ. Ա. Հ. Ա. Ն.

Յետին խընդիւրք մ՛ալ, ու ես դո՛հ մեռանիմ:
Քո քաջութիւնդ ու հայրենեաց վըսեմ սէր,
Ո՞վ Դրաստամատ, պիտի երկինք պըսակեն.
Դու ցանկալին պիտի տեսնես Հայաստան.
Ըզդոյն եւ ես կիսահազանգ քեզ մաղթեմ
Երբ հայրենեաց դըռներէն ներս կըմըտնես,
Ամպածըրար դու մեր ազատ լեռներուն
Եւ երկնաճեմ կաթողիկեայց տաս ողջոյն,
Յիշէ՛, յիշէ՛ եւ զՄամիկո՛նըն վահան,
Ու վերջին մ՛ալ հընչէ՛ անունս Ս.րարատ:

(1) Սուրբ կուտայ Դրաստամատայ ձեռքը:
(2) Սուրբ երկինք վերացուցանելով:

ԱՐԱՐՈՒԱԾ Ա, ՏԵՍԻԼ Գ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Աւանդ . . .

ՎԱՀԱՆ.

Եւ երբ՝ սեւեր հագած սըգաւոր
 Հրեշտակադէմ՝ ծաղկափայլ կին մի տեսնես՝
 Որ կապուտակ աչքէն արցունք թափելով,
 Կիսահառնայ մընչէ զանուն Վահանայ . . .
 Ո՛վ բարեկամ, նա իմ սլարկեշտն է Շուշան . . .
 Սըրբէ՛ նորա, սըրբէ կապո՛յտ աչուրներ . . .
 Տուր մատանիս՝ անլոյծ սիրո՛յն մեր նըշան. ⁽¹⁾
 Ա.ս. «Վահան՝ սըրտին վերջի բաբախման՝
 Դեռ մըրմընջէր անո՛ւշ անունդ, ո՛վ Շուշան . . .
 Ու վերջի շունչ՝ եղան . . . Ա.ստուած . . . եւ Շուշան . . .» : ⁽²⁾

ՏԵՍԻԼ Գ.

ԲԱԲԳԷՆ, ՎԱՀԱՆ, ԴՐԱՍՏԱՄԱՏ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Հասի՛ր Բաբգէն, հասի՛ր, քո տէր մեռանի . . .
 Կըրնայ այդ ջուր կենդանութիւն տալ քաջին : ⁽³⁾

ՎԱՀԱՆ.

Կենդանութիւն . . . ո՛չ այդ ջուր ո՛չ, բարեկամք,
 Օտարոտի աղբերաց ջուրն է լեղի.

(1) Մատանին կուտայ :

(2) Հեծելով ու շնչասպառ :

(3) Բաբգէն սաղաքարտովը ջուր կբերէ :

Հայաստանի՛ միայն ջրերը սառնորակ
 Կըրնան Հայու սըրտին հեղուլ նորոգ կեանք : ⁽¹⁾ —
 Ի՞նչ այդ ձայներ . . .

Բ Ա Բ Գ Է Ն.

Տեսայ ըզգուհըրս Պարսից
 Որ հանդիսիւ յայս տափարակ իջանեն,
 Եւ արքայի՛ց արքայն իրե՛նց հետ մէկտեղ :

Վ Ա Հ Ա Ն.

Կաղաչեմ, կաղաչեմ ձեզ, ո՛վ բարեկամք,
 Օգնեցէք ինձ, հանէք զիս այս տեղերէ.
 Մի՛ իմ վերջին խաղաղական վայրկեաններ
 Խուովին իտես Հայաստանի թըշնամեաց :
 Տարէ՛ք հանէք զիս մօտաւոր յայդ բըլուր.
 Հոն դարձուցէ՛ք զիս հայրենեաց իմ յերես,
 Ընդ վերջի՛ն գոչեմ շընչոյս. «Մընաս բարո՛վ . . .
 Երկի՛ր սըրբոց . . . հարցս ուռգեալ արիւնով . . .
 Ա՛հ, իմ արիւն . . . չեղաւ հողոյդ արժանի
 Մընաք բարո՛վ . . . քա՛ղցր իմ եղբարք . . . ո՛վ Հայեր . . .
 Եւ դո՛ւ, Շուշան . . . մընաս բարո՛վ . . . յաւիտեան : ⁽²⁾

(1) Ոտքի ու փողերու ձայներ կլսուին :

(2) Դրաստամատ ու Բարգէն կհանեն զՎահան շտապաւ,՝ այս վերջի տողին: Դիմացի կողմէն կմտնեն Զօրականքն երգելով զերգ Յաղթական ու տեսարանին խորերը կշարուին: Ետեւնէն կուգան նախարարք, Որմզդան եւ Շապուհի՝ որ դեպ իհանդիսատեսքը կմօտենան:

ՏԵՍԻԼ Դ.

ՇԱՊՈՒՀ, ՈՐՄՁԴԱՆ, ՆԱԽԱՐԱՐՔ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ ՊԱՐՍԻՑ .

Ե Ր Գ

Յ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն .

1.

Կեցցէ Շապուհ, կեցցէ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ.
Կեցցէ օրուան այս յաղթուածեամբ
Եւ իբր արեւ փայլի անամբ:

2.

Իւր Թըշնամիք փախչին հապճեպ
Իբրեւ ըզմէգ լուսոյն հանդէպ.
Եւ տարածի իւր զօրուածիւն
Յոր վայր վազեն նըշոյլք արփւոյն:

3.

Քեզի նըման, Մազդեզա'նց քաջ,
Զեղաւ հըզօր ոչ ոք յառաջ,
Եւ ոչ յետոյ իսկ ոչ երբէք
Լիցի յԱրիս եւ ոչ ուրեք:

4.

Կեցցէ Շապուհ, կեցցէ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ,
Եւ տիրասէր զօրս իւր՝ ըզՊարա՝
Իւր հետ տանի փառաց իփառս:

Շ Ա Պ Ո Ի Հ.

Գոհութիւն տամք աստուածոց, իշխանք իմ քաջ.
 Մեծ է օրուանս այս յաղթութիւն, եւ առատ
 Հունձ՝ զոր այսօր մեր սուսերներ հընձեցին:
 Մեծն Արեգակ, պահպան դահուս Սասանեանց
 Այսպէս շքեղ օր մի դեռ ոչ էր ծագեալ.
 Շատ պատերազմ մըտաք ելաք քաջութեամբ,
 Բայց ոչ երբէք այսօրուան պէս դըժուարին,
 Անոր համար շատ յաղթութեանս է պըտուղ:
 Այսօր վերջին Արշակունեացըն պատուար
 Քուշանաց արքային հետ տապալեցաւ:
 Յուսամ՝ շուտով լըսեմք անկեալ զԱրտագերս՝
 Ուր ամրացած է Փառանձեմ թագուհին.
 Եւ Հայաստան լինի մեզ որս անաշխատ:
 Ձեր հայրն անմահ, մազդեզանց քաջ Արտաշիր,
 Ուրախութեամբ այսօր հայի ձեզ յերկնից.
 Իւր ըսկըսածն ահա փառօք աւարտէք,
 Ջընջելով յերկրէ զանուն Արշակունեաց:
 Գոհութիւն ապա մեծին տամք Որմըզդի,
 Եւ ձեզ փառք՝ իշխանք իմ քաջ եւ զօրականք:

Ա Մ Ե Ն Ե Ք Ե Ա Ն .

Կեցցէ՛ արքայ Շապուհ, կեցցէ՛ յաւիտեան:

Ո Ր Մ Ձ Դ Ա Ն .

Աստուածներն անոր համար քեզ, արքայ քաջ,
 Ըզյաղթութիւն եւ փառս առատ պարգեւեն՝
 Որ զի արդար եւ իմաստուն դու իշխես.
 Ո՞քան ըզքեզ արդարութեան նըժարներ

Անայլայլակ գիտաց իկեանս իւր ունել.
 Ո՞ր ցըցուց զարմանահրաշք իմաստութիւն
 Իգատել, թագաւորել եւ իյաղթել:
 Անոր համար եւ ժողովուրդ քո, արքայ,
 Արեւելքէն մինչ ուր արեւ կըմըտնայ,
 Զոհ եւ աղօթ մատուցանեն ամէն օր,
 Զի Միհր աստուած ըզքեզ նոցա պարգեւեց,
 Ընդգըրկէն սիրոյդ համար ամէն վրտանդ,
 Անմահ կենաց քո զոհ տալով զիւրեանց կեանք:

Շ Ա Պ Ո Ի Հ.

Ժողովըրդեան շընորհակալ եմ սիրոյն,
 Ճանաչեմ զայն, սիրով եւ ես ընդունիմ:

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ք.

Կեցցէ՛ արքայ Շապուհ, կեցցէ՛ յաւիտեան:

Շ Ա Պ Ո Ի Հ.

Բայց ո՞ւր է քաջն այն Հայկազուն՝ որ այսօր
 Պատերազմիս մեծաւ փառօք տըլաւ վերջ.
 Ինչո՞ւ ըզնա քաջացս հետ հոս չեմ տեսներ:

Ո Ր Մ Ձ Դ Ա Ն.

Գուցէ քաշուած է հայկական գընդին հետ:

Շ Ա Պ Ո Ի Հ.

Օ՛ն Որմըզդան, փութա ըզքաջն այն գըտիր,
 Ու բեր ըզնա մեր տէրութեանս առաջի.
 Արժանի է որ բանակիս իմ գիմաց
 Ըզփոխարէն ընդունի իւր քաջութեան,
 Ու շնորհակալ իմ ըզգացմանց հաւաստիս:

Ո Ր Մ Ձ Դ Ա Ն .

Ահաւասիկ եմ իհրաման քո արքայ . (1)

ՏԵՍԻԼ Ե .

ՇԱՊՈՒՀ, ՆԱԽԱՐԱՐՔ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ .

Շ Ա Պ Ո Ւ Հ .

Ձեզի՛ ալ, ո՛վ տիրասէր Արեաց իշխանք,
 Ամէն մէկուդ կըբաշխեմ վարձ արժանի .
 Քեզ, Մուշկա՛ն, որ զայրուձին իմաստութեամբ
 Ազատեցեր իկորըստեան վըտանգէ,
 Քեզ վըրկանաց մարզպանութիւնը տըլի:
 Ատրորմի՛զդ, քեզ յանձն առնեմ ըզփըղակոյտ .
 Եւ քեզի՛, ո՛վ ծերունի քաջ Անդաղան,
 Ահա աշխարհըն Խորասան քո առջեւ,
 Հոն վայելէ այսուհետեւ ըզհանգիստ:
 Պերոզ, եւ դո՛ւ արժանի ես որ այսօր
 Մատեան գընդին ըզքեզ դընեմ զօրավար,
 Որ այն քաջաց մէջ քաջագոյն փայլեցար:

Ն Ա Ւ Ա Ր Ա Ր Ք .

Կեցցէ՛ Շապուհ, կեցցէ արքայն արքայից:

Շ Ա Պ Ո Ւ Հ .

Իսկ եւ ձե՛զ, քաջագօտի իմ զօրականք, (2)
 Հազարասպետն Արեաց՝ իմովս անունով

(1) Որմզղան կժրոի Շապիոյ ու կելլէ քանի մի զինուորով:
 (2) Դեպ իտեսարանին խորն երբայով:

Ըստ քաջութեան իւրաքանչիւր եւ գործոց
 Պիտի բաշխէ ոսկի, պըսակ, ուռ եւ իւղ:
 Իմ քաջերուս արեան եւ ոչ մի կաթիլ
 Կըհանդուրժեմ որ անպատիւ կորսըլի:

(Զինուորները խոնարհելով Շապիոյ
 նորէն կերգեն զերգ Յաղթական.)

ՏԵՍԻԼ Զ.

ՈՐՄՁԴԱՆ, ԴՐԱՍՏԱՄԱՏ, ՇԱՊՈՒՀ, ԵՒ ԱՅԼԲ.

Ո Ր Մ Ձ Դ Ա Ն .

Ահաւասիկ է Դրաստամատ, արքա՛յ քաջ.
 Մօտի բըլուրն ըզնա գըտի տըխրագին
 Որ հայ գընդին զօրագըլուխ Վահանայ
 Ըզըունչ յետին բազկացը մէջ ընդունէր:

Շ Ա Պ Ո Ւ Հ .

Եկուր, ով քա՛ջդ իմ Դրաստամատ, եկուր հոս,
 Եկուր Արեաց եւ Անարեաց վեհ պարծանք.
 Փառք ըսպասեն քեզ, դու ինչո՞ւ Դրաստամատ
 Կըդանդադիս նոցա առջեւն ելանել.
 Ո՞վ առաւել է քան ըզքեզ արժանի
 Մատուցանել ըզլուսաւոր իւր ճակատ
 Պըսակադիր փառաց աջոյն յանդիման:
 Քեզ պարտական եմք ոչ միայն յաղթութիւն՝
 Այլ եւ արեւս եւ շունչ՝ բազկիդ է շընորհ.
 Անդուժ մահն՝ այնչափ քաջաց հունձին պըսակ
 Թագազարդ այսօր գըլուխ մի կըփընտուէր,
 Դու նորա սուրն ընկըրկեցեր մեր գըլխէն,

Ու Քուշանաց թագաւորին ըզգըլուխ
 նետեցեր՝ յառաջ նորա առ իյագուրդ :
 Հայոց գընդին ազատութիւն խոստացայ .
 Արժանացան, եւ ահա տամ զայն նոցա .
 Քեզ, ո՛վ քաջ, Շապուհ քեզ ի՞նչ տայ փոխարէն :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Երկնայի՛ն իւր հովանին, արքայ՝ հըզօր .
 Ի՞նչ մեծագոյն ինձ փոխարէն ցանկալի
 Դիւցա՛զըն տէր, քան ըզկենաց քոց արեւ :

Շ Ա Պ Ո Ի Հ .

Բայց Շապհոյ կեանքը քաղցրանալ չէ կարող
 Մինչեւ չըտայ վարձ արժանի ազատչին,
 Մինչեւ չըտայ վարձ արժանի իւր կենաց .
 Ահա պատիւ, դանձ, տէրութիւն քո առջեւ .
 Ընտրէ քեզ զո՛ր եւ կամիցիս . — տըւեա՛լ քեզ :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ինձ դըժուարին է դէմ՝ դառնալ արքայի .
 Այլ դըժուարին ոչ ինչ ընդհատ՝ խընդրել վարձ .
 Վա՞րձ, եւ առ ի՞նչ . — պարտուց իմոց կատարման :
 Աղէ, եւ ո՞ր են ծառայիդ արժանիք
 Զի քո շնորհաց իրեն գանձեր կըբանաս .
 Որ նա իւր կեանքը վեհ կենացդ հետ փոխե՞ց .
 Բայց թէ չընէր զայդ՝ մահո՛ւ էր արժանի :
 Փառք Անմահին, որ ինչպէս միշտ՝ եւ ա՛յսօր
 Յուցուց թէ ի՛նքն է օգնական եւ պաշտպան
 Տիրասէր հըպատակաց եւ ծառայից .
 Եւ այս տըկար բազուկ նուլաւ զօրացեալ՝

Ի վեր քան զիւր ոյժ այսօր գործ կատարեց : —
 Բայց զի անդարձ է այս հրաման արքայի,
 Ապա խընդրեմ՝ ոչ փոխարէն եւ կամ վարձ,
 Այլ զերդ շընորհ . . . ո՛վ տէր, եւ ի՛նչ մեծ շընորհ . . .
 Բայց ո՛րպէս համարձակի նըւաստ գերին
 Յոյս ունենալ այսպիսի վեհ շընորհի :

Շ Ա Պ Ո Ի Հ.

Շընորհ կամ վարձ՝ ի՛նչ ալ ուզես, Դրաստամատ,
 Մի՛ երկբայիր, ո՛րչափ եւ մեծ՝ կընդունիս.
 Երդուեա՛լ իՄիհր աստուած, խընդրէ՛ եւ տամ քեզ :

Ո Ր Մ Զ Դ Ա Ն.

Օ՛ն Դրաստամատ, սիրտ առ, ինչո՞ւ դանդաղիս :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Դանդաղի՛ւ . . . սիրտ իմ շատո՛նց է զայն խընդրեալ,
 Սակայն բերանս . . .

Ո Ր Մ Զ Դ Ա Ն.

Ներեա, արքայ, որ ե՛ս ինք
 Զոր ինչ նա ո՛չ համարձակի՝ աղերսեմ.
 Տուր քաջի՛ն Դրաստամատայ ըզգահն Հայոց,
 Որու՞մ նա շա՛տ իսկ առաւել արժանի
 Բան Մերուժան որ մատնութեամբ զայն գընէր.
 Արշակունեաց կործա՛ն գահ չէ այնչափ վեր
 Որ Դրաստամատ բարձրը սըրտով չըհասնի.
 Զեռն այն հըզօր որ բաշխէ կեանս արքայից՝
 Եւ զարքունին մական կըրնա՛յ գործածել :
 Տո՛ւր ապա, տէր, քաջին ըզթագն Հայկազանց.

Եւ այդ պարգեւ՝ արժանի է քեզ, արքայ,
 Եւ քաջի՛ն Դրաստամատայ՝ սըրտին փափագ:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Դրաստամատայ սըրտին փափաք, Որմըզդա՛ն,
 Ոչ գաւազան է արքունի եւ ոչ թագ:
 Ով իգահոյս եւ ծիրանիս չէ ծընած՝
 Եւ արքունի թագին լինի հետամուտ,
 Յուցանէ շատ թէ չէ՝ այնմիկ արժանի,
 Զի չը՛ճանչնար թէ ոսկեկուռ թագին տակ
 Ի՛նչ երկաթի՛ սուր սուր ցաւեր կան բունեալ,
 Եւ թէ ի՛նչպէս ծա՛նր է ոսկին այն մական՝
 Որ զաղփաղփուն նա ինքն եղէգ համարի:
 Հեռի՛ յինէն գահ որ որչափ բարձրաբերձ՝
 Եւ գըլորումն անտի՛ այնչա՛փ ահաւոր.
 Ո՛չ ապաքէն՝ այս իմ աչքե՛րըս տեսին
 Անդուստ երկու թագաւորներ գահալէժ:
 Մի՛ ինձ, մի՛ թագ բարեխօսեր, իշխա՛ն քաջ,
 Այլ թագազուրկ ճակտի մը զայն աղերսէ: —
 Այո, ըզնորհըն զոր երդուար ինձ համար՝
 Մազգեզա՛նց քաջ, արա՛ թըշուառն Արշակայ.
 Տուր իրեն թագ. տո՛ւր, ոչ եթէ մինչ իմահ,
 Ոչ մէկ տարուան, ոչ մէկ ամիս, այլ մէկ օր.
 Կուզե՞ս ինձ տալ իշխանութեան հրովարտակ՝
 Զայս հրովարտակ տուր՝ ցանկալի քան ըզբնաւ.
 Ինձ շընորհացդ ուզես ընտրեմ մեծագո՞յն՝
 Երթամ յԱնյուշ. այս է շընորհ զոր ընտրեմ:
 Ո՛հ, մի ժըխտեր Դրաստամատայ զայս շընորհ

Զոր արքունի փարեալ զոտիւքդ աղաչէ, (կնոփի)
Զերդումն Արեաց տեառն ունելով բարեխօս :

Շ Ա Պ Ո Ւ Հ.

Ել Դրաստամատ. ինչո՞ւ զքեզ ա՛յնչափ մոռնաս՝
Որ զանօրէ՛ն Արշակունին զայդ յիշե՛ս.
Թէ չըգիտե՞ս որ վա՛տն՝ ու պի՛ղծ իւր անուն
Դատապարտա՛ծ են իյաւէ՛ժ մոռացօնս :
Անյուշ բերդին մէջ մահապարտն որ ընկաւ՝
Ա՛յս են օրէնք՝ նա յաշխարհէս է կորած.
Մոռցիր ըզնա եւ դու ո՛վ քաջ, եւ խընդրէ
Արժանաւոր շընորհ Արեաց արքայիս :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Եւ զի՞նչ յաւէ՛տ քեզ արժանի, Արեա՛ց տէր,
Քան պարգեւել կեանք կենդանի մեռելոյ.
Ո՞չ աստուածեան նըմանութիւն իմն իքեզ
Վըսեմական սոյն այս պարգեւ ընծայէ.
Ո՞չ վեհ է այդ քան թէ տիրել աշխարհի,
Եւ քան տա՛լ Դրաստամատայ գանձ եւ գահոյս :
Տիեզերացդ իշխանութիւն, հըզօ՛ր տէր,
Երբեմըն բաղդ կամբիւսներու ալ տըլաւ.
Եղա՛ծ են Արտաշէսներ՝ որ սիրելեաց
Տըւին գանձեր, տըւին եւ կէսըն գահուն :
Բայց յԱնյուշ՝ ողջ ողջ թաղուած մահապարտի
Երջանկութեան յանկարծ մէկ օր տալ ծագել՝
Զայդ չըրաւ ոք, քանզի երկնի՛ց է միայն
Անտխակալ լինել տըկար մահացուին :
Մի՛ դու արքայ, մի՛ առաջնոց նըմանել,



Զի քան զանոնք դու վե՛ր ես յոյժ աննրման .
 Դու Աստուծո՛յ լեր գըթութեան նրմանող .
 Եւ ատելի՛ սակայն անկեա՛լ թըշնամւոյն՝
 Գէթ օ՛ր մի տուր յերջանկութիւն իւր դառնալ :

Շ Ա Պ Ո Ի Հ .

Դրաստամատ, քեզ ով կուզէ դիմակալել՝
 Պէտ չէ՛ ահեղ սըրոյդ ելլել առաջի .
 Եւ ով կուզէ մոգիչ շըրթանց քոց յաղթել՝
 Պէտ չէ՛ լըսել զառաքինի քո բարբառ :
 Պատերազմին մէջ յաղթեցեր թըշնամւոյս ,
 Եւ արդ ահա եւ տեառն Արեաց դու յաղթես : —
 Առ մատանւոյս հետ եւ ըզնորհ զոր խընդրես .
 Սա քեզ բանայ Անյուշ բերդին փակ դըռներ .
 Թող Սասանեանց անլուծելի այս օրէնք
 Իպատի՛ւ քաջութեան քո այսօր լուծուի : (1)

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ :

Մե՛ծ է շընորհ, արքայ հըզօր, մե՛ծ է յոյժ, (2)
 Եւ հաւասա՛ր է մեծայաղթ քո սըրտին .
 Ինձ հետ բոլո՛ր Հայք քեզ լիցին շնորհապարտ .
 Եւ ապագայք պիտի ասեն զարմացմամբ,
 « Արքայ Շապուհ աստուածակա՛ն ունէր սիրտ : »


Շ Ա Պ Ո Ի Հ .

Եւ ապագայք կուզեմ ասեն քեզ համար .
 « Տիրասէ՛ր սըրտի եղաւ նա օրինակ . »

(1) Մատանին կուտայ առ Դրաստամատ :

(2) Երկրպագելով կառնու մատանին Շապիոյ ձեռքին :

Երանի՛ ուլ որ ունի ձեռքն ըզՀայեր.
Ո՞ւլ այսպիսի քաջ ժողովուրդ է տեսեր,
Եւ ո՞ւր այսպէս անձնանըւէր իշխաններ:
Հայե՛ր, թէ դուք ինչպէս ըզտէր ձեր սիրէք՝
Նո՛յն սիրով եղբայր զեղբայր թէ սիրէիք,
Ո՞ւլ ձեր ահեղ կըրնար ուժոյն դէմ կենալ,
Ո՞ւլ կըրնար ո՞ւլ՝ լրսել Հայու գոռ զանուն՝
Եւ իսըրտին չըզգալ երկի՛ւղ եւ սարսո՛ւռ:





Տեսարանն է մուր քանն: Մեկ կողմը Արշակ շիրալակապ, չոր
 սախսակի մը վրայ ֆուն կշիկի. միւս կողմը մահապարտից
 շրթաներ եւ սանջանաց գործիներ կսխռւած սեւ պատերէն:

ՏԵՍԻԼ Ա.

ԱՐՇԱԿ ընկողմանեալ. ՄԻՀՐԱՆ ներս մտնելով ու Արշակայ հայելով.

ՄԻՀՐԱՆ.



Մ, սո՛ւտ երազ, ընդ ունայն տեղ հաւտալով
 ծատքեցի անկողինէս ու վազեցի,
 Յուսալով՝ ըզխեղճ Արշակ գըտնեմ ազատ.
 Աւանդ, գեռ նա շրղթայակապ յայս սեւ բանտ
 Իւր արքունի փոխան փափո՛ւկ գահոյից՝
 Միայն կըտո՛ր մ' ունի տախտակ կարծրակուռ,
 Ուր չարչըրկած մարմինն հանգչի սակաւիկ . . .
 Եւ ի՛նչ հանգիստ . . . Ո՛ տառապեա՛լ թաղաւոր,
 Ուստի՛ ըզքեզ բաղդ մինչեւ ո՛ւր գըլորեց.

Ո՛ւր գունդագունդ են նախարարք եւ ըսպայք՝
 Որոց միայն մէկ ակնարկելդ՝ էր փանք մեծ :
 Ո՛ւր սիրելեացըդ պար ըզքեւ, ո՛վ արքայ,
 Ինչպէս աստեղք՝ լուսնին պըսակ խերկին . . .
 Հապա սըրտին քո հայրենի ըսփոփանք
 Ա՛խ, ո՛ւր են ո՛ւր քոյին որդեակք . . .

ԱՐՇԱԿ.

Որդեակք իմ . . . (1)

ՄԻՀՐԱՆ.

Լըսեց արդեօք ձայնս ու քունէն կարթըննայ . . .
 Երթամ, երթամ, խեղճն առնու քիչ մը հանգիստ :
 Քունն է թըշուառ մարդուն միակ ապաւէն .
 Ո՞վ Արշակէն աւելի պէտք ունի յայդ . . .
 Մի՛հր աստուած, կենդանարար դու արփենի,
 Որ բոցավառ ու զուարթածեմ քո նըշոյլ
 Ահա ծագես յերկիր ցըրուեալ ըզխաւար,
 Ցըրուէ եւ զմութ թըշուառութեանն Արշակայ .
 Երջանկութեան ծագէ իրեն նոր այս օր,
 Ինչպէս երազն իմ աւետէր այս գիշեր . (2)

ԱՐՇԱԿ. (3)

Կեցի՛ր, անգութ, կեցի՛ր . . . կեցի՛ր խուժադուժ . . .
 Ո՞չ բաւական էր որ զԱրշակ թագաւոր

(1) Քունին մեջեն՝ երագելով :

(2) Կսկսի երբաւ, բայց Արշակայ ձայնը լսելուն՝ կանգ կառնու . :

(3) Արշակ յանկարծ կցատքե ու կսկսի խօսիլ իբր թէ ստուերի մը հետ . բայց դեպ իՄիհրան դարձած :

Խարդաւանօք յայս անել բանտ նետեցեր .
 եւ անճետ ըզնա կուզես կորսընցընել .
 Բոլոր որդիքըս խըլեց մահ . . . այս միայն ,
 Այս միայն յոյս . . . ասոր , ասոր խընայէ . . .
 Այլ դեռ սուրդ . . . ըսպառնացայտ դու կըճօճես . . .
 Ո՛հ , ոտքդ ընկած . . . ահաւասիկ աղաչեմ . . . (կնոխի) .
 Տես , ինքն Արշակ է որ քեզ զայդ պաղատի . . .
 Գողոզն Արշակ . . . յորդուոյն իսէր խոնարհեալ . . .

Մ Ի Հ Ր Ա Ն .

Աւանդ . . . զիարդ կըցընորի . . . ի՛նչ երազ . . .

Ա Ր Շ Ա Կ .

Ո՛վ , ահա . . . ահա վերուց . . . կուզէ զարնել . . .
 Ի՛նչ զարկ ⁽¹⁾ իմ գլուխս . . . ա՛հ , իմ գըլնուխս իջեցուր ,
 Խնայէ որդուոյս . . . անմեղ որդուոյս ողորմէ :

Մ Ի Հ Ր Ա Ն .

Ա՛հ , որո՞ւն , որո՞ւն կընես զայդ աղաչանք . . .
 Կըխաբուի՛ս հայր , հոս թըշնամի քեզ չըկայ .
 Միհրանն եմ ես , հայր , սիրելին քո որդի :

Ա Ր Շ Ա Կ .

Որդի՛ . . . ո՞ւր է իմ Պապ . . . դու հո՞ս ես , որդեակ . . .
 Այդ ձայն էր քո . . . Ա՛հ , եկ որդեա՛կ հօրդ իգիւրկ . ⁽²⁾
 Որդեա՛կ , զոր գայլք յաւիրշտակել կուզէին .
 Բայց չէ . ասկէ վերջ ո՞վ կըրնայ քեզ դըպչիւ .
 Հայրենի լանջս ահա կանգնեմ քեզ պարիսպ ,

(1) Կցատքե ու կվագե :

(2) Միհրանայ կպըլուի , իւր Պապ որդին զնա կարծելով :

Յիս նախ թափին... այս սիրտըս նախ սուր եւ մահ...
 Վա՛յ անոր՝ որ յանդըզնե՛լ համարձակի
 Որդեկորոյս հօր հետ կըռուել: ⁽¹⁾

Մ Ի Հ Ր Ա Ն .

Ով հա՛յր իմ... . . .

Ա Ր Շ Ա Կ .

Հայր . . . ի՛նչ անո՛ւշ խօսք . . . ո՛հ, այս հինգ տարի է
 Որ զըրկըլա՛ծ եմ այդ քաղցրիկ անունէ .
 Հինգ տարի՛ է որ թըշուառ սիրտս հայրենի
 Քուկին կարօտըդ կըքաշէ որդեա՛կ իմ...
 Դուն ալ, որդեա՛կ, կարօտցա՛ր հօրդ, այնպէս չէ՛:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Անմա՛հ աստուածք, այս ի՛նչ տըխուր են պատրանք... . . .

Ա Ր Շ Ա Կ .

Բայց գիրկըս չէս, որդեա՛կ. եկ տամ քեզ համբոյր. ⁽²⁾
 Ո՛վ հայրական համբոյր, ի՛նչպէս անուշ ես . . .

Մ Ի Հ Ր Ա Ն .

Հա՛յր իմ Արշակ... աւաղ, ի՛նչպէս կըխաբուիս (կուշայ)

Ա Ր Շ Ա Կ .

Այս արցունքներդ են քո, ո՛վ իմ սիրուն Պապ.
 Ո՛հ, թափէ՛, հօրըդ տոչոր երես ցօղէ՛.
 Յաւոց խոփեր խո՛ր աղօսներ հոն բացին .
 Այն անջըրդի հեղեղատից վըրայէն
 Սահին վազեն որդւոյս անո՛ւշ արցունքներ:

(1) Այս խօսքերուս ժամանակ կթողու գՄիհրան:

(2) Կպագնէ գՄիհրան:

ԱՐՇԱԿ Բ.

Մ Ի Հ Ր Ա Ն .

Ա՛հ, այո, կուլամ ես հայր

ԱՐՇԱԿ.

Բայց չէ, մի՛ լար.

Ալ անցա՛ն լալո՛ւ օրեր. դու հօրդ ես գիրկ . . .

Այսուհետեւ անբաժան հայր եւ որդի

Պիտի ապրինք, պիտի ապրի՛նք երջանիկ . . . (1)

Բայց ո՞ւր է մայրըդ, սիրելիս Փառանձեմ.

Ո՛ւր է իմ ո՞ւր հաւատարիմս ամուսին.

Այրիութեան ըզգեստն ինչո՞ւ չըթողուր.

Ուրախութեան օր է այս, մի՛ եւս այլ սուգ.

Արշակ եկեր է, Փառանձեմ չերեւիր . . .

Հրաւէ՛ր տըւէք Հայոց մեծաց թագուհւոյն.

Արշակ ազա՛տ . . . (Ներսէս շիրաչի ձայներ կրսուիս)

Շըղթայից ձայն . . . ո՞ւր եմք, Պապ.

Խաւա՛ր է հոս . . . Հայաստան այսպէս մութ չէ.

Հայաստան . . . հայրենի՛ք են արեգական . . .

Որդեա՛կ իմ Պապ (2) . . . բայց այս Պապ չէ, պարսիկ է.

Եւ պարսիկ մը, ի՛ժ թունաւոր կըզըրկեմ . . .

Ա՛յ անիծի՛ց մանուկ, դու գիրկն իմ պըղծես . . .

Դու զորդուոյս խըլես համբոյր իմ շըրթունքէս . . .

Մ Ի Հ Ր Ա Ն .

Տէր իմ Արշակ, Միհրանն եմ ես, կըմոռնաս,

Կըմոռնաս որ խոստացար զիս որդեգրել . . .

Թէ դու մոռցար՝ ես չեմ մոռնար որ հա՛յր ես:

(1) Կրողու գՄիհրան:

(2) Շիրաչից շառագձմանէն՝ ցնորքը կանցնի, ու անոր տեղ վրան կուգայ յուսահատ կատաղութիւն:

ԱՐՇԱԿ.

Ե՞ս քու հայրդ, ես . . . իբաց մանուկ Սասանայ.

ՄԻՀՐԱՆ.

Ահ գըթա՛ տէր, գըթա՛, մի՛ դառն այդ խօսքեր . . .
Սիրտ իմ կայրի . . . տես արցունքներս . . .

ԱՐՇԱԿ.

Արցունքներ . . .

Շատ թափեցի շատ, եւ աղբերքն արդ չորցան.
Արցունքներ . . . շա՛տ դուք թափել տըւիք որդւոյս
Ա՛յ խուժագուժ եւ մարդախանձ Պարսիկներ :

ՄԻՀՐԱՆ.

Թէ անգուժ բաղդ տըւաւ ծընունդ ինձ պարսիկ,
Արցունքներս՝ ո՛չ զիս ցարդ հայ ո՛չ սըրբեցին.
Ահ երբ քեզի կուտամ զանուշ անուն « հայր »
Միժէ նըւազ ըզգամ քան զոր ինքն իսկ Պա՛պ . . .

ԱՐՇԱԿ.

Պա՛պ . . . ա՛հ, ո՛ւր ես Պապ, իմ որդեա՛կ սիրելի,
Դեռ այժմ իսկ՝ ըզքեզ իծո՛ց իմ կարծէի.
Վահ, ինչո՛ւ շըղթայից ձայն զիս արթընցուց.
Ի՛նչ անո՛ւշ երազ եւ ինչ դառն այս պատրանք . . .
Վարկեան մի երկնահանդէս երջանկուժիւն,
Եւ ապա՛ մըշտախաւար թըշուառուժիւն . . .
Ե՞րբ ազատիմ անտանելի այս կեանքէս . . .
Ամէ՛ն բան, ո՛հ, ամէն բան կորսընցուցի.
Հայրենիք, գահ եւ որդիք եւ ամուսին.
Ի՞նչ մընաց ի՞նչ. — միայն ըստուե՛րն Արշակայ . . .

Շնունչ մը միայն . . . մահ, ա՛ռ եւ զայն, ազատիմ:
 Երեսուն տարի ես հետըզ կըռուեցայ,
 Երեսուն տարի մնացի անընկճելի.
 Յորչափ ճակատ իլոյս թագին կըփայլէր՝
 Խընդայր եւ սիրտ ընդդէմ կըքրել քո, ո՛վ մահ.
 Բայց ահա՛ շատ իսկ այս սիրտ տըկարացեալ,
 Եւ թագազուրկ գըլուխ ոտքիդ տակ թողու.
 Ի՛նչ կուշանաս, ո՛վ անգութ մահ, հարուած մ՛ալ
 Եւ իխո՛րս գերեզմանին զայն տապալէ. . .
 Հո՛ն միայն հո՛ն՝ հանգչի գըլո՛ւխս այս թըշուառ: (1)

Մ Ի Հ Ր Ա Ն. (2)

Բայց հանգչէ՛ նաեւ որդւոյս սըրտին վերայ:
 Զի՛ս նախ, ո՛վ հայր, զի՛ս նախ զարնէ մահուն սուր,
 Ճըմլէ կոխէ զիս ու արեամբն իմ յագի:

Ա Ր Շ Ա Կ.

Ո՞վ է դա՛ որ իրեն տաք արցունքներով
 Գլուխս ողողէ . . . ո՞յր է այդ ձայն գըլթալիր . . .

Մ Ի Հ Ր Ա Ն.

Միհրանայ, (3) որդւոյ քոյին է, Միհրանայ:

Ա Ր Շ Ա Կ.

Դու հո՞ս, Միհրա՛ն, դու հո՞ս ես այս ժամանակ.
 Բու բանտապետ հօրմէդ ինչպէս չըվախցար:

(1) Յուսահատ ու սպառեալ կնստի գլուխը ծռած:

(2) Արշակայ քովը կվագե ու գլուխը նորա գլխուն վրայ անուշ մը դրած՝ լալով կասե:

(3) Դիմացն երբալով:

Մ Ի Հ Ր Ա Ն.

Ինչո՞ւ վախնամ, տէր, միթէ հայրն իմ Սուրէն
 Այնչափ անգո՞ւթ է որ բաղգիդ չըզըթայ . . .
 Ո՞ր սիրտ — թէ ոչ է քար — կըրնայ չըշարժիլ
 Ըզմեծն Արշակ տեսանելով յայս պայման.
 Ո՞ր աչք կըրնայ իւր արցունքները սանձել . . .
 Սուրէ՛ն ալ, տէր, Սուրէն ալ քեզ կըզըթայ,
 Եւ ախորժի որ քեզ կոչեմ ինձի — « Հայր »:

Ա Ր Շ Ա Կ.

Օրհնութի՛ւն, որդեակ, ցաւա՛ծ հօր օրհնութիւնք ⁽¹⁾
 Հօր մը որ՝ յաշխարհ ամէն բան կորուսած՝
 Իքե՛զ միայն կարծէ դեռ բա՛ն մը ունել:
 Դու յայս ահեղ բանտ, աղետից օթեւա՛ն,
 Վարդ մի ես ինձ՝ փուշերու մէ՛ջը ծաղկած . . .
 Դո՛ւ ես միայն որ այս երկար հինգ տարուան
 Դա՛ռն իմ վըշտեր՝ քո քաղցրութեամբ ամոքես.
 Օրհնութիւն, որդեակ, ցաւա՛ծ հօր օրհնութիւնք:

Մ Ի Հ Ր Ա Ն.

Ա՛յժմ ահա՛ կըճանչնա՛մ, հայր, որ զիս սիրես . . .
 Այդ սըրտառո՛ւչ բանք՝ ինձ շուտո՛վ մոռցընեն
 Զոր պա՛հ մ՛ առաջ թափեցի դա՛ռն արտասուք.
 Թէ գիտնայի՛ր, հա՛յր, ի՛նչ որդւոյդ եղաւ սիրտ
 Երբ քո սըրտէն զիս մերժեցիր խըստութեամբ,
 Մերժեցա՛յ կարծես եւ յե՛րջանկութենէ.
 Բայց երջանի՛կ եմ արդ, ով հայր, որ այսօր
 Դարձայ իշնորհ քո հայրենի եւ իսէր:

(1) Այս ու հետեւեալ խօսքերը լքեալ սրտով մը պիտի աւե:

ԱՐՇԱԿ Բ.

ԱՐՇԱԿ.

Այս հայրական համբոյր, որդեա՛կ իմ Միհրան (1)
 Թող մոռցընել տայ զոր ցընորք յուսահատ
 Անուշ սըրտիդ տըլած են վէրս անիրաւ :

ՄԻՀՐԱՆ.

Անո՛ւշ վէրք՝ որում համբո՛յր ըսպեղանի . . .
 Այո՛, համբոյրդ հայրենի տայ մոռցընել
 Զիմ անա՛րդ նըլաստութիւն պարսկածընունդ .
 Բաղդ դըթխեմ՝ ինձ ուզեց տալ ցած մէկ ըսկիզբ,
 Դու, թագաւո՛ր Հայոց, ըզվեհ հովանիդ
 Անշըքութեանըս սըփուեցեր իվերայ,
 Եւ անդէ՛ն ահա Միհրան վերամբարձաւ .
 Ի՛նչ մեծագո՛յն փառք՝ քան կոչել քեզ որդի :

ԱՐՇԱԿ.

Որդի՞ . . . ո՛հ ա՛յդ թըշուառ անուն՝ չըգիտես
 Որպիսի՛ պարփակէ վիշտըս յուսահատ
 Արշակայ որդի՛ . . . բայց ո՞չ գիտես, Միհրան՝
 Որ այդ անուան հետ առնուս, խեղճ պատանի,
 Եւ զապառում բաղդ տառապեալս Արշակայ . . .
 Այդ անուան՝ օր մը՛ էր թա՛գ ժառանգութիւն,
 Բայց ա՛յս օր՛ կապանք յԱնյուշ բերդի . . . եւ մա՛հ . . .
 Դու որ զանուն որդւոյ կըրել քեզ խընդրես,
 Կարո՞ղ ես կըրել եւ ծանր այս շըղթաներ (2):

(1) Կպագնէ :

(2) Միհրանայ ձեռքը կուտայ շղթայն :

Մ Ի Հ Ր Ա Ն .

Զաւելի՛ն քան զայս՝ բայց քե՛զ միայն համար .
կրպագենե՛մ շրղթայդ թէպէտ արտօսր յական .
Առաւել վե՛հ է ինձ շրղթայն Արշակայ
Քան զոսկեհուն Շապհոյ կամար եւ պըսակ . . .
Ո՛հ, զիս կոչէ՛ «որդիդ», եւ այն շատ է ինձ :

Ա Ր Շ Ա Կ .

Որդի՛, զոր բանտը կը ծնանիմ եւ յերկաթ :

Մ Ի Հ Ր Ա Ն .

Բանտ եւ երկաթ ինչ են, իսէր քո ծնանիմ .
Բանտ՝ ուր Արշա՛կ է, արքունիք են, ո՛չ բանտ .
Արքա՛յդ Հայոց մեծաց, քեզ ինչ կրպակսի .
Փանք . — ո՛չ հետդ են, ինչպէս է լոյսն ընդ արեւ .
Գահ չունիս . սիրտս ահա՛, ա՛ստ թագաւորէ .
Թէ բողբ առաւ տըւածն՝ ընկա՛լ զայս անդարձ :

Ա Ր Շ Ա Կ .

Որդիական սէրդ ընդունի հօր մը սիրտ,
Եւ փոխարէն՝ տամ զոր որդւո՛յս չըկըրցայ .⁽¹⁾
Մատղաշ իգլուխ քո թափելով, ո՛վ Միհրան,
Իմ վերջին օրուան վերջին օրհնութիւններ :

(1) Աջ ձեռքը Միհրանայ գլուխը կղնէ :

ԱՐՇԱԿ Բ.

ՏԵՍԻԼ Բ.

ՍՈՒՐԷՆ, ԱՐՇԱԿ, ՄԻՀՐԱՆ.

ՍՈՒՐԷՆ.

Հո՞ս ես, որդեա՛կ, գոհուլթիւն դից որ գըտայ.
 Ո՛րչափ լացաւ մայրըդ աչերն երբ բացաւ՝
 Ու չըտեսաւ որդին — ինչպէս ուրիշ օր —
 Որ զարփւո՛յն աւետելով պայծառ ծագում
 Մայրենի խընդրէր համբոյր սիրակարօտ:

ՄԻՀՐԱՆ.

Երբ ձեր քով չեմ, հայր, ո՞ւր կարող եմ լինել
 Բայց եթէ հո՛ս՝ մեծն Արշակայ ոտքին մօտ.
 Հոս իրմէ՛ իմաստութեան հետ կըսովրիմ
 Ընդդէմ բաղդի ըզքաջութիւն անվըրդով:
 Բայց այսօր՝ աստուածառաք իմն եւ երազ
 Աւետաւոր զիս փութացոյց առ արքայ՝
 Թէ վերջ ցաւոց՝ երջանկութեան գայ ըսկիզբ: —
 Լըսէ երազն, ո՛վ հայր՝ որ ես խելամուտ
 Վեհն Որմըզդի կամաց՝ որում յաշտ առնես:

ՍՈՒՐԷՆ.

Պատմէ, որդեակ Միհրան. քո միշտ երազներ
 Բարեյաջող նըշանք են քաղցր աւետեաց.
 Որո՞ւ բայց քո անմեղ սըրտին՝ աստուածներ
 Իրենց ծածուկ խորհուրդ կըրնան մերկանալ:

ԱՐՇԱԿ Բ.

ՏԵՍԻԼ Բ.

ՍՈՒՐԷՆ, ԱՐՇԱԿ, ՄԻՀՐԱՆ.

ՍՈՒՐԷՆ.

Հոս ես, որդեա՛կ, գոհուլթիւն դից որ գըտայ.
 Ո՛րչափ լացաւ մայրըդ աչերն երբ բացաւ՝
 Ու չըտեսաւ որդին — ինչպէս ուրիշ օր —
 Որ զարփւո՛յն աւետելով պայծառ ծագում
 Մայրենի խընդրէր համբոյր սիրակարօտ:

ՄԻՀՐԱՆ.

Երբ ձեր քով չեմ, հա՛յր, ո՛ւր կարող եմ լինել
 Բայց եթէ հո՛ս՝ մեծն Արշակայ ոտքին մօտ.
 Հոս իրմէ՛ իմաստութեան հետ կըսովրիմ
 Ընդդէմ բաղդի ըզքաջութիւն անվըրդով:
 Բայց այսօր՝ աստուածառաք իմն եւ երազ
 Աւետաւոր զիս փութացոյց առ արքայ՝
 Թէ վերջ ցաւոց՝ երջանկութեան գայ ըսկիզբ: —
 Լըսէ երազն, ո՛վ հայր՝ որ ես խելամուտ
 Վեհն Որմըզդի կամաց՝ որում յաշտ առնես:

ՍՈՒՐԷՆ.

Պատմէ, որդեակ Միհրան. քո միշտ երազներ
 Բարեյաջող նըշանք են քաղցր աւետեաց.
 Որո՞ւ բայց քո անմեղ սըրտին՝ աստուածներ
 Իրենց ծածուկ խորհուրդ կըրնան մերկանալ:

ԱՐՇԱԿ .

Ախորժեւի՛ են ինձ այդ բանք քո, Սուրէ՛ն .
 Բայց Միհրանայ երազը սիրտն իւր ազգեց,
 Իսկ մեկնութի՛ւնը քոյդ, Սուրէն, բարի սէր .
 Երկուքիդ ալ շընո՛րհ ունիմ, բարեկամ .
 Երկուքիդ ալ սիրոյն կարօ՛տ եմ այսօր,
 Վասըն զի . . . կըզգա՛մ եւ ես, ո՛վ սիրելիք,
 Որ այս արեւ՝ վերջի՛ն ծագի Արշակայ .
 Ի՛նձ ալ եկան, ի՛նձ ալ ոգիք հրաւիրակ,
 Ու այս խաւար բանտիս ահեղ կամարներ
 Զերդ որոտմունք՝ որ լեռնէ լեռ կըզոռան՝
 Գիշերուա՛ն լրուութեան մէջ զա՛յս հընչեցին .
 « Արշա՛կ . . . եկո՛ւր . . . Արշա՛կ, քեզ հո՛ն կըսպասեմք . . . »
 Ու մատնանիշ ինձ առնէին տարտարոս . . .
 Այլ ահա . . . ⁽¹⁾ գերեզմաններ կըշառաչեն . . .
 Յարեան շաղախ . . . կելլեն . . . կելլեն . . . մեռեալներ . . .
 Ահա Տիրան . . . որդին՝ Տըրդատ . . . ձեռն իձեռն . . .
 Գընէլ . . . Զուրայ . . . Վարդան . . . Տիրիթ . . . Արշաւիր . . .
 Եւ այլ գունդ գունդ . . . իշխանք . . . ռամիկք . . . զօրականք . . .
 Վազեն ինձի՛ դէմ . . . սուսերօք եւ բըրօք . . .
 Արիւն . . . ծըծումք . . . կըրակ . . . բոցեր ցայտելով . . .
 « Մեռի՛ր » . . . գոչեն . . . : Ահա . . . ահա . . . կըհասնի՛ն . . .
 Եւ ո՞ւր փախչիմ . . . ես ո՞ւր . . . : Երկի՛ր, պատառուէ՛ . . .
 Բացուէ՛ անդունդ . . . տո՛ւր Արշակայ գերեզման . . .
 Ընկէ՛ք պատեր . . . զիս ծածկեցէք անհետ . . . ⁽²⁾

Մ. Ի. Հ. Ր. Ա. Ն .

Հա՛յր . . .

(1) Յնորելով, իբր թէ ուրուականներ տեսանէր դիմացը :

(2) Արշակ կիչնայ գետին շնչասպառ, Միհրան քովը կվազէ :

ՍՈՒՐԷՆ.

Մինչեւ ցե՞րք՝ երկինք, ա՛յսպէս անգըթանայք . . .
 Բաւական չէ՞ խեղճին երկա՛ր պատուհաս.
 Թէ յանցաւո՛ր էր նա քաւէց ըզյանցանս.
 Միթէ չըկա՞յ իձէնջ մեղաց թողութիւն . . .
 Ո՛հ գըթացէք ամենողո՛րմ աստուածներ,
 Ու այն երազ զոր ցուցիք ա՛յս օր որդոյս՝
 Ժամ մի յառաջ ըզկատարում իւր առնու:

(Բանտին խորերէն կլսուի նախարարաց առա-
 ւօտեան Աղօթքի երգոյն առաջին տունը).

ԱՌԱՒՅՏԵԱՆ ԱՂՅԹՔ

Գ Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ

Ի Խ Ո Ր Ս Բ Ա Ն Տ Ի Ն

Ա.

Աստուա՛ծ, որ զայս նոր,
 Մեզի տըւիր օր,
 Ընդունիմք քեզմէ,
 Ձի քո պարգեւ է,
 Որպէս, ո՛հ, եւ այս
 երկաթի՛ շըղթայս,
 Որպէս եւ անյոյս
 Մեր այս բանտ անլոյս:

Փա՛ռք քեզ, փառք քեզ
 Ցաւոց տեղէս:

Ա Ր Շ Ա Կ.

Այս քաջերուս է ձայն . . . Հայո՛ց դիւցազանց . . . (1)

(1) Կես մի կանգնելով, ու չորս կողմը նայելով ցնորակոծ:

Ո՞ւր էք ո՞ւր, անյաղթելի՛ իմ զօրավարք...
 Վասա՛կ մե՛ծ ըսպարապետ, ձայնդ ինձ հասաւ.
 Դա մարտից՝ ահաւոր փող, հայոց խրախոյս...
 Սըմբա՛տ ասպետ, վահա՛ն, Շաւասպ, Գաղաւոն...
 Հա՛, վառեցէք անպարտելի ձեր գընդեր...
 Ահա արքայդ կուգայ... բերէք զիմ սուսեր... (1)
 Տըւէք վահանա... : — Հայեր... Հայեր, պատերա՛զմ...

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ք Ն (կերսեկ.)

Բ.

Ո՞հ, ծագէ եւ մեր
 Հայրենեաց, ո՛վ Տէր,
 Մի՛ այսպէս տըխուր՝
 Այլ լուսափետո՛ւր:
 Ծագէ՛ հայոց լոյս,
 ճահանջագեղ յոյս,
 Մերժէ՛ զթըշնամիս
 Կըման գիշերիս:

Փա՛ռք քեզ, փառք քեզ
 Յաւոց բանտէս:

(Երգեն վերջը՝ Նախարարաց ներսը ըրած
 շարժմունքէն իրենց շղթայից ձայնը կլսուի):

ԱՐՇԱԿ (իցևորս.)

Բերէք, բերէք զայդ երկաթի շրղթաներ,
 Հա՛պա արկէ՛ք գերի Պարսից ոտուրներ.
 Տարէք, ընդ փո՛ւշ եւ ընդ տատասկ քարշելով,
 Նետեցէ՛ք Մասեաց իվիհս անդընդախոր...
 Չէ, դոցա մէջ տըղա՛յք ալ կան... եւ կանայք...

(1) Կցատքէ արիարար:

Բըռնեցէ՛ք, տըղոց գըլուխ զարկէք քարի,
 Երթան զո՛հ՝ որդւոց Հայոց նահատակաց . . .
 Ու զկանայս՝ պատա՛ռ պատա՛ռ փողոտեցէք . . .
 Կուսանա՛ցն Հայոց այսպէս առէ՛ք վըրէժ:

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ք Ն (հերսէն.)

Ք.

Քըթա՛, Տէր, գըթայ
 Եւ իմեր արքայ,
 Սըրտին վըշտահար
 Դո՛ւ լեր մըխիթար.
 Դարձո՛ առ Արշակ
 Իրեն գահն ու Թագ,
 Եւ Հայոց՝ զիւրեանց
 Արքայ մեծապանձ,

Զի փա՛ռք տան քեզ

Որ սիրէս մեզ:

Ա Ր Շ Ա Կ (իցևորս.)

Ահա դառնան իմ քաջայաղթ զօրավարք . . .
 Փառք առաջնորդ է ընթացիցըն նոցա.
 Եկէ՛ք ո՛վ Հայոց մեծաց գո՛ւ նահատակք
 Ընդունել զարժանաւոր ձեզ վեհ պըսակ,
 Զոր արքայ՝ յդ Արշակ բաշխէ ձեզ հըրճուալիւր: —
 Զօրակա՛նք, ըզյաղթութիւնդ այժմ՝ երգեցէք:

Ս Ո Ի Ր Է Ն.

Խե՛ղճ Արշակ, ի՛նչպէս ցընորս իցընորից
 Թըշուառ ոգին քո թափառի . . .

Մ Ի Հ Ր Ա Ն.

Ո՛վ երկինք . . .

ԱՐՇԱԿ Բ.

Ն Ա Ի Ա Ր Ա Ր Ք Ն (ներսէն.)

Գ.

Իսկ եւ վերայ մեր
 Պիտի գըթա՞ս Տէր,
 Օր մի դարձունե՞ս
 Հայրենիք եւ մեզ . . .
 Ո՛հ, թէ չես գըթար
 Մեզ, Աստուա՛ծ արդար,
 Մեր ոսկե՛րց գըթա,
 Գէթ դարձո՛ զնոսա.

Զի փա՛ռք տամք քեզ
 Իխո՛ր շիրմէս:

ԱՐՇԱԿ.

Բայց ինչո՞ւ, ձեր սըրտաբեկ է ձայն, ով քաջք.
 Չէ սա խրո՛խտ բարբառ որդոցն Արարատայ . . .
 Բայց լրուլթիւն տիրեց . . . ⁽¹⁾ լրսեմ հեծուլթի՛ւն . . .
 Ո՞ւր էք քաջերս . . . շրղթայից ձա՛յն . . . ո՞ւր եմ ես . . .

ՏԵՍԻԼ Գ.

ԱԼԱՆՈԶԱՆ, ԱՐՇԱԿ, ՍՈՒՐԷՆ, ՄԻՀՐԱՆ.

ԱԼԱՆՈԶԱՆ.

ՅԱնյո՛ւշ բերդին, Արշա՛կ . . . իբա՛նտ խաւարի.
 Գերի Պարսից, գերի՛ . . . ի՞նչ, դու մոռցե՞ր ես . . .
 Քա՛ջ է. ես գա՛մ ահա իյուլ քեզ ածել.

(1) ներսէն հեծութեան ու շղթաներու ձայն կլսուի:

Գամ տեսնել՝ թէ երկաթի քո շրջթաներ
Յանցանքիդ չափ ծա՛նըր կը շուեն :

Մ Ի Հ Ր Ա Ն (Ի ն ք ն ի ր ն ե ն .)

Ձի՞նչ է այս . . . (1)

Ս Ո Ի Ր Է Ն (Ի ն ք ն ի ր ն ե ն .)

Ա լ ա ն ո զ ա ՞ ն . . .

Ա Ր Շ Ա Կ (Ի ն ք ն ի ր ն ե ն .)

Ա յ ս ձ ա յ ն ի ն ձ չ է անծանօթ . . .

Ա Լ Ա Ն Ո Ջ Ա Ն .

Անծանօթ . . . միթէ մոռցա՞ր զԱլանողան .
ՁԱլանողան՝ որ քեզ հաւո՛ւ մը պէս իվարմ
Որսաց, փետե՛ց թեւերդ ու հոս թաւալեց :

Ա Ր Շ Ա Կ .

Սըտերդ ո՞ւմ եւ անօրէնն Ալանողան . . .
Որ դեռ եկեալ եւ պարծի յւր նենգութի՞ւն . . .
Վա՛տ արանց, թէ չես գիտեր՝ գոնէ գիտցի՛ր ,
Ո՛չ խաբուիլն՝ այլ է խաբե՛լն ամօթալի :
Ահա եւ սէգն առիւծ կիյնայ իթակարդ .
Այլ առիւծ՝ թէ եւ կապեալ է միշտ առիւծ .
Եւ Արշակ՝ իգահ եւ բանտ՝ է միշտ Արշակ :
Վախցի՛ր ծաղրել զառիւծ թէ եւ ոտնակապ ,
Օր մի կըրնայ կոտորել բանտին երկաթներ :

(1) Սուրեն յանկարծակի կուգայ, նայնպէս եւ Միհրան եւ Արշակ :

ԱՐՇԱԿ Բ.

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն.

Թող եւ առի՛ւծն Արշակ կոտորէ՛ զիւր շրղթայս :
Զորս դիզ նայէ, թանձր այդ պատեր կըտեսնես՝ս :

Ա.Ր.Շ.Ա.Կ.

Է՛հ, ո՛չ շրղթայք երբէք կըրցան զիս ընկճել,
եւ ոչ պատերդ՝ առնել զոգիս յուսահատ.
Թէ հոս եկիր կամ՝ զըրկեցար ա՛յն յուսով
Որ զԱրշակ տեսնես փոխուած, լըքեալ, խոնարհ,
Ափսո՛ս երկա՛ր ճամբուդ լ՛անմի՛տ քո յուսոյն.
Գընա, ասան Շապհոյ, թող շատ չըխընդա՛յ,
Արշակայ գլուխն ընկճելու՝ ո՛չ թէ իւր ձեռք՝
Այլ եւ ո՛չ բաղդին շանթիք յայդ չե՛ն կարող :

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն.

Բանդագուշա՛նք խելացընոր գողողութեան.
Է՛հ մոռացա՞ր թէ ո՛ւր խօսիս դու, Արշակ :

Ա.Ր.Շ.Ա.Կ.

Եւ դու վա՛տ, մոռցա՞ր որո՛ւն խօսիս առջեւ . . .
ԶԱրշակ՝ Հայո՛ց մեծաց արքայն կըտեսնես.
ԶԱրշակ՝ Պարսի՛ց սարսափ երսո՛ւն տարիներ.
Արշակայ անո՛ւնն ալ ձեզ դեռ արհաւիրք . . .
Ըստուերս ալ՝ շատ է Պարսից իզարհուրանս . . . —
Բայց եւ գընա՛. աչքիս դու չես արժանի.
Գընա՛, իմ բանտ՝ միայն այս ժամն է ահեղ
Երբ քո ձայն՝ խուլէ զնորա խաղաղութիւն . . .
Իբա՛ց մատնիչ, քեզմէ Արշակ կըգարշի՛. (1)
Զէ՛ բանտս այնչա՛փ սեւ՝ որչափ քո պի՛ղծ ոգին :

(1) Մեկդի կքաշուի ու երեսը կղարձունէ :

ԱՐԱՐՈՒԱԾ Բ, ՏԵՍԻԼ Դ.

ԱԼԱՆՈԶԱՆ.

Երթամք, Սուրէ՛ն, թո՛ղ ցընորի խեղճ գերին . . .
ՅԱրեաց տեառնէ հրամանս ունիմ քեզ եւ թուղթ:

ՍՈՒՐԷՆ.

Աւասիկ եմ . . . — Միհրան, քեզ մայրդ ըսպասէ. ⁽¹⁾

ՏԵՍԻԼ Դ.

ԱՐՇԱԿ.

(Թեւերը ծալած երկար ժամանակ ետեւներէն լուռ կեցած նայելէն վերջը՝ կզոչե.)

Ո՛ւր իջար ո՛ւր, ապերջանի՛կ դու Արշակ . . .
Ալանոզան մ՛ալ քու դիմաց խըրոխտա՞յ . . .
Եւ դո՛ւ Արշակ . . . ի՞նչ. տակաւին դու ապրի՞ս:



(1) Ալանոզան կելնէ, ետեւէն Սուրէն. Միհրան տխուր աչքով մի կնայի Արշակայ վերայ՝ ու յետոյ կելնէ եւ նա:



Տեսարանն է բանսին մեծ սրահը : Մեջ տեղին երկարի ժան-
գահար դուռ մի կտեսնուի : Պատերին շրթաներ կախուած են :
Քովրնի մուստեր աչ կան դեպ իմահասպարսից խորշերը :

ՏԵՍԻԼ Ա.

ԴՐԱՍՏԱՄԱՏ, ՍՈՒՐԷՆ.

ՍՈՒՐԷՆ.



Հա իւր բանա : (դուրսն մտանկով.)

ԴՐԱՍՏԱՄԱՏ (գերշակ չգտանկով).

Ի՞նչ... [Ժաղաւորն իմ հոս չէ...]

ՍՈՒՐԷՆ.

Մի՛ վախնար քաջդ . անշուշտ քաշուած է իներս :
Քովի երբե՛մըն խորշ կերթայ խաւարին ,
Ու սըգալից գետնի վերայ տարածուած՝
Կըթըրջէ հողն արցունքներուն հեղեղով ,

Իբրու թէ՛ թանայր զորդւոց իւր գերեզման.
 Հոն շա՛տ անգամ ըզնա գրտանք անշրշունչ,
 Ու հաղիւ թէ՛ մեր տաք արցունքն ու համբոյր
 Վերակոչել ըզնա իկեա՛նըս բաւեն:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Խեղճ թագաւոր . . .

Ս ՈՒՐ Է Ն .

Խեղճ եմ եւ ես, իշխա՛ն քաջ,
 Որ զայսպիսի ունիմ պաշտօն ցաւալի.
 Սիրտս ամէն օր կըկըտըրտի նոր ինոր,
 Այսպիսի խե՛ղճ տեսարաններ տեսնելով:
 Հաւատարի՛մ բնութիւն եւ բարք մարդասէր
 Երկու կողմէ՛ն զիս կերպ ու կերպ կըտանջեն:
 Երդուած եմ հաւատարիմ լինել պարտուց,
 Ուստի հա՛րկ է զըսպեմ փափագս եւ գորով՝
 Որ յորդորեն կոտրել զերկաթս Արշակայ.
 Ու սիրտ որ լա՛ւ կըզգայ ողորմ նորա բաղդ՝
 Ո՛չ ինչ պակաս եւ ի՛նք կապուած շրղթայիւք,
 Այլ ինչ կարող չէ շընորհել Արշակայ՝
 Բայց իւր վըշտաց՝ կարեկցութիւն գըթալիր:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Շա՛տ է եւ այդ, ո՛ պատուական ծերունի.
 Բայց արքունի մատնիս օրուան մի համար՝
 Խիստ պարտո՛ւցըդ կըլուծէ քեզ երդմունքէն:
 Օգնէ՛ ինձի՛ ու դիւրացո՛ր զիմ տէր
 Օր մի գէթ օ՛ր մ՛ ընեմ ամբո՛ղջ երջանիկ:

Հա՛սկա փուլթա, չըկորսընե՛մք մի վայրկեան .
 Այս օրուա՛ն մէկ ըոպէն ալ սո՛ւղ է, անգիւտ :
 — Եւ փոխարէն գըլթոյդ առ տէրն իմ՝ արքայ՝
 Արժանի՛ ես իրեն տանել աւետիս
 Որ Դրաստամատ այսօր Անյուշ բերդն եկած
 Կարօտագին իրեն տիրոջ կըսպասէ .
 Այսչափ միայն ասա, Սուրէն, ո՛չինչ այլ :

ՍՈՒՐԷՆ.

Ահա կերթամ : Ո՛վ Միհր, այս օրն երկընցնոր :

ՏԵՍԻԼ Բ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Ահա՛ւասիկ հասեր յԱնյուշ, Դրաստամատ .
 Ահա ուր տէրդ հի՛նգ տարի է բընակի .
 Այս օթեւան զոր ցանկայիր տեսանել .
 Ո՛հ, ի՛նչպէս մուլթ, ի՛նչպէս տըխուր, ահաւոր . . .
 Ահա շըղթայք՝ որ վաղը քե՛զ կըսպասեն .
 Այս վերջին օ՛րդ ազատութեան . . . ո՛հ, վերջին .
 Վաղը քեզ նո՛ր պիտի մէկ կեանք ըսկըսի,
 Կեանք յուսահատ բանտի, թէ որ կեա՛նք է այն . . .
 Հո՛ս թաղուիլ . . . ողջ մըտնալ ո՛ղջ իգերեզման . . .
 Յայս սոսկալի՛ միայնութեան անընկեր,
 Կընքե՛լ ըզկեանս՝ անյիշատակ եւ անփա՛ռք . . .
 Անյիշատա՞կ . . . չէ՛ . . . ի՞նչ այլ փառք աւելի
 Քան թէ ասեն, « Տիրոջն իր կեա՛նքը տըւաւ . »
 Ի՛նչ յիշատակ այլ մեծ քեզ, ո՛ր Դրաստամատ .

ԱՐԱՐՈՒԱԾ Գ, ՏԵՍԻԼ Գ.

Ձէ. հոս միայն եւ անընկեր չե՛ս մընար .
 Ցաւք եւ շրղթայք տիրոջդ՝ ահա քեզ ընկե՛րք :
 Արիացիր, մի՛ դեդեւիր, ո՛վ սիրտ իմ,
 Սուր չըբերա՛ւ քեզ վախ, շրղթա՞յն կըբերէ . . .
 Լըսէ, ահա քեզ խոստանայ Հայաստան
 Որ Հայք պարծին՝ աշխարհ վըրադ զարմանան . . . (1)
 — Ոտնաձայն է . . . ահաւասիկ է Արշակ . . .
 Ծածկեմք ըզմիտս . . . ո՛վ տէր, դո՛ւ ինքն ինձ օգնէ :

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՇԱԿ, ԴՐԱՍՏԱՄԱՏ, ՍՈՒՐԷՆ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Տէ՛ր իմ արքայ. (ոսֆն իյնալով ու պղտւելով):

ԱՐՇԱԿ.

Արի, իմ խեղճ Դրաստամատ,
 Դո՛ւ այլ ուրեմն ընկար յանել յայս թակարդ . . .
 Ո՞ր քաջութեան յանցանքիդ այս վոխարէն .
 Վասըն զի այս ահաւոր բանտն իյնալու
 Պէտք են վըսեմ յանցանքներ. սէր հայրենեաց,
 Կամ բընի՛կ տերանց լինել անձնանըւէր :
 Ո՞չ եւ խըրո՛խտ անայլայլակ ճակատէդ
 Անմեղութիւն եւ քաջութիւն կըցողան . . .
 Բայց ո՛հ, ինչո՞ւ ես մինչեւ յօրս այս հասայ՝
 Որ եւ ըզքա՛ջն իմ տեսնեմ հո՛ս Դրաստամատ,
 Վերջին պարիսպն ու ախոյեան հայրենեաց . . .

(1) Ոտքի ձայներ կլսուին :

ԱՐՇԱԿ Բ.

Բաւական չէ՞ր իմ իշխանաց քաջագունդ՝
 Որ հինգ տարի բանտիս խորեր կըտանջին:
 Ա՛հ, երբ ջանայ մահ նոցա թիւ նըլազել,
 Նո՛ր զոհերով Շապուհ փուլթայ զայն լընուլ:
 — Անգո՛ւլթ Սուրէն, ի՞նչ լուռ խորշէս զիս առեր,
 Որ իմ դիմաց քաջն իր փառքէ՞ն կողոստես,
 Ու այս հըզո՛ր ձեռքն ալ զարնես իշըղթա՞յս . . .
 Անիծեա՛լ օր . . . ո՛վ, ինձ երբէ՛ք չըծագէր . . .

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ոչ . մանաւանդ օրհնեա՛լ է օրս, արքայ քաջ .
 Ու իմ կենաց մէջ ամենէ՛ն ցանկալի,
 Յոր ոչ միայն փարիմ զոտիւքդ արքունի,
 Այլ եւ հանեմ կոտորեմ իւր հին շըղթաներ: (1)

Ա Ր Շ Ա Կ .

Զինչ այդ . . . երանգ . . . ո՛ւր է շըղթայս . . . ազա՛տ եմ . . .

Ս Ո Ւ Ր Է Ն .

Այո՛, արքայդ Արշակ, ազա՛տ ես այսօր:

Ա Ր Շ Ա Կ .

«Արքայ Արշա՛կ» . . . յԱրտաշա՞տ եմ թէ յԱնյուշ . . .
 Դո՞ւ յիրաւի իմ սիրելին Դրաստամա՛տ՝
 Թէ իւրն ըստուեր . . . խաբկանք են այս, խեղճ Արշակ:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ո՛չ . չեն խաբկանք. հաւատարի՛մ եմ ծառադ,
 Դրաստամատ եմ՝ զոր Տէր պահեց կենդանի՝

(1) Կքակե Արշակայ շըբաները:

Որպէս զի դե՛ռ հող չըմբտած՝ իւր աչքով
Տեսնէ գէթ օ՛ր մըն ալ զարքայն իւր Արշակ,
Գէթ օ՛ր մի լոկ, ու ալ մեռնի՛ խընդութեամբ:

ԱՐՇԱԿ.

Ապա յԱնյուշ իբր յանցաւոր քըշուած չե՞ս . . .
Թէ քեզ Շապհոյ բարկութիւն չէ հոս նետող,
Ո՞վ է ուրեմն. ո՞վ է որ քեզ Դրաստամա՛տ
Այս ահաւոր բանտիս դըռներ կըբանայ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Այս մատանի. — կըճանաչե՞ս, տէ՛ր արքայ.

ԱՐՇԱԿ.

Շապհո՞յ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Այո՛:

ԱՐՇԱԿ.

Ի՞նչպէս:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Պատմեմ քեզ, արքայ:

Այն թըշուառ օրն որ կորսընցուց Հայաստան
Իւր թագաւորն ու պահապան՝ զԱրշակ մեծ,
Մատնութիւն՝ սուրը առած ձեռքն անխընայ
Կոտրեց գերեց ըզքաջս Հայոց տիրասէր:
Ես հրամանաւ քո Անգեղ բերդն ամրացած
Զարքունի գանձ պահպանէի քաջութեամբ.
Բայց քաջութեան ի՞նչ շահ երբ կայ մատնութիւն.
Պարսիկք երկար ատեն երկա՛ր կերած ջարդ,
Երբ բաբաններն ու մանգղիոն վերուցին
Եւ յուսահատ պատրաստէին հեռանալ,

Բերդին ըսպայք կաշառակուրծ իճապհոյ՝
Յանկարծ գիշեր դըռներն իրեն կըբանան,
Ու հեղեղի պէս ներս թափին թըշնամիք:
Երե՛ք օր էր՝ ես քուն չեղած՝ նոյն գիշեր
Իբր ասպահով քիչ մի հանգիստ առնուի.
Բայց իմ քընած ժամուն՝ հըսկէր մատնութիւն.
Հաւատարիմք իմեր զօրաց ունա՛յն տեղ
Դիմակալեն յանկարծահաս թըշնամւոյն:
Աղաղակէն ես արթընցայ՝ ցատքեցի,
Քաշեցի սուրն ու թըշնամեաց գըլուխներ
Ջերդ կարկուտ թընդմամբ դետին թօթափէի.
Այլ բազկէ՛ս տըկար էր սուրն՝ ու կոտրեցաւ,
Լո՛կ այն ատեն կըրցան մօտիլ թըշնամիք.
Կաղաչէի որ զիս զարնէն փողոտեն՝
Որ հայրենեացս ա՛յլ չըտեսնեմ աղէտներ.
Պատկառեցան, տարին պատուով առ Շապուհ:
Նա գանձերուն հետ զիս մէկտեղ որ տեսաւ՝
«Արշակայ բուն գանձը այս քաջն էր» ըսաւ,
Ու հետն առած փութաց դառնալ Պարսկաստան:
Բաժնըլեցայ իհայրենեացն իմ լալով.
Յոյս մը միայն զիմ կոտրած սիրտն ըսփոփէր՝
Թէ զիս ալ հոս դըրկէ Շապուհ կապանօք,
Որով լինիմ վիճակակից քեզ եւ ես,
Եւ ըզվերջին շունչ տամ տիրոջդ իմ հանդէպ:
Բայց այս շընորհք էր զոր չըրաւ ինձ Շապուհ:

Ս Ո Ւ Ր Է Ն.

Երանի քեզ արքայդ Հայոց, որ այսպէս
Ունիս քեզ սիրոս հաւատարիմ ճըշմարիտ,

Որ քան ըզկեանս ընտրեն ըզմահ քո առջեւ,
եւ քո համար մեռնիլ՝ գրբեն անձանց փառս:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Գուժկան հասաւ Շապհոյ՝ թէ ազգ Գուշանաց
Ասպատակաւ այրեն գերեն զաշխարհ քո.
Առաւ բանակն եւ ըզՀայոց գերութիւն,
Ու թըշնամւոյն վերայ վազեց բարկութեամբ:
Երեք անգամ ճակատեցան դէմ ընդդէմ,
Երեք անգամ Պարսք ամօթով յաղթեցան.
Հազիւ կիսով մընաց զօրք՝ այն ալ անյոյս:
Տեսա՛ւ Շապուհ զի յուսահատ էր իւր բաղդ,
Յիշեց յայնժամ ըզգունդ կապեալ Հայ գերեաց,
Ըզքաջ Վահան ու զիս կանչեց առաջի,
Երդուա՛ւ իՄիհր՝ ազատութիւն սլարգեւել
Թէ Գուշանաց արիւն բերեն Հայք փրկան:
Այս որ լըւանք՝ առիւծ դարձանք ամէն մէկ,
Սուր իձեռին՝ հուր իսըրտի գիմեցինք,
Մահ մեզ ճամբայ բանայր իմէջ թըշնամւոյն:
Երբ մեք զաջ թեւ խորտակելով Գուշանաց
Կատաղաբար ընկանք անոնց ետեւէն,
Ողջ զոք գուժկան յիւրեանց աշխարհ չըթողուլ,
Անդին ձախ թեւն առնոյր վըրէժ աջ թեւոյն.
Սովալըլուկ գայլերու պէս՝ որ յանկարծ
Յանպահապան ոչխարաց խումբ յարձակին,
Պարսից բանակն ընկած՝ ընդ սուր հանէին,
Եւ ըզՇապուհ Մատեան գընդին հետ մէկտեղ
Շուրջ փակելով արկին իվտանգ ահագին:
Մըտրակ իկուշտ ձիոյն հասաւ Որմըզդան,

« Հայե՛ր գոչեց, հասէ՛ք, Շապուհ կորընչի,
 « Իձեր բազո՛ւկ է միայն յոյս իւր, հասէ՛ք » :
 Հասանք արագ քան ըզկայծակն ամառոյ յամպ.
 Տեսանք վըտանգն՝ ա՛յլ աւելի քաջացանք.
 Թէպէտ յայգուէ ցերեկ յարիւն ապաժոյժ,
 Բայց իբրու նոր դեռ պատերազմ՝ մըտնէինք՝
 Յարձակեցանք հո՛ն ուր նախճիր գործէր մահ,
 Ու պատերա՛զմը նո՛ր առաւ կերպարան :
 Ինչպէս ամռան կապոյտ եւ ջինջ երկնից դէմք
 Յանկարծ փոխին փոթորկայոյզ եւ նըսեմ՝
 Այսպէս յանկարծ փոխեցաւ բաղդ Քուշանաց .
 Բերանքն հազի՛ւ բացած գոչել « Յաղթու՛թիւն »,
 Հայհոյանօք արձակեցին հառաչանք,
 Ապա՛ մահո՛ւ իկաղկանձիւն փակեցան :
 Հայն իւր վազած տեղ դիակամք կըծածկէր,
 Հայ սուսերէն արեան վըտակք բըխէին :
 Ազատութեան կրակով վահան Մամիկոն
 Քան մարդախանձ վառեալ առիւծ կորդուացի
 Երբ յանկարծ՝ որսոյն վերայ իւր նա շանթի,
 Իսպայակոյտ վազեց ամբոխ Քուշանաց .
 Յաջ եւ յահեակ ցանեց մահունս անհամար,
 Հասաւ նոցին իսկայազօր զօրագլուխ,
 Ու զյաղթու՛թիւնն, աւա՛ղ, գընեց իւր արեամբ :

ԱՐՇԱԿ .

Ասիտո՛ս քաջին, ի՛նչպէս էր ինձ սիրելի.
 Քանի՛ անգամ կեանքն իմ վերայ էր դըրած .
 Փառաւո՛ր կեանք, բայց փառաւո՛ր է եւ մահ . . .
 Թող վահանայ չըմոռցըլի վե՛հ անուն :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ.

Կեցցէ՛ արքայ: — Բազդն առաւել ինձ օգնեց,
 Ու ահաւոր պատերազմին տըւի վերջ,
 Ազատելով իմահուանէ ըզճապուհ,
 Ու զթագաւորն ըսպաննելով Գուշանաց:
 Թէ որ բան մի զիմ ձեռք տըկար զօրացոյց՝
 Արքայ, քո սէրն էր եւ անջինջ յիշատակ.
 Որով եւ յետ պատերազմին, երբ Շապուհ
 Առաջարկեց որ փոխարէն ինձ ընտրեմ
 Գանձ եւ կամ բարձ, նա մանաւանդ գա՛հ եւ թագ,
 Ամէն բանէն աւելի գա՛յս ընտրեցի
 Որ գամ ըզքեզ գէթ օ՛ր մի, օ՛ր մի տեսնեմ.
 Օր մի զարքայդ Արշակ ազատ, յիւրն իփառս,
 Օ՛ր մի . . . ա՛յս օրս . . . եւ այլ ես գո՛հ մեռանիմ:

Ա Ր Շ Ա Կ.

Օր մի տեսնել զԱրշա՛կ . . . օ՞ր մի, Դրաստամատ,
 Դու աւելի՞ ընտրես քան թագ եւ ըզգա՞հ . . . (1)

Ս Ո Ւ Ր Է Ն.

Ո՞վ երբէք, ո՞վ այսպիսի սէր մի լըսեց,
 Ո՞ր ազգ տեսաւ քաջ մի որ թագն եւ ըզգահ
 Օր մի իւր տէ՛րը տեսնելու հետ փոխէ . . .
 Հայե՛ր, դուք, չէ՛, սուլորական դուք մարդ չէ՛ք,
 Դուք դիւցազո՛ւնք էք աննըմանք յաշխարհի:

Ա Ր Շ Ա Կ.

Ո՞վ Դրաստամատ, թէ որ Շապուհ էր որ ինձ
 Այս մէկ օրուան ազատութիւն պարգեւէր՝

(1) Զարմացմամբ վրան կնայի երկար ժամանակ:

ԱՐՇԱԿ Բ.

Իրեն երե՛ս կընեստէի զիւր պարգեւ . . .
 Մա՛հ միայն մա՛հ խընդրեմ իրմէն ինձ պարգեւ . . .
 Բայց քանզի դո՛ւ ես որ ձեռօք տիրասէր
 Այս ժանգահար շրղթան յինէ քակեցեր,
 ես ընդունիմ զայս մէ՛կ օր քո՛յդ ինձ շքնորհ :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Շքնո՞րհք, ո՛հ դո՛ւ ես որ կընես ինձ, արքայ,
 Ընդունելով զիմ այս օրուան աղաչանք .
 Ոհ, ո՛րչափ սիրտ իմ բաբախէր՝ թէ գուցէ
 Տէրդ իմ խընդիրս իբր անարժա՛ն ինչ մերժէ .
 Ներեա՛ արքայ, թերահաւատ երկիւղիս .
 Մեծանձնութիւնդ՝ ո՛հ արժանի է քեզ, տէ՛ր :

Ա Ր Շ Ա Կ .

Ո՛վ Դրաստամատ, օրս այս է գին քո՛յդ կենաց,
 Զարեւուդ լոյս այսօր խառնեմ յիմ արեւ՝
 Որ խոնարհա՛ծ է արդ . . . վերջի՛ն իւր իմուտ :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ո՛հ զայդ արեւ՝ երկինք անմուտ պարգեւեն,
 Իփարատել Հայաստանի սուգ խաւար :

Ա Ր Շ Ա Կ .

Ի՞նչ օր է այս . . . երբ դաւաճան թըշնամիս
 Ալանողան տեսայ առջեւս՝ ու սարտեայ,
 Կըրնայի՞ յուսալ թէ սոյն այս առաւօտ
 Եւ սիրելին իմ տեսանեմ Դրաստամատ :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ալանողան յԱնյո՛ւշ ... ինչպէս ... (առ Սուրեն զարմանալով)

Ս Ո Ւ Ր Է Ն .

Տէրն Արեաց

Հրովարտակաւ ինձ յուղարկեց արքունի,
Որով Շասլուհ շընորհակալ գոհութեամբ
Խոստանայ հատուցանել վարձս արժանի
Հաւատարիմ իմ վաստակոց:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Հո՞ս է դեռ:

Ս Ո Ւ Ր Է Ն .

Վաղիւ կանուխ կելլէ ճամբայ իՏիզբոն,
Բայց յառաջ՝ ունիմ ասէր բանս առանձին
Առ թագաւորն Արշակ յԱրեաց արքայէ:

Ա Ր Շ Ա Կ .

Եւ թագաւորն Արշակ հրաման տայ, Սուրէն,
Որ մի՛ այն վատ համարձակի միւս անգամ
Իմ արքունի փառաց հանդէպ երեւել.
Զայս պատգամ՝ տանի առ տէրն:

Ս Ո Ւ Ր Է Ն .

Քաջ է արքայ: —

Բայց ժա՛մ է, թողումք տըխուր զայս օթեւան,
Ելլե՛մք, արքա՛յ, փառք եւ հանգիստ քե՛զ մընան:

Ա Ր Շ Ա Կ .

Հանգիստ եւ փառք՝ թէ միայն եմ՝ չունին համ.
Ինձ ես կուզեմ այսօր հաղորդ այս տօնի

ԱՐՇԱԿ Բ.

Բոլոր քաջերս՝ որ իշրղթայս կան ներսեր .
 Ի՛նձ հետ մըտին նոքա խաւար յայս կայան ,
 Ի՛նձ հետ կուղեմ ես որ այսօր դուրս ելլեն :
 Գրնացէ՛ք աւետաւոր քաջացն Հայոց :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Հա՛պա , Սուրէն , հրամա՛ն է այս արքայի :

Ս Ո Ւ Ր Է Ն .

Երթա՛մք , հրամանն է Արշակայ արժանի :

ՏԵՍԻԼ Գ.

Ա Ր Շ Ա Կ .

Ի՞նչ արդեօք ի՞նչ նըշանակէ , ո՛վ երկին ,
 Անակընկալ փոփոխութիւն վիճակիս .
 Այս հինգ երկա՛ր տարիներէն յանկարծ վերջ՝
 Ահա ինձ օր մի ցուցանես հանգըստեան ,
 Ինչպէս մըռայլ խաւարի մէջ՝ մէկ նըշոյլ ,
 Եւ կամ յահեղ սառնամանեաց ձըմերան
 Գարնանաբոյր օր մի զըւա՛րթ եւ կապոյտ :
 Բայց ի՞նչ , միթէ շատ չըզգացի՞ մինչեւ ցարդ
 Զիմ ահագին թշուառութիւն , ո՛վ երկին ,
 Որ կըզըրկես երջանկութեան ինչ ճաշակ՝
 Իբր աւելի՛ զգամ բաժակիս դառնութի՛ւն .

Եւ զայս օրուան ազատութիւն ինձ կուտա՞ս
 Որ ծանրագոյն վաղն ինձի դան իմ շրջթա՞յք . . .
 Այսօր ինձ կըդարձընես բընիկ զիմ թագ՝
 Որ աւելի՞ զգամ ճակատուս մերկութիւն . . .
 Բայց ո՛չ. այսչափ դու չե՛ս անգութ, ո՛վ երկին .
 Չայն մի, ձայն մի խորհրդաւոր ինձ լրսեմ .
 «Արշա՛կ, ահա՛ ազատութիւն քեզ եւ թագ .
 «Թէ քաղցր է քեզ՝ մի՛ բաժանիր անոնցմէ : »
 Այո՛, ինձ քաղցր ազատութիւն, ինձ քա՛ղցր է
 Քան պապակեալ շրթթանց՝ աղբիւր կենդանի .
 Քա՛ղցր է ինձ թագ, քա՛ղցր է կենա՛ցս իմ չափով ,
 Առանց թագի՛ լ՛ազատութեան՝ Արշակ չե՛մ . . .
 Յո՛ւշ քեզ Արշակ, աղա՛տ ծընար եւ իթագ ,
 Ինչո՞ւ լինիս մե՛րկ եւ գերի իմահո՞ւղ . . .
 Դու որ բիւրո՛ւց կենաց եղեր իշխեցող՝
 Ի՞նչ, քու կեանքի՞դ միայն պիտի դու չիշխե՞ս . . .
 Ի՞նչ պէտք է քեզ, Արշա՛կ արքայ, վաղուին օր՝
 Երբ քեզ բերէ նա գերութի՛ւն եւ շրջթայս :
 Թըշուառ աւուրք կենացդ են շա՛տ բաւական ,
 Ինչո՞ւ նոցա թիւն յաւելուս տակաւին . . .
 Հա՛պա սիրտ իմ, Արշակա՛յ լեր արժանի ,
 Յոյց որ աղէտք ընկճել ըզքեզ չըկըրցա՛ն .
 Եւ բաղդ որ քեզ կարծէ առնել խաղալիկ՝
 Թո՛ղ ամաչէ՛ տեսեալ զԱրշակ թագաւոր
 Որ երբ ուղէ՛ կըրնա՛յ ելլել իւր ձեռքէն :



ԱՐՇԱԿ Բ.

ՏԵՍԻԼ Ե.

ՆԱԽԱՐԱՐՔՆ, ԴՐԱՍՏԱՄԱՏ, ՍՈՒՐԷՆ, ԱՐՇԱԿ.

ԶԱՐԵՀ.

Տէ՛ր իմ արքայ:

Խ Ո Ս Ր Ո Վ.

Կեցցէ՛ արքայ:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ե Ի Տ Ա Ճ Ա Տ.

Արքա՛յ քաջ: (¹)

ԱՐՇԱԿ.

Ելէ՛ք ելէ՛ք, վիճակակի՛ցք իմ քաջեր,
Զորս հայրենեաց բաղդ մինչեւ ա՛ստ հալածեց.
Ողջո՛յն ձեզի. արիութիւնդ անվրկանդ՝
Զոր ոչ ընդհատ պատերազմաց մէջ եւ հոս
Շրղթաներո՛ւ տակ ցուցուցիք այս հինգ ամ,
Արժանի՛ է անջի՛նջ փառաց յաւիտեան:

ԶԱՐԵՀ.

Փա՛ռք մեզի փա՛ռք մեծ ա՛յն իսկ է, տէր արքայ,
Որ քո վրշտացդ եղանք հաղորդ աստանօր:

Խ Ո Ս Ր Ո Վ.

Ի՛նչ քաջալեր մեծ եւ խրախոյս է սըրտից՝
Գիտել, արքա՛յ, որ դու զմեր սէր ճանաչես,
Գիտել որ ա՛յս շրղթաներուն մեր կըշիռ
Ձէ՛ անձանօթ իքէն՝ եւ ոչ նոցա ժանդ,

(¹) Ամենքն ալ ոտքը կիջնան խանդադատանօք եւ անձկանօք:

Եւ ոչ այն սէր՝ որ աւելի՛ ծանրերու
Փափագ իսիրտ մեր արկանէ՛ քո՛ համար :

Տ Ա Ճ Ա Տ .

Երկաթ շրղթայս՝ ազատ անձանց նախատինք,
Մեզ փառաւոր են իբր ոսկի ապիզակ,
Փառաւոր վասըն սիրոյ քո, տէր արքայ :

Գ Ա Ր Ե Գ Ի Ն .

Եւ այս խաւա՛ր բանտ ուր եմք քեզ բնակակից,
Մեզ համարեալ են արքունի ապարանք,
Շատ աւելի՛ շքեղ քան մեր պալատներ՝
Ուր փափկութիւն ըզկեանրս մեր պարարէր :
Փափկութիւն՝ աստէն չունիմք, բայց աղէ զի՞նչ .
Արքայն Հայոց կայ յառաւել՝ իհանգիստ . . .
Եթէ իսէր ժողովրդեան իւր արքայ
Այս հինգ տարի է չարչարի քաջութեամբ ,
Մեծ ինչ է մեք ալ թէ իսէր հայրենեաց
Եւ արքայիս մեր՝ իրեն հետ վըշտակցի՞մք :

Ա Ր Շ Ա Կ .

Շա՛տ մինչեւ ցարդ չարչարեցայք, ի՛մ քաջեր .
Արքայն ձեր շնորհ ունի վըշտաց եւ սիրոյդ .
Գիտցէ՛ք սըբտին իւր այլ ոչ փո՛քր էր խրախոյս՝
Երբ կը յիշէր որ հայրենեաց նահատակք
Ինչպէս երսո՛ւն տարի՛ փառաց յասպարէս՝
Զինքը մինակ չըթողուցին եւ իվիշտ :
Այո՛, դուք վեհ օրինակաւ ձեր ցուցիք՝
Որ քաջեր կարեն քաղել անմահ դափնիս
Եւ յԱնյո՛ւշ իժանգահար թէ եւ շրղթայս :

ԱՐՇԱԿ Բ.

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ք Ն .

Կեցցէ՛ Արշակ արքայ, կեցցե՛ն հայրենիք:

Ա Ր Շ Ա Կ .

Երկինք այսօր վեհ քաջազին այս ձեռօք ⁽¹⁾

Անակրնկալ վարձ առաքէ կամ պարգեւ,

Օ՛ր մի փառաց եւ հանգըստեան արքունի.

Այսօր Արշակ ո՛չ եւս իբանտ իշրղթայս,

Այսօր Արշակ՝ Հայոց մեծա՛ց է արքայ.

Եւ իբր արքայ՝ ձեր շրղթաներ կըլուծէ: ⁽²⁾

Ազատութիւն քա՛ղցր է սըրտիս այն ատեն

Երբ ազա՛տ են եւ գերեկից իմ քաջեր,

Եւ հանգըստեան յայնժամ առնում ես ճաշակ՝

Երբ եւ ըզձեզ իգոյն տեսնեմ ինձ հաղորդ:

Ջ Ա Ր Ե Հ .

Արքայ, թէ ոչ քու ձե՛ռքդ էին որ ըզմեր

Լուծանէին այս ժանդահար շրղթաներ,

Ո՛չ այսչափ ո՛չ արդեօք մեր սիրտք ցընծային:

Խ Ո Ս Ր Ո Վ .

Այո՛ մեզ քա՛ղցր է յարքունի քո աջէդ

Ազատութեան ընդունել Օ՛ր մի միայն՝

Քան ինձապէ՛ս զազատութիւն մեր կենաց:

Ա Մ Ե Ն Ե Ք Ե Ա Ն (աղաղակաւ.)

Կեցցէ՛ արքայ Արշակ, կեցցէ՛ յաւիտեան:

(1) Յուցանելով գոբրաստամատ:

(2) Նախարարաց շղթաները կսկսի քակել մի առ մի:

ՏԵՍԻՒ, Զ.

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ.

Մ Ի Հ Ր Ա Ն .

Բա՛րէ՛, այս ի՛նչ ուրախալից աղաղակ
 Տըխրագին կամարներէս այս կըթընդան.
 Ահա եւ ես որդի քո, տէ՛ր իմ՝ արքայ,
 Փու՛թամ սըրտիւ ուրախութեամբ պատարուն
 Քաջաց քոց հետ գոչել, «Կեցցէ՛ տէր արքայ»:

Ս Ո Ւ Ր Է Ն .

Ո՞ հաւատայր թէ այս մահու օթեւան՝
 Որ միշտ ողբոց միայն կուտայր արձագանգ,
 Այս բերդ Անյո՛ւշ՝ օր մի լինէր ասպարէզ
 Երջանի՛կ եւ անպատում մեր ցընծութեան.

Մ Ի Հ Ր Ա Ն .

Տէ՛ր իմ՝ արքայ, այս սըխրալի տեսարան
 Կըբերէ՞ արդեօք իյուշ զորդւոյդ երազ . . .
 Տե՛ս, ոհ տես, ի՛նչպէս լըցաւ կատարեալ, տէր
 Զոր ինչ աստուածք աւետեցին գըթասէր:

Ա Ր Շ Ա Կ .

Այո՛, որդեա՛կ Միհրան, երազ քո լըցաւ,
 Այսուհետեւ մընայ որ ի՛մս այլ լըցուի . . .
 Եւ կըլըցուի՛, ինչպէս քոյդ — իմս ալ . . . շուտո՛վ . . .

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Աղէ՛, արքա՛յ, թողո՛ւմք տըխուր զայս կայան.
 Արեւ եւ օդ, հրճուանք հանդէսք բերկրութեան
 Նախանձընդդէմ՝ քեզ ըսպասեն արտաքոյ:

ԱՐՇԱԿ Բ.

ԱՐՇԱԿ .

Այո՛, թողո՛ւմ ըզքեզ, թողո՛ւմ ո՛վ խըշտեակ
 Որ հինգ տարի ասպընջական ինձ եղեր,
 Թողո՛ւմ ըզքեզ արցունքներո՛վս ուռզուած . . .
 Թողո՛ւմ լըցուա՛ծ իձայն ողբո՛ցս հեծութեանց
 Ու շրղթայիս շառաչմամբ տիւ եւ գիշեր . . .
 Ոհ այդ ձայներ չըկորսըւի՛ն յաւիտեան . . . —
 Բայց ահա գնամ. ազատութի՛ւն զիս կոչէ
 Ազատութիւն . . . երկնատո՛ւր ազատութիւն .
 Հա՛պա քաջեր, յազատութիւն փութացէք :

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ք Ն . (1)

Ազատութի՛ւն, երկնատո՛ւր ազատութիւն :



(1) Շղթաները կոխկառուելով ու շառաչեցընելով պիտի գոչեն :

ԱՐԱՐՈՒԱԾ Դ, ՏԵՍԻԼ Ա.



Տեսարանը կներկայացրնէ ծառագարդ պարսեզ: Քիչ մի հե-
 ոուն կսեսնուի քարճարքերճ մայրեաց մեջ Անյուշ քերդը:
 Միւս կողմը կանաչագեղ բլուրներ, որոց ոսփին սակ բիւ-
 րեղափայլ սոռուակ մի կվագե, ու կերթայ կկորսուի դիմացի
 քաւ անսառիկ մեջ: Երկինքը պայծառ, կապոյտ:

ՏԵՍԻԼ Ա.

ՄԻՀՐԱՆ, ԴՐԱՍՏԱՄԱՏ.

ՄԻՀՐԱՆ.



Երեա, ո՛վ քաջ, այո՛ հօրմէս ոչ ընդհատ
 ՉԱրշակ արքայ՝ հաւատա՛ ինձ, ես սիրեմ.
 Իրեն աղէտք այնպէս են ծանր, այնպէս մեծ
 Որ ամեն սիրտ պէտք է լինի կարեկից:
 Չէ, ո՛վ կըրնայ լըսել ըզճայն շըղթայից,
 Տեսնել նորա այս հինգ տարուան տառապանք,
 Տեսնել Հայոց ըզմեծայաղթ թագաւոր՝

Այսպիսի՛ ողորմելի վիճակ ընկած՝
 Ու չըխառնել կաթիլ մի իւր արցունքին,
 Կամ խըղզուկ հե՛ծ մի նորա խո՛ր հեծութեանց:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Այդ քո խօսքեր՝ պատի՛ւ են քեզ, ո՛ Միհրան.
 Ու ցուցանեն թէ՛ զո՛ր ազնիւ ունիս սիրտ.
 Բայց եւ առանց քո պատմութեանց ու խօսքիդ՝
 Խելամո՛լտ եմ քո սիրալիւր ըզգացմանց.
 Փոքր իշատէ պատմեց ինձ ա՛յսօր արքայ
 Ո՛րչափ ծածուկ իրեն ցուցեր հոգ եւ սէր.
 Բայց եւ իւր սէր՝ քո սիրոյն հետ կըմըրցի,
 Ու զքեզ յետին իւր նա կոչէ ըստփանք:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Ի՛նչ աւելի ինձ քան ըզգոյն փոխարէն,
 Ի՛նչ մեծագոյն քան զայդ պատիւ Միհրանայ.
 Ո՛հ, ո՛չ միոյն եմ ոչ միւսումն արժանի:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Արժանի՛ քեզ ե՛ւ փոխարէնն եւ պատիւ:
 Բայց ո՞վ կըրնայ սիրոյ դընել չափ, Միհրան.
 Եւ քեզ միթէ՛ չէ՞ կարելի որ այլ եւս
 Թէ՛ արքայի ցուցանես սէր մեծագոյն,
 Եւ թէ՛ զչայոց ընդունիս մեծ գոհութիւն:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Ո՛հ, եւ ո՞ր այն հընարքն իցէ, բարեկա՛մ,
 Ասա՛, ուսո՛ ինձ աղաչեմ, մի՛ ծածկեր,
 Գիտցի՛ր ես զայդ՝ բոլո՛ր սըրտով փափագիմ:

ԱՐԱՐՈՒԱԾ Դ, ՏԵՍԻԼ Ա.

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ըայց գուցէ չէ այնչափ դիւրին, ո՛ր Միհրան:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Սիրոյ առջեւ դըժուարին բան գըտանի՞ր.

Ի՞նչ դըժուար բա՛ն կայ զոր իսէր Արշակայ

Միհրան չուզէ յանձն առնուլ, ո՛ր Դրասաամատ . . .

Ասա՛, ի՞նչ զոհ պէտք է ընեմ . . . զարի՞ւն իմ.

Բոլոր սիրով ես զայն իրեն նըւիրեմ:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Չէ՛ Միհրան, չէ. զայդ քեզմէ Հայք ոչ խընդրեն.

Այդ ծանրը զոհ չէ ցանկալի Արշակայ.

Օգնէ՛ միայն, ձեռք տուր սըրախ խորհըրդոյն,

Ու ա՛յնպէս մեծ ծառայութիւն մի կընես՝

Որ հաւասա՛ր է նըւիրման քո՛յդ արեան.

Չա՛յդ քեզմէ Հայք ահա խընդրեն եւ Արշակ:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Հայք եւ արքայ կարե՛ն լինել ապահով՝

Որ ձեռք եւ սիրտ եւ միտք իրենց նըւիրեմ:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ապա ուրեմըն լո՛ւր ազնիւ պատանի .

Ահա ծածուկ քեզ իմ խորհուրդ եւ խընդիր: (1)

Կեանք եւ արիւն զոր ինձ տըւին հայրենիք՝

Ո՞չ ապաքէն նոցա՛ է ե՛րբ եւ ուզեն.

(1) Չորս կողմը նայելով որ մարդ ջլինի ու խօսածը ջլսէ:

Կեանքս եւ արիւն՝ արդ օրն հասած է՝ կուզե՛ն:
 Զիս հոս բերող՝ Հայաստանեա՛յցն է Ոգի.
 Նա՛ հրամայէ որ ես յօգուտ հայրենեաց
 Այս ահաւոր բանտին խորերը թաղուիմ . . .
 Ու կուզէ ի՛մ տեղ գնայ Արշակ Հայաստան . . .
 Պատրաստ եմ նորա հրաման ես կատարել,
 Բայց պէտք է որ դու այլ օգնես ինձ, Միհրան:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Ի՞նչ պէս:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Լըսէ. երբ արեւ մար կըմըտնէ
 Ու գիշերուան տարածուին սե՛ւ ըստուերներ ,
 Արշակ լօղիկս հագած եւ զիմ սաղաւարտ ,
 Հաւատարիմ իմ զինակրիս հետ մէկտեղ
 Լըռիկ մընջիկ բերդին դըռներ կըհասնի :
 Դու պահապանքն հեռացնելով՝ պատճառաւ ,
 Դըռներն իրեն դիմաց մեղմով կըբանաս .
 Մէյմ՝ որ խրամէն անցնի՝ ազա՛տ է Արշակ :
 Հոն հինգ քաջ Հայք ծըպտեալ իրեն կըսպասեն
 Որ Արքային վերայ դըրած են կեանքեր .
 Ո՞վ տիրասէր Հայոց կըրնայ դէմ դընել : —
 Ո՛հ, ես այժմէն ահա տեսնեմ եւ լըսեմ
 Խեղճ հայրենեացս անպատմելի բերկրութիւն՝
 Երբ առջեւնին տեսնեն զարքայն սիրելի
 Որ գայ իրենց Ազատութիւն պարգեւել . . .
 Ո՛րչափ բերան քեզ պիտի տան օրհնութիւն ,
 Ո՛րչափ մայրեր իրենց որդւոցն եւ թուանց

Պիտի զանուէն սուրբեցընեն Միհրանայ . . .
 Ո՛րչափ քեզ Հայ նախանձեցցին պատանիք
 Ո՛րչափ պատճառ պիտի լինիս քաջութեանց . . .
 Ո՛րչափ վախճան անօրինակ խեղճութեանց . . .
 Ասան, Միհրան, այդ փառաց ո՛չ փափաքես:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Բա՛ւ է, ո՛հ, բա՛ւ . . . սիրտս իծոցէս դուրս վազէ . . .
 Փութա՛մք, փութա՛մք ⁽¹⁾ յազատութիւն Արշակայ:
 Բայց Դրաստամատ . . . ⁽²⁾ յանկարծ յիս վախ մի կուգայ.
 Ալանողան գիտես բերդն է, մի՞ արդեօք
 Հօրն իմ կենաց այս գործ լինի մահաբեր:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ոչ, մի վախնար. Արշա՛կ միայն, դո՛ւ եւ ես
 Պիտի գիտնամք ըզմեր ծածուկ այս խորհուրդ.
 Երդուած է հայրդ հաւատարիմ կալ Շապհոյ,
 Եւ ես չուզեմ առնել ըզնա երդմնազանց.
 Ուստի՞ կըրնայ Ալանողան կասկածել
 Թէ այս բանիս մէջ մատն ունի հայր քոյին,
 Երբ ծերունին՝ այս հի՛նգ տարի իւր պաշտօն
 Հաւատարիմ յոյժ ճըշգութեամբ կատարեց.
 Այնչափ տարի ձեռքն էր Արշակ՝ չազատեց,
 Միթէ ա՞յսօր իւր միտն անկաւ այս խորհուրդ,
 Ա՞յսօր՝ մինչ աստ Ալանողանն է անգութ,
 Ա՞յսօր յոր տէրն Արեաց փառօք եւ պատուով

(1) Շարժմունք կրնէ երբայրու:

(2) Կանգ կառնու:

ԱՐՇԱԿ Բ.

Հաւատարիմ ծառայութեանց փոխարէն՝
 Հըրովարտակ կուտայ խոստմամբ մեծամեծ:
 Ոչ, Սուրենայ վերայ կասկած չէ կարող.
 Մանաւանդ՝ որ ես յայտնի անպատրըւակ
 Կը յայտնեմ՝ թէ դաւոյն ե՛ս եմ առաջնորդ:
 Ալանոզան — թող երբ ելնէ որս ձեռքէն —
 Դրաստամատայ վերայ թափէ բոլոր վրէժ:
 Հա՛պա փութամք, դո՛ւ զգիշերուանն յարմարել,
 Եւ ես զԱրշակ իմեր խորհուրդ համոզել:

Մ Ի Հ Ր Ա Ն .

Երկի՛նք, սըրտից մեր ուղղութեանն օգնեցէք: (կելնեն)

ՏԵՍԻԼ Բ.

Ա Լ Ա Ն Ո Ջ Ա Ն . (1)

Է՛հ, փութացէք ... անմիտք, մատնիչք, փութացէք ...
 Հա՛պա յիմարք, իձեր կորո՛ւստ վազեցէք.
 Բոլոր երկի՛նք ձեզ կոչեցէ՛ք յօգնութիւն,
 Տեսնեմք ըզձեզ ո՞վ ձեռքէս, ո՞վ ազատէ: —
 Այո՛, դու զքեզ անձամբ անձին Դրաստամատ,
 Գահավիժես իխորխորա՛տ կորըստեան.
 Անմի՛տ, դո՛ւ ինքն ըզքեզ յԱնյուշ ձրգեցեր
 Որ մի՛ եւս այլ ասկէ չելնես յաւիտեան.
 Այլ հո՛ս փրտտիս, հոս Արշակայ հետ կորչի՛ս:

(1) Ալանոզան գաղտագողի դուրս կելնէ ծառերուն ետեւէն ուր պահուրտած էր, ու պիտելով նոցա հեռանալը, ասէ:

Դու կարծէիր թէ այս լըռին ծառոց տակ
 Քո դաւաճան լըսող խորհուրդըդ չըկայր.
 Բայց անմիտ Հայ, Ալանոզան հո՛ս է, հո՛ս,
 նա քո ամէն քայլիդ վերայ կըհըսկէր,
 ու վերջապէս հասաւ նա իւր բաղձանքին.
 Ա՛լ ճիրանանցըս մէջ առի եւ ըզքեզ . . .
 — Երկի՛նք, ո՛հ, ե՞րբ պիտի ասոնց պէս օր մ՛ալ
 Բոլոր Հայերն առնում իմէջ այս ձեռաց,
 ու հո՛ս նետեմ ողջ ողջ զանոնք գերեզման . . .
 Եւ կամ պատա՛ռ պատառ առնեմ զայր եւ կին,
 ու ծըխաշունչ սըրտերնին դո՛ւրս քաշելով
 Ամէ՛ն մէկն այլ նըլիրեմ հօ՛րս ըստուերին՝
 Որ զոհ կորեաւ անագորո՛յնն Արշակայ . . .
 Ուրա՛խ լեր հա՛յր իմ Անդեկան, ուրա՛խ լեր.
 Այո՛ մեռար՝ բայց ո՞ղջ է ողջ քո որդին.
 Մինչչե՛ւ վըրէժդ առած՝ նա ո՛չ, չլմեռնիր: (կեղևե)

ՏԵՍԻՒ, Գ.

ԱՐՇԱԿ, ԴՐԱՍՏԱՄՍԱՏ. (1)

ԱՐՇԱԿ. (2)

Թող Դրաստամատ, թո՛ղ իմ քաջաց հետ մէկտեղ
 Քիչ մի ազատ օղն ու դալար վայելեմ.

(1) Արշակ ու Դրաստամատ պետք է միւս կողմէն մտանեն, եւ ոչ այն կողմէն ուսկից ելաւ Ալանոզան:

(2) Արշակ բանտի զգեստները բողած պիտի լինի ու բազաւորական հանդերձ հագած, գլուխն ալ Արշակունեաց բազ:

ԱՐՇԱԿ Բ.

Զիս նոցանէ ինչո՞ւ զատես, բարեկա՛մ .
 Հիմ չըթողուս որ թափառիմք արշաւեմք
 Յայս գեղազուարճ մարգագետին ու բլուր,
 Ու երէոց իյնամք սուրամք ետեւէն,
 Իբրեւ թէ մեր Խոսրովակերտ լինէինք,
 Կամ Հաշտենից ըստուերազարդ անտառներ :

Դ Ր Ա Ս Ս Ա Մ Ա Տ .

Բա՛յց կարեւոր խորհուրդ մի, տէր . . .

Ա Ր Շ Ա Կ .

Կարեւո՞ր . . .

Զի՞նչ կարեւոր քան ցանկալին բընութիւն,
 Քան ըզսլայծառս այս կենսատուր արեգակ . . .
 Քան զայս անբաւ երկնից կամար կապուտակ . . .
 Քան զանպարոյր այս եւ ազա՛տ հորիզոն . . .
 Քան վեր ու վար այս ծիծաղուն բլուրներ . . .
 Քան բարձրածայր սաղարթախիտ այս ծառեր . . .
 Քան հեզաճեմ բիւրեղափայլ այդ ջրեր . . .
 Քան զայդ թրուչնոց ուրախաձայն ճրուողել . . .
 Քան սուրբ զայս օդ . . . քան լուսախառն հովանիս . . .

Դ Ր Ա Ս Ս Ա Մ Ա Տ .

Բայց, տէր արքայ . . .

Ա Ր Շ Ա Կ .

Հի՛նգ տարի է, հի՛նգ տարի
 Որ այս աչերս իբրեւ ըզկոյր մի թըշուառ՝
 Կարօ՛տ, կարօ՛տ են արեւուն նըշուլից .
 Հի՛նգ տարի՛ է այս մաքուր օդ չեմ ծըծեր,

Ու սիրտ իմ չէ ընդարձակեր յերկնից տես . . .
 Հինգ տարի է թըռչնոյ մի ձայն չե՛մ լրսեր,
 Ոչ զեփիւռին տերեւաշարժ խըշըլտոց,
 Ոչ առուակի մի կարկաջել հեշտալուր . . .
 Շըղթայի՛ ձայն, միայն ահեղ շըղթայի՛
 Խառն ընդ ողբոց եւ յուսահատ արտասուաց՝
 Ականջներս թընդացուցեր են հինգ տարի,
 Ու հինգ տարի բիբս իխաւա՛ր է բացուեր:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Կաղաչե՛մ, տէր . . .

Ա Ր Շ Ա Կ . (Պ)

Նայէ՛, նայէ յայդ արծիւ,
 Ի՞նչպէս ազատ բացած թեւեր ճախրասլաց՝
 Անհուն երկնից մէջ երջանիկ խոյանայ . . .
 Այդ իմ հոգի՛ն է ազատ յիւր կապանաց.
 Սլանայ վակժոյժ յիմ ցանկալին Հայաստան . . .
 Արծի՛ւ, բարե՛ւ մի տուր Հայոց լեռներուն,
 Ասա՛, Արշա՛կն եմ ես՝ պըսակըն նոցա.
 Թող վերցընեն ըզտըխրութեան մըռայլ քօղ.
 Հայոց պըսակն եւ արեգակ կըրդառնայ . . .
 Տո՛ւր աւետիս, գոչէ Մասիս, ձո՛րք խայտա՛ն.
 Արշակ ազա՛տ է, թագաւո՛ր է Արշակ . . .
 — Արշակ ազա՛տ . . . Ի՞նչպէս . . . Արշակ թագաւո՛ր . . .
 Իրա՛ւ ճակատս յԱրշակունեան պատի՞ թագ . . .

(Պ) Երկինք նայելով ու ցաւցանելով:



ԱՐՇԱԿ Բ.

Իրաւ՝ ծառերն են այս, երկինք, արեգակ՝
Թէ գիշերուա՞ն երազ . . . կամ ցնո՞րք անկայուն . . .
Ասա, ասա՛ ինձ բարեկամ, հոս բանտ չէ՞:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Ո՛չ, տէր արքայ. ոչ, այս բանտին չեն սլատեր.
Երկինք է սա՛ հովանացեալ վեհ գլխոյդ.
Եւ այդ՝ արփի որ քեզ իժմիտ տայ ողջոյն.
Ազա՛տ ես դու, արքայ, ո՛չ եւս այլ իբանտ:

ԱՐՇԱԿ.

Ազա՞տ . . . արքա՞յ . . . է՛հ ի՞նչ, եւ դո՞ւ բարեկամ
Սըրտիս ըղձիցն ընկերես զիս շողովե՞լ . . .
Անո՛յշ ցընորք որ շո՛յտ յաչաց իմ սրանան.
Սըրտիս թեւեր կիյնան իբեռ շըղթայից,
Ու մռայլ բանտիս՝ զարեւ յաչացս ըսքօղէ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Մոռցի՛ր, արքայ, մոռցի՛ր շըղթայն եւ ըզբանտ.
Յո՛ւշ քեզ միայն հայրենիք՝ փառք եւ գահոյք:

ԱՐՇԱԿ.

Գա՛հ . . . հայրենի՞ք . . . հետախաղա՛ղ հեռացա՞ն.
Իսկ բանտս ահա՛, յինէ երկու քայլ հեռու . . .
Իզո՛ւր ջանան այս կանաչ ծառք զայն ծածկել.
Կըրնան ծածկել եւ իմըտացն իմ աչաց:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Բայց քեզ՝ երկինք բանտին դըռները բացին:

ԱՐԱՐՈՒԱԾ Դ, ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՇԱԿ.

Երկնից նոր խաղ մի պէտք էր, ա՛յն այլ ըրին:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Սակայն երկինք հաշտ քեզ հային, տէր արքայ:

ԱՐՇԱԿ.

Մահուա՛մբս եւեթ երկնից վըրէժ կըլմըննայ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Երկնից թէ վրէժ պէտք է՝ ահա գըլուխ իմ:

ԱՐՇԱԿ.

Պէտք է անգութ ճակատագրիս հետեւիմ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Թագաւորաց ճակատագիրն, արքայ՛ք քաջ,

է մեռանել թագ իգըլուխ՝ իգահոյս.

Հայր մի յորդւոց իւր իբազուկ մեռանի,

եւ թագաւոր՝ ժողովըրդեան իւր իգիրկ:

ԱՐՇԱԿ.

Ժողովո՛ւրդ . . . թա՞գ . . . որդիք . . . երկինք խըլեցին:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Բայց ո՞չ այսօր երկինք դարձեալ շնորհեցին: —

Ժա՛մ է արքայ որ արդ լրսես ծառայիդ.

Նա մանաւանդ՝ լրսես շըրթա՛մբս իմ երկնից:

Ի՞նչ, տէր արքայ, միթէ որ ետն իմարտի

Ըզյաղթութիւն իդողդոջուն իմ քազուկ,

ԱՐՇԱԿ Բ.

Եւ ըզՆապհոյ անագորոյն սիրտն ու միտ
 Անլուր խընդրոյս ետ զիջանել անընդդէմ,
 Ու ինձ մինչ աստ առաջնորդեց անվրտանգ,
 Անո՞ր համար էր զի օ՛ր մի քեզ խաբէ՛
 Ու միւսանգամ նետէ յանդուհդ խաւարի՞ . . .
 Ոչ. անարժա՛ն է այդ երկնից գըթութեան,
 Երկնից՝ որ վրէժ միայն առնու իջարա՛ց,
 Ոչ յԱրշակայ՝ զոր ողբայ ազգ մի ողջոյն,
 Եւ ըսպասէ իբրեւ փըրկիչ հայրենեաց:
 Ոչ ըզքեզ ոչ, ըզՀայաստա՛ն պատժեց Տէր,
 Իւր թագաւորն յանկարծ իրմէ կորզելով.
 Եւ զի պատժոց Հայաստանի լըցաւ չափ,
 Զիս կըղըրկէ երկին առ քեզ հրաւիրակ:
 Հնապա փութա, արքայդ Հայոց, յաթոռ քո.
 Թո՛ղ զայս տըխուր ու մահաստուեր բնակարան:

Ա Ր Շ Ա Կ .

Դրաստամանտ, եթէ դըրուհք Անյուշ բերդին
 Դիւրաւ Նապհոյ մատանւոյն դէմ քեզ բացան,
 Արշակայ ո՞վ կարող բանալ իփախուստ:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Նոյն մատանի. բայց սակայն տէ՛ր իմ արքայ,
 Ոչ եթէ մեծ ինչ պէտք ունիս դու առ այն.
 Մինչ իգիշեր՝ ըզպահակալըս դըրան
 Կըհեռացնէ եւ կամ գինւով կըմեղկէ
 Միհրան ազնիւ եւ սիրելին պատանի,
 Որ շարժեալ յի՛մս յորդոր — յաւէ՛տ իսիրոյդ — ,

Քեզ իխաւար գիշերի հոն կըսպասէ.
 Եւ որպէս զի Ալանոզան եւ Սուրէն
 Կասկածի տեղի իմիտ յանկարծ չառնեն՝
 Արքայ ծածկի յիմ սաղաւարտ եւ լօղիկ,
 Եւ անվըրդով ըզգուշութեամբ դուրս կեննէ.
 Քաջք հոն ծրպտեալք իդարանի քեզ մընան՝
 Աշոտ, Վարդան, Կոռնակ, Վըստամ եւ Տիգրան,
 Որ ցըվերջին արեան կաթիլ խոստանան
 Եւ զյետին շունչ՝ նըւիրեալ տեառն արքայի.
 Եւ երբ սրանայք դուք դէպ իՀայս զերդ կայծակ՝
 Ես իբանտին՝ նախարարօք հարեալ ծափ
 ԶԱլանոզան եւ ըզճապուհ ծաղր առնեմք,
 Ըզփըրկութիւն Հայաստանեայց երգելով,
 Ու շըղթայիւք թընդացուցեալ ըզմեր բանտ:
 — Ահա խորհուրդ զոր կամէի յայտնել, տէր,
 Եւ յոր, ներեա՛, քեզ յիշխանաց զատեցի:
 Պահեմք ծածուկ, գիշեր լիցի օգնական,
 Բայց մեծագոյն օգնական յոյս՝ ի՛նքն Աստուած:
 — Այլ զի է, տէր, դու կաս լըռիկ, մըտայոյ՞զ . . .
 Զըտանս նըշան մի արքունիդ հաճութեան՝
 Յուրախութիւն հաւատարիմ ծառայիդ
 Ահ, խօսեա՛, տէր. մի՛ զիմ սիրտ մի՛ վըշտագներ.
 Ինձ հետ բոլոր Հայք ըսպասեն պատգամիդ:

ԱՐՇԱԿ.

Ծանր է ինձ, ո՛հ, ծանր է ինձ տալ զայդ պատգամ . . .
 Սէրդ ինձ հաճոյ՛ բայց անհաճոյ քո խընդիր.
 Աղատութիւն՝ ինձ ցանկալի է, այո՛,

ԱՐՇԱԿ Բ.

Բայց ոչ եթէ ազնիւ արեա՛նըդ գընով :
Թէ շըղթայից եւ բանտիս զո՛հ մի պիտի ,
Հիմ յայսմհետէ՛ ալ չիցէ զոհն այն Արշակ :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Քանզի Արշակ կարեւո՛ր է հայրենեաց .

Ա Ր Շ Ա Կ .

Բայց հայրենիք զիս մոռացան :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Ոչ այդպէս .

Ինքն է որ քո անգին կենաց փոխանակ
Զոհ այսօր՝ ըզրաստամատ հոս հրամայէ .
Հինգ տարի՛ է քեզ ըսպասէ անձկանօք ,
Ըզքո անուն խառնէ յիւր ողբ եւ իյոյս ,
Պատերազմաց մէջ վառի վեհ քո յանուն ,
Ու զթըշնամիս իծոց մահուն թաւալէ
« Առ Արշա՛կ քաջ զո՛հ երթիջիր » գոչելով :
Ո՛հ , հայրենիք մոռցան ըզքեզ ասես , տէր ,
Եւ զայդ՝ առջեւ անձնանըւէր ծառայիդ . . .

Ա Ր Շ Ա Կ .

Բայց եւ ինչպէս զայդպիսւոյդ կեանս անխայեմ . . .
Ի՞նչպէս վըրադ չողորմիմ , ո՛վ Դրաստամատ . . .
Ի՞նչպէս քո սէր՝ իմ այս սըրտիս չըխօսի . . .

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Իսկ հայրենեաց սըրտառուչ ձայն ո՛չ խօսի . . .
Ո՛հ , դիւրազգաց վըսեմ այդ սիրտ Արշակայ՝

Որ գորովի այնպէս ինուաստ իւր ծառայ,
 Ի՞նչպէս կըրնայ փակել ըզգութ եւ գորով
 Յաղիողորմ իձայն թըշուառ հայրենեաց :
 Այդ ձայն որբոց է՝ զորոց թուր տարաւ հայր . . .
 Այդ ձայն հարսանց՝ որոց փեսայք տարաժամ
 Պարսից ձեռքով իբրեւ ըզխոտ հընձեցան . . .
 Այդ ձայն ծերո՛ց է որ մնացին աննեցուկ . . .
 Ճիչ բազմաժի՛ն մարց՝ որ չունին այլ որդիս . . .
 Այդ ձա՛յն աղջկանց, ձա՛յն եղբարց, ձա՛յն քոյրերու
 Որ գողգոջո՛ւն բազկօք, աչօք յորդահոս,
 Հինգ տարի է՝ ողբան, գոչեն գըթութիւն . . .
 Եւ դու, արքայ, դո՛ւ միայն զայդ չըլլսես :

ԱՐՇԱԿ.

Աւանդ . . .

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Ի՞նչ է. իմ կենանց տէր, ողորմիս .
 Եւ բիւրաւոր այն անմեղաց չողորմիս .
 Թէ հայրենիք կենդանանան իմ մահուամբ՝
 Ուրախութեամբ մահուան դիմաց կըվազեմ :

ԱՐՇԱԿ.

Ա՛հ, Դրաստամատ, այս որպիսի յիս տագնապ . . .
 Սիրտ իմ ծըփի . . . հայրենիք . . . գահ . . . բարեկամ . . .

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Ըզբարեկամն՝ ո՛վ տէր, զոհէ հայրենեաց : —
 Բայց թէ իմ ոչ դեռ զօրեցին աղաչանք ,

Թէ հայրենեաց ձայն ոչ շարժէ ըզսիրտ քո ,
 Ո՛հ , շարժէ զայն , շարժէ ըզսիրտ քո , արքայ ,
 նախանձ վե՛հ օրինակին Փառանձեմայ .
 Փառանձեմայ՝ արիասիրտ թագուհւոյդ ,
 Որ Արտագերս բերդին մէջ այս հինգ տարի
 Մահուան հետ պատերազմի տիւ եւ գիշեր ,
 Ամէն օր ըսպասելով որ գայ Արշակ ,
 Ու տայ իրեն՝ հայրենեաց հետ՝ փրկութիւն :
 Բայց այդ յոյս՝ ալ իւր վերջին հասաւ սահման .
 Ա՛լ թագուհւոյն կըսկըսի սիրտ լըքանել ,
 Ա՛լ յողնեցա՛ն աչերն այն կողմ՝ նայելէ
 Ուստի յուսայր՝ Արշակ վազէ իրեն գիրկ ,
 Պարսկական դիակներու շեղջակուտէն .
 Ա՛լ թըշնամիք վըստահութեամբ լըրբացեալ՝
 Ոչ միայն անլուր լուտա՛նըս ըզգայուեն
 Ա.ու զարմանա՛ց արժանի մեծ թագուհին ,
 Ա.յլ բերդին դըրանց առջեւ — ահեղ տեսիլ —
 Ցից սայրասուր ցըցուեալ՝ գազա՛նք խուժադուժ ,
 Ըսպառնա՛ն այն ահաւո՛ր փայտին վերայ
 Կորուսանել ծա՛ղր ու ծանակ բանակին
 Այն գեղաղէջ այն սըրբասէր թագուհին :
 — Ա՛հ , իմ քըստմնին ոսկերք . . . եւ դու , արքայ քաջ ,
 Դու յայս տեսիլ՝ անայլայլակ . . . անխըռով . . .
 Դու զյուսահատ կարէս լըսել հեծութիւն
 Զոր իխորո՛ց սըրտի հանէ Փառանձեմ . . .

ԱՐՇԱԿ (յուսահատ ձայնով .)

Փառանձեմ ո՞ղջ . . . հատորն ոգւոյս Փառանձեմ . . .

ԱՐԱՐՈՒԱԾ Դ, ՏԵՍԻԼ Դ.

Դ Ր Ս Ս Տ Ա Մ Ա Տ .

Փառանձեմ՝ վրրէժ գոչէ, վրրէժ, արքայ . . .

Ո՞վ ըզնորա առնու վրրէժ, ո՞վ . . .

Ա Ր Շ Ա Կ .

Արշակ . . . —

Ինձ այն, ինձ միայն փա՛ռքն այն, Փառանձեմ . . .

— Երկինք, թէ զիս ցարդ պահեցիք կենդանի

Զի վրէժն առնում Փառանձեմայ . . . պատրա՛ստ եմ:

Դ Ր Ս Ս Տ Ա Մ Ա Տ .

Կեցցէ արքայ: Ահա զԱրշակ ճանաչեմ:

ՏԵՍԻԼ Դ.

Ս Ո Ւ Ր Է Ն Ե Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ք Ն

(որսական պատրաստութեամբք, զիևու, զարդու.)

Ս Ո Ւ Ր Է Ն .

Տէր արքայ, ահա որոց պատրաստութիւնք.

Ամենայն ինչ կազմ է. մընամք հրամանիդ.

Ա Ր Շ Ա Կ .

Երթամք, Սուրէն, ըսթափել սիրտ եւ զոգի:

Տ Ա Ճ Ա Տ . (1)

Ընկալ, արքա՛յդ Հայոց, կապարճ եւ աղեղ

ՅԱրժրունի նախարարէն քո Տաճասայ.

Ի՞մ էր այս պաշտօն եւ փառք իհայրենիս . . .

(1) Աղեղ ու կապարճ ընծայելով Արշակայ:

ԱՐՇԱԿ Բ.

ԱՐՇԱԿ (ընդունելով.)

Ո՛վ հայրենեաց մեր փառաւոր յիշատակք . . .

ԶԱՐԵՀ.

Տեսնես Սուրէն, եւ զարմանաս դու այսօր՝
Ընդ շեշտ հարուածս եւ քաջութիւն արքայի :

ՏԱՃԱՏ.

Արքայի նետ եւ իմազէ չըվրիպի :

ԽՈՍՐՈՎ.

Եւ ո՞ կարող համրել ըզթիւ հարուածոց
Զոր իվայրկեան ժամանակի տայ արքայ :

ԱՐՇԱԿ.

Էհ, բայց անցա՛ն այն տարիներ, ո՛վ իմ քաջք . . .
Արշակ ո՛չ եւս է ինախկին փառս . . . եւ ոյժ :

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Երկինք նորէն աէր շընորհեն փառք եւ ոյժ :

ԱՐՇԱԿ.

Հա՛պա խրախոյս առէք, ով քաջք, երգեցէք
Մեր եռանդուն նըլազս իգլուխ անդ որսոց .
Թող հայկական ոգենորոգ մեր երգոց
Օտար բըլուրք եւ անապատ տացեն գանդ :

Ե Ր Գ

Ո Ր Ս Ո Յ (*).

1.

Հա՛պա քաջազունք,
 Հայո՛ց զաւակունք,
 Առէք աղեղունք
 Իմահ երագունք.

Անտառք ըսպասեն
 Կենդանիք սարսեն
 Զինուցդ իծայնէն.

Շեշտակի նետեր
 Թափեցէք քաջեր
 Յերէս անվեհեր:

2.

Վազեմք ուր վրտանգ,
 Ա՛յս մեր ըզբօսանք.
 Որսոց արշաւանք՝
 Մարտի՛ց են կըրթանք:
 Երթա՛մք գունդ իգունդ,
 Յաղեղ եւ մըկունդ,
 Յուսով սըրտաթունդ.

Շամփրե՛մք կենդանիս,
 Իբո՛ւ ըզթըշնամիս
 Իմեր հայրենիս:


(1) Նախարարք երգելով կամաց կամաց տեսարանէն կհեռանան:

3.

Զի օր մ'ալ նոյնպէս
Մարտին իհանդէս'
Զարնե'մք մահազգեաց
Զոսոխս հայրենեաց .

Եւ յաղթանակաւ
Լըցեալ աւարաւ ,
Դառնամք քաջարշաւ .

Եւ իմեր դափնիք
Ծա'փ տան սիրելիք ,
Պանծա'ն հայրենիք :



ԱՐԱՐՈՒԱԾ Ե, ՏԵՍԻԼ Ա



Տեսարանն է սիւնագարդ սեկեակ. պատերէն զրահ, վահան ու զկնիք կախուած. արեւմտեան կողմն ալ պատուհան մի ունի: Հեզգիտեալ պիտի մտնուայ: Սեկեկին մեկ ծայրը կերելի Փառանձեւայ յարդարից դիակը ⁽¹⁾ սեան մի կոթնցուցած, որով եւ ներս մտնողը չկրնար մեկին տեսնել.

ՏԵՍԻԼ Ա.

ԱՐՇԱԿ. ⁽²⁾



Երկար, ո՛հ, երկար ինձ օրս այս երեւի...
 Քիչ մի յառաջ երբոր բանտէն դուրս ելի՝
 Ամէն մէկ ժամ՝ ցանկայի օր մի վնէր,
 Օրն հաւասար միոյ տարւոյ երկայնէր.
 Ա՛յն ատեն՝ կուզէի ե՛տ երթայ գիշեր,
 Ա՛յժմ՝ ըզգիշե՛րն ես ըսպասեմ անձկանօք.
 Ամէն մէկ ժամ ինձ թանկագի՛ն յայսմ հետէ,

(1) Թատրոնին վերայ Փառանձեւայ դիակը պետք է միայն պատկերով ներկայացընել, որ հանդիսականաց չափազանց սոսկում չբերէ:

(2) Ներս մտնելով մտայոյզ, որով եւ Փառանձեւայ դիակը ջտեսներ:

Ամէն մէկ ժամ կարող եմ իմ կինս ազատել,
 Ամէն մէկ ժամ կորսընցընե՛լ զայն կըրնամ...
 Ի՛նչպէս յանկա՛րծ վերադարձան իսիրտ իմ
 Սէր եւ կարօտ քո ցանկալիդ Փառանձեմ...
 Դեռ ո՞ղջ ես դու... դեռ եւս սիրե՛ս դու զԱրշակ...
 Ա՛հ, քեզ կարծեմ տեսնել ու ձա՛յնըդ լըսել
 Որ կըկանչե՛ս զԱրշակ... Դադրե՛ արցունքէդ...
 Կուգա՛մ, կուգամ՝ թո՛ւրըս ձեռք, սի՛րտս իբերան...
 Թէ բաղդն ըզքեզ եւ հըպատակք թողուցին,
 Ես չե՛մ թողուր՝ բի՛ւր այլ մեռնիմ Փառանձեմ:—⁽¹⁾
 Ահա մըտեալ արեւ, ինչո՞ւ Դրաստամատ
 Դեռ չերեւիր... արդեօք խորհուրդն յայտնեցա՞ւ...
 Ո՛հ այս օրուա՛ն տազնապն երբէք կըրած չեմ.
 Սէր, վրէժ, երկիւղ եւ յոյս իսիրտ դէմ ընդդէմ
 Մըրցին վանե՛ն զիրեար... երկինք, օգնեցէք:—⁽²⁾
 Զինչ է այս... ա՛հ... Փառանձեմ... ո՛չ... ո՛չ, աչք իմ...⁽³⁾
 Մառախուղ... ցընորք բանտիս... ահեղ երազ...

ՏԵՍԻԼ Բ.

ԱՐՇԱԿ, Ա.Լ.Ա.Ն ՈԶԱՆ.

Ա.Լ.Ա.Ն ՈԶԱՆ.

Ի՞նչ երազ, ի՞նչ ցընորք, բաց աչքըդ, Արշակ.
 Տես, չե՛ս ճանչնար... ահա քո սէր Փառանձեմ...
 Եւ զինչ. դու յետ յետ ընկըրկիս սոսկացա՞ծ...

(1) Պատուհանէն նայելով:

(2) Փառանձեմայ դիակը յանկարծ տեսնելով:

(3) Ետ ետ քաշուելով սոսկմամբ՝ իբրու քե ոգի մը տեսներ:

Ինչո՞ւ թեւեր բացած առջեւ չըվազե՞ս . . .
 Ա՞յս է քո սէր, ա՞յս ըզբացածդ այն կարօտ . . .
 Տես, նա բացեր համբուրաշարժ քեզ շըրթունս
 Հրաւէր քեզի կուտայ . . . գերեզմանէ՛ն:

Ա Ր Շ Ա Կ .

Գերեզմանէ՛ն . . . ա՛հ Փառանձեմ . . . գերեզման . . .
 Զինչ տեսանեմ . . . զինչ լրսեմ ես . . . ո՞վ երկին . . .
 Ի՞նչ օր է այս . . .

Ա Լ Ա Ն Ո Ջ Ա Ն .

Օր քո փառա՛ցդ արքունի.

Շապուհ որ քեզ այսօր դարձուց թագդ ու գահ,
 Այսօր առ քեզ՝ Հայոց մեծաց թագաւոր,
 Կըդարձունէ եւ զթագուհիդ Փառանձեմ:
 Թագդ ու գահոյք՝ մէկ օրուան մի մէ՛կ օրուան,
 Բայց թագուհիդ՝ բոլո՛ր կենացդ է ընծայ.
 Առ եւ քեզնէ չըբաժնըւի յաւիտեան:
 Տես ի՞նչ փափուկ մորթ . . . ի՞նչ երես նազելի . . .
 Եւ սիրտ նորա, — թէպէտ յարդէ, — այլ ցընծա՛
 Զի քո սիրով դեռ մեծատրո՞փ բաբախէ:

Ա Ր Շ Ա Կ .

Բա՛ւ է այլ բաւ, անգութ, տըւիր զաւետիս.
 Ի՞նչ ես կեցեր, զն աչս ըզքեզ չըտեսնէ . . .
 Ի՞նչ, չարութեանդ ուզես վայելել յաղթանակ.
 Կուզե՞ս լրսել Արշակայ ողբս յուսահատ,
 Որ վայրենի սիրտ քո խընդայ, ո՞վ գազան . . .
 Ընդունայն յոյս . . . եւ ոչ կաթիլ մի արցունք

ԱՐՇԱԿ Բ.

Պիտի տեսնես դու Արշակայ աչքերէն . . .
 Անպատկառ՝ ծաղրը կընես թագուհի մի
 Զոր կոխեր էք՝ ինչպէս ըզվարդ՝ խող վայրի:
 Թէ բաղդն ըզնա անպատրասար ձեզ թողուց,
 Ես վերջին պատրասարեմ թըշնամանքէն
 Քո պիղծ աչքէդ ծածկելով այս ծիրանեաւ: (1)

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն.

Ա՞յսպէս ուրեմն Հայոց մեծաց թագուհւոյն
 Մահուան վրըէժն ա՞յսպէս առնու մեծն Արշակ . . .
 Ա՞յս այն վրըէժ զոր քիչ մ'առաջ ըսպառնայր:

ԱՐՇԱԿ.

Եւ արժանի ինչ իցես դու, վատ արանց,
 Արժանի ես դու վրըիժուցն Արշակայ . . .
 Է՛հ, թէ դու ոչ Ալանոզան լինէիր,
 Քեզ ցարդ պատան ապատառ թողեալ էր այս սուր, (2)
 Ու սպանդ զըրկեր Փառանձեմայ ըստուերին:
 Բայց ո՛չ, դու չես այն մեծ պատուոյն արժանի.
 Եւ սուսերիս իմ խընայեմ, ո՛րդ զազիր,
 Քո պիղծ արեամբ ըզնա չուզեմ աղտեղել: (3)
 Շատ է արդ շատ, իբաց կորիր առջեւէս:

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն.

Կերթամ թողուլ քեզ յուսահատ ցաւոց ձեռք . . .
 Յո՛ւշ քեզ, վերջին աղատութեանդ են այս ժամք . . .
 Ահա կերթամ որ ահեղ եւս այլ դառնամ:

(1) Ծիրանին Փառանձեմայ վրան կձգէ:

(2) Սուրը կքաշէ:

(3) Սուրը տեղը կղնէ:

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՇԱԿ.

Խեղճ Արշակ . . . եւ մինչեւ ցերբ, ա՛հ մինչեւ ցերբ
 Ահեղ ցասմանց ունիս լինել նըշաւակ.
 Ցերբ իգըլուխդ տեղան վրիժուց կայծակներ . . .
 Անագորոյն երկինք, այս հինգ տարի է
 Որ կըլըլկէք զԱրշակ զերդ նաւ ժայռէ ժայռ . . .
 Ժամ մի չանցաւ որ նոր մի վրէժ չըհնարէք,
 Բայց այս վերջին՝ ո՛հ քան զամէնն է դըժխեմ:
 Ո՛չ . . . ոչ . . . աչքերս՝ ալ իբր ըզժայռ ցամաքեր,
 Սակայն սըրտէս, սըրտէս արիւն կըվազէ . . .
 Տես, կըշտացիր, անգո՛ւթ երկին, կըշտացիր՝
 Թէ արեամբ Փառանձեմայ չըկըշտացար . . .
 Չէ. իզո՛ւր, իզո՛ւր մարդիկ ձեզմէ դողան.
 Զո՛ւր կարծեն՝ թէ քո արդար են դատաստանք.
 Ահա զանմեղ քան մեղապարտ դու սլատժես . . .
 Թէ յանցաւոր կար՝ յանցաւորն էր Արշակ,
 Փառանձեմէն ինչո՛ւ զնորա վրէժ առիք:
 Վարդն աւելի տըկար գոլով՝ կըխըլէք.
 Իսկ փուշն ինչո՛ւ խըզել կորզել կըվախէք . . .

ՏԵՍԻԼ Գ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ, ՆԱԽԱՐԱՐԻՆ, ԱՐՇԱԿ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Տէ՛ր արքայ, ահա իշխանք քո քաջազունք,
 Փառաց օրուան իմ հինաւուրց ընկերներ՝

Նոր ընկերներ փառաւորագոյն աւուրց ,
 Զոր ասկէ վերջ պիտի յԱնյուշ անցընեմք ,
 Ահա կուգան տալ քեզ վերջին մի ողջոյն ,
 Եւ աւանդել զիւրեանց կարօտ եւ ըզսէր :

ԱՐՇԱԿ (ծանրութեամբ .)

Ըզսէր իւրեանց՝ ես իվաղուց ընդուներ ,
 Ու սրբտիս մէջ նոցա անուանքն եմ դրօշմեր .
 Ո՛չ բաղդ՝ ոչ ամք կարող են զայն եղծանել :
 — Իսկ վերջին ողջունի դեռ ժամ չըհասաւ :

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Ի՞նչպէս արքայ , ահա գիշերն է հասեալ ,
 Միհրան՝ շատոնց քեզ կըսպասէ բերդին դուռ .
 Սուրէն՝ ուրիշ կապելոց հետ ըզբաղած ,
 Ալանոզան՝ մէջ չերեւիր ըստ բաղդի
 Զինչ քան զայս ժամ յարմար , փուլթա՛ս , աղաչեմք :

ԱՐՇԱԿ .

Իսկ փուլթալոյ այսքան պատճառ , Դրաստամա՛տ .

ԴՐԱՍՏԱՄԱՏ .

Եւ մոռացա՛ր , տէր , որ Հայոց թագուհին
 ժամ իժամէ քեզ ըսպասէ յԱրտագերս :

ԱՐՇԱԿ .

Թագուհին Հայոց ձեզի հոս կըսպասէ .
 Նախարարք Հայոց , ահա՛ ձեր թագուհին (Ն)
 Մի ինձ մի , նըմա՛ տըլէք ըզձեր ողջոյն :

(¹) Ծիրանին Փառանձեմայ վրայէն կվերցունէ կնետէ :

ԱՐԱՐՈՒԱԾ Ե, ՏԵՍԻԼ Ե.

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Զինչ այս . . .

ԶԱՐԵՀ.

Երկինք . . .

ԽՈՍՐՈՎ.

ԱԼԱՊ . . .

ԳԱՐԵԳԻՆ.

Աստուած . . .

ՏԱՃԱՏ.

Ո՛վ տեսիլ . . . (1)

ԱՐՇԱԿ.

Դուք կուլանք . . . մի աղաչեմ, մի բարեկամք,
 Մի զըստուեր Փառանձեմայ տըրոմեցընէք . . .
 Նա արդ իկայս երանութեան զուարճանայ . . .
 Լալոյ մէք եմք արժանի, մէք բարեկամք,
 Որ այսպիսի դանն օրերու պահուեցանք . . .
 Ահ թէ գիտէր երկին՝ թէ ինչ կըքաշէ
 Խեղճ մահացուին սիրտ՝ իւր այսպէս խաղերով,
 Ո՛չ այսպէս ոչ անգըթանայր, բարեկամք:

ՏԵՍԻԼ Ե.

ԱՌԱՋԻՆՔՆ ԵՒ ՍՈՒՐԷՆ.

ՍՈՒՐԷՆ.

Միհրան հոս չէ . . . ո՛հ, վեր ու վար փընտուեցի,
 Բայց ոչ որսոյն ժամ՝ ոչ յետոյ զնա տեսի . . .

(1) Ետ ետ քաշուելով երկինք կնային, աչուրնին կձածկեն: Լոու-
 բիան. — ապա Արշակ հեծելով:

ԱՐՇԱԿ Բ.

Սիրտ իմ տրուիէ, տեսէք ըզնա բարեկամք . . .
Զինչ հեծէք . . . աղէտք իցեն . . . ահ, տաղնապք հօր . . .
Ո՛ւր է, ահ, ասացէք ինձ, ո՛ւր է Միհրան . . .

ՏԵՍԻԼ ՎԵՐՁԻՆ.

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն., ՄԻՀՐԱՆ շիրաշակապ, ԶՕՐԱԿԱՆՔ գիւնեալ, չա՛ն
իմեռիկե եւ Ա.Ռ.Ա.Զ.Ի.Ն.Ք.Ն.

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն.

Ա.հա Միհրան:

ՍՈՒՐԷՆ.

Երկինք . . . Միհրան իշըղթայ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ.

Ո՛վ ահեղ օր, յայտնեցաւ բանն . . .

ԱՐՇԱԿ.

Խեղճ Միհրան . . .

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն.

Ա.յս է վախճան որոց մատնեն զիւրեանց տէր:

ՍՈՒՐԷՆ.

Միհրան մատնիչ . . . երկինք, զինչ էր զոր լըւայ . . .

ՄԻՀՐԱՆ.

Մի՛ հաւատար, հա՛յր. ոչ, Միհրան մատնիչ չէ.

Անմեղութեանս երկինք ինքնին են վըկայ,

Որ շատ անգամ թողու զբարին զոհ չարին:

Ա.Լ.Ա.Ն.Ո.Զ.Ա.Ն.

Դեռ յանդրդնիս, այ դու ժըպիրհ պատանի

վըկայ կոչել զարդարադատ քեզ երկին՝

Որ իմ ձեռք՝ այսօր մատնեց քեզ հըրաշքով:

Ս Ո Ւ Ր Է Ն .

Ի՞նչ է յանցանքն . . . ո՞ւր մատնութեանն ապացոյց :

Ա. Լ. Ա. Ն Ո Ջ Ա. Ն.

Հանց զայն քաջին Դրաստամատայ՝ որ զորդիդ
Պարտիզին մէջ խորշ մի ձրգեալ հրապուրեց
Մատնել Շապուհ՝ ազատելով զիւր գերին.
Բայց երկինք՝ կասկած խտրտ իմ ձրգելով
Զիս շարժեցին դարան մըտնեմ, ու ծածուկ
Լըսեմ նոցա դաւն ու զառաջ այնր առնում:

Ա Ր Շ Ա. Կ .

Կըլլսես, երկին, ահա պիղծն այն բերան
Իւր վատութեան՝ քեզ յորդորող քարողէ . . .
Անգո՛ւթ երկին, յիս թէ ինչո՞ւ խըստանաս՝
Կըհասկանամ . . . բայց անմեղուկ պատանիդ
Ի՞նչ յանցեալ՝ որ եւ ըզնա անգըթութեամբ
Այդ խուժադուժ գազանին ձեռքը մատնես:

Մ Ի Հ Ր Ա. Ն .

Մի՛, տէր արքայ, զերկին անգութ մի կոչեր.
Ոչ եթէ անգըթութիւն զայս համարիմ,
Այլ մե՞ծ շընորհ որ քո վըշտաց եւ ցաւոց
Այսուհետեւ լինիմ եւ ես իսկ ընկեր,
Ու դարձեալ մեղմեմ ցաւերըդ իմ սիրով.
Դարձեալ լըւամ քո շըշթաներ արցունքով . . .
Շըղթայք (1) որ զիս վիճակակից քեզ առնեն՝
Շատ աւելի փառաւորեն, տէր, զիմ կեանս՝
Քան թէ նըսեմ ազատութիւնս առաջին:

(1) Իւր շղթաները ցուցանելով:

ԱՐՇԱԿ Բ.

ԱՐՇԱԿ.

Վրսեմ մանուկ, վերջին համբոյր զիմ ընկալ. (կպագնե)

ՏԱՃԱՏ ԵՒ ԽՈՍՐՈՎ.

Կեցցես, Միհրան:

ԳԱՐԵԳԻՆ.

Ո՛վ արժանիդ Հայ անուան:

ԶԱՐԵՀ.

Միհրան, դու մեր գունդ խառնելով՝ ցուցուցեր
Թէ քո սիրտ Հայու անուա՛ն է արժանի:

ԱԼԱՆՈԶԱՆ.

Բարբանջելոյ աստանօր չէ ժամանակ.

Բանտին մէջ՝ երկա՛ր ունիք ձեզ տարիներ . . .

Հոն՝ թէ կըրնաք՝ տըւէ՛ք զայդ ցո՛ւրտ ըսփոփանս.

Լաւ հասկընայ հոն եւ անմիտ պատանիդ

Զըմբոստութիւն իւր եւ մեղաց ծանրութիւն:

ՍՈՒՐԷՆ (շարով.)

Յայտ ուրեմն՝ ո՛վ դիք, յայտ վայր զիս պահեցիք

Որ իմ խաղաղ, ո՛հ, եւ անպարտ ծերութիւն

Անվերջ լալեօք ողբո՛վք մըտնէ գերեզման:

ԱԼԱՆՈԶԱՆ.

Ահա, Արշակ, յարքունի քո պալատ — բանտ —

Քեզի նո՛ր պալատական մի պարգեւեմ. ⁽¹⁾

Եւ առագաստդ՝ այսուհետեւ չէ թափուր . . .

Հինգ տարուան՝ առ ըզքո կարօտ յամուսնոյդ . . .

(1) Ցուցանելով զՄիհրան: Ալանոգանայ խօսքերը դառն հեգնութիւններ են, մահացու քշնամոյ մը սրտէն բափեալք:

Պանծա՛ն, Արշակ, բանակն Արեաց բուլանդակ
 Սըխրացա՛ւ՝ յիւր հոլանի գեղեցկութիւն,
 Երբ Շապուհ արքայաբար փառաւորեալ՝
 Բարձրացո՛յց ըզնա իգահ . . . անարգ փայտի . . . ⁽¹⁾
 Շնորհելով ըզտիկնութիւն . . . Անյուշ բերդի :

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Հո՛ւռ լեր, անգո՛ւթ. սանձ դիր լեզուիդ վայրահաչ . . .
 Թէ Շապուհ իշխանութիւն ձեռքըդ տըլաւ,
 Արդարութեամբ գոնէ գիտցիր գործածել :
 Ի՞նչ բըռնանաս իսկատանին յայն անմեղ.
 Ո՞չ վատութեամբ — ինչպէս պարծել չամահես —
 Դարան մըտեալ ծածուկ լըլար, եւ գիտես
 Որ յորդորող՝ Էս ինքն եմ, Էս Դրաստամատ .
 Եթէ դաւ կայ՝ Էս ապա, Էս դաւաճան.
 Ի՛նձ անկ են, ի՛նձ շըղթայք եւ ոչ Միհրանայ,
 Ի՛նձ այդ պատիւ՝ տեառն իմ լինել յարկակից :
 Բայց զի Արեաց արքային այս մատանի
 Փըշրէ զալիս քո նախանձուդ կատաղի,
 Դիտցիր վատ՝ որ Դրաստամատ ոչ հանդուրժէ,
 Զի անարի համարձակի ոք Պարսիկ՝
 Լուտալ հանդէպ Հայոց մեծացն արքայի .
 Իսկ թէ ըզչափ ոչ ճանահես դու անձին,
 Սուր եւ բազուկ Դրաստամատայ՝ ուսուցեն :

Ա Լ Ա Ն Ո Ջ Ա Ն .

Է՛հ, անցա՛ն եւ խրոխտալոյ քո ժամանակք .
 Իմի քո սո՛ւր պանծաս, սուսէրց ունիմ գունդ .

(1) ,, Շապուհի գտիկինն Փառանձեմ ընդ սայլացից հանեալ սատակեաց .“ Խոր. Գ, 35 :

ԱՐՇԱԿ Բ.

Յուսաս բազկիդ. ես՝ իքաջացս իմ բազուկ: (1)
 Այլ զարքունին գիտեմ պատուել մատանի.
 Կուգայ եւ քո դատաստանիդ ժամանակ.
 Զհամար գործոյդ՝ ոչ ինձ, տացես առ Շապուհ,
 Գիտէ նա տալ եւ մատնութեանդ արժան վարձ:
 Յորչափ Պարսիկ եմ, ոչ, ես ոչ հանդուրժեմ
 Որ Հայ մի մարդ յայն բարձրութիւն ելանէ՝
 Մինչեւ խրոխտալ իբր ազատիչ Արեաց տեառն:
 Ահա հասաւ յաղթանակիս իմ նոր օր . . .
 Ոչ այնչափ ուրախացայ գերեալ զԱրշակ՝
 Որչափ ըզքեզ տեսեալ այսօր գահավէժ . . .
 Այո, Շապուհ որ քեզ դիւցազն ոք կարծեց՝
 Արդ ճանչնայ որ տիրադրո՞ւժ ես դու մատնիչ:

Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Տիրադրո՞ւժ . . . եւ ո՞վ է տէրս որ կըմատնեմ.
 Տէրն իմ հոս է, ահա Արշակ թագաւոր.
 Ամենայն որ չէ՛ Արշակ՝ այլ պարսիկ,
 Նա ոչ իմ տէր՝ այլ է նա իմ բըռնաւոր:

Ա Լ Ա Ն Ո Ձ Ա Ն .

Քաջ է. դու զայդ բըռնաւորիդ հասկացո՛ւ:
 — Զօրակա՛նք, յառաջ անցէք. արդ ժամ է ձեր.
 Հա՛պա զարկէք զայդ գերիներն իշըղթայս: (2)

Զ Ա Ր Ե Հ .

Քաջացարո՛ւք, ընկերք, երկին զայդ կամի.
 Քամե՛մք ըզդա՛ռն բաժակիս եւ մըրուր:

(1) Զինուորները ցուցանելով:

(2) Զինուորները կսկսին շղթայի գարնել նախարարները:

Տ Ա Ճ Ա Տ .

Կեցցէ՛ Արքայ . . . երկնից թող կամք կատարին :

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ե Ի Խ Ո Ս Ր Ո Վ .

Կեցցէ՛ արքայն Հայոց, մեռցին Սասանեանք :

Պ Ա Ր Ե Ա Խ Ա Ր Ա Ր Ա Յ (¹) .

1.

Իզո՛ւր են իզո՛ւր, բըռնաւո՛ր,
Ըսպառնալիք քո ամենայն.
Ոչ, քո շըղթայք չե՛ն զօրաւոր
Յընկճել զոգիս մեր Հայկական :

2.

Ըզմարմին՝ միայն զայս մարմին
Կարես գերել՝ քե՛զ ինախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝
Սիրտք Հայկազանց են միշտ ազա՛տ :

3.

Ազա՛տ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել ըզշանթս Արդարութեան
Իգլուխ ձեր, ո՛վ արիւնարբուք՝
Որ աւերէք ըզՀայաստան :

4.

Իդըթո՛խս անկցի՛ն թըշնամիք,
Անհետասցի՛ն մինչ յաւիտեան .
Կեցցե՛ն Արքայ եւ Հայրենիք,
Կեցցէ՛ անմա՛հ մերս Հայաստան :

(¹) Շղթայի զարնուելէն յետոյ՝ երգեն զոչելով :

ԱՐՇԱԿ Բ.

ԱՐՇԱԿ .

Կեցջի՛ք, քաջեր . ցայսօր ձեզմով հայրենիք,
 Ձեզմով եւ ձերրդ թագաւոր պանծացաւ .
 Թող մինչ իսպա՛ռ լիցին պարծանքն անտրխեղծ
 Յուցէ՛ք՝ ոչ բաղդ երբէք, եւ ոչ թըշնամիք
 Կարեն նրկուն առնել զողին Հայկական,
 եւ ո՛չ ըզսէր շիջուցանել հայրենեաց :
 Հա՛յ դիւցազունք, իսուրբ անուն հայրենեաց
 Արշակ ձեզմէ զայդ աղաչէ եւ յուսայ,
 եւ խոստանայ իվե՛հ անուն հայրենեաց
 Որ ձեր անուանք անմահանա՛ն նորա հետ :

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ք Ե Ի Դ Ր Ա Ս Տ Ա Մ Ա Տ .

Կեցցէ՛ արքայ :

ԱՐՇԱԿ .

Կեցցես եւ դու, Դրաստամատ .

Արշակ շընորհ ունի սըրտիդ տիրասէր .
 Արշակ՝ որ քո՛ շընորհիւ, ո՛վ բարեկամ՝
 Արքայաբար յազատութի՛ւն ելանէ :

Ա Լ Ա Ն Ո Ձ Ա Ն .

Յազատութիւն . . . Օն զօրականք եւ զԱրշակ : (¹)

ԱՐՇԱԿ .

Իբա՛ց, իբա՛ց կացէք, իբա՛ց, վա՛տք արանց .
 Յո՛ մօտենայք, Արշակ է սա . . . վա՛տք, իբա՛ց . (²)
 Թէ յանդըգնիք՝ սուրս այս ըզձեզ խըրատէ . . .

(¹) Ձինուորները Արշակայ քով կուգան որ շղթայի գարնեն :

(²) Սուրը կքաշէ, զինուորները ետ ետ կքաշուին :

Ալանողան, իզուր յուսաս գու զԱրշակ
Երկրորդ անգամ մատնել իբանտ իշրղթայս.

Արշակ ազատ, եւ թագաւոր է Արշակ,
եւ թագաւոր ազատ Արշակ կրմեռնի: (1)

— Փառանձեմ, ահա կուգամ, կուգամ առ քեզ.
Փառանձեմ, քեզմէ Արշակ ո՛չ բաժանի:

Դ Ր Ա Մ Տ Ա Մ Ա Տ.

Տէր իմ Արշակ . . . (2)

Զ Ա Ր Ե Հ.

Երկինք . . .

Տ Ա Ճ Ա Տ.

Աւա՛ղ . . .

Խ Ո Ս Ր Ո Վ, Ե Ի Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

Տէր արքայ . . .

Ա Ր Շ Ա Կ.

Լո՛ւռ լերուք . . . մի ողբք եւ լացք . . . այլ խընդացէք . . .
Արքայդ Արշակ . . . արժանաւոր . . . մեռաւ մա՛հ . . . :

Ա Լ Ա Ն Ո Ձ Ա Ն.

Այսպէս ո՛րսն ազատի . . . ո՛վ կատաղութեանս: (3)

Ա Ր Շ Ա Կ.

Գնա վատ արանց, գնա աւետիս տալ Շապհոյ,
Որ Արշակ՝ մեռաւ . . . Արշակ առիւծն Հայոց . . .
Թող երթայ՝ արդ ժառանգէ թափուր իմ գահ.

(1) Կգարնէ ինքզինքը սրով:

(2) Գրաստամատ եւ նախարարք Արշակայ վրայ կվագեն եւ ողբալով կրունեն:

(3) Կատաղի բարկութեամբ:

Երթայ նրստի աւերակացն իվերայ: —

Եւ դու, ո՛վ քաջդ իմ Դրաստամատ, գնա՛ Հայոց

Ասա՛ . . . «Արշակ մեռաւ ըղձեղ օրհնելով . . . »

Դրաստամատ, ա՛ռ եւ այս սուր . . . սուր իմ որդւոյս ⁽¹⁾

Ասա՛, « թէ՛ Պապ ինձ արժանի է որդի՛

Թող այս արեան . . . հօր իւր արեան . . . առնո՛ւ լրէժ . . . »

Ո՛վ Տէր . . . գըթա՛ն . . . յԱրշակ . . . որդւոյս . . . հայրենեաց . . .

Հայեր . . . արցո՛ւնք մի թափեցէք . . . յարքա՛յն ձեր:

(1) Սուրը կուրծքէն կքաշէ կիանէ, կուտայ Դրաստամատայ ձեռքը:

ՎԵՐՋ ԱՐՇԱԿԱՅ ԵՐԿՐՈՐԻՒ.

